

Panath

1979-10

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն



Ա. ԱՐՓԻՆԷ	Անճուռն գիշերէ մը ետք
Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ	Էամանիկը
»	»
»	»
»	»
»	»
Կ. ԱՐՄԵՆԵԱՆ	Մ'ենք
Հ. ՌՇՏՈՒՆԻ	Սիամանթոյի սէրերը
Մ. ՊԷՐՊԷՐԵԱՆ	Կոնտուլին մէջ
Շ. ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ	Անթոնէն Արթօ եւ ստեղծագործութեան ընթացքը
Ա. ԱՐԹՕ	«Նամակ»՝ ուղղուած Փ. Ուաթսընի
»	»
»	»
Ա. ՃԻԻՂԵԱՆ	...Ո՞ւր ես դուռն
* * *	Փաստաբուրդերէն առաջ
* * *	«Ռանչպարներ»ու ծննդոցը
* * *	Արժեչափային անհեթեթութիւն
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Գէմ առ դէմ Մ. Իշխանի հետ
Լ. ՄԿՐՏՁԵԱՆ	«Գիւղ» եւ «Բաղաբ» հասկացողութիւնների նշանակութիւնը մշակութային ոլորտում
* * *	Մշակութային լուրեր

Բազմ

ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԳԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ԺԸ. ՅԱՐԻ. ԲԻԻ 10

Հ Ո Կ Տ Ե Մ Ա Ս Բ

1979

Գ Է Տ Բ Ա Ի Ք

Ա. Ա Ր Փ Ի Ն Է

ԱՆՔՈՒՆ ԳԻՃԵՐԷ ՄԸ ԵՏՔ

Ձեմ գիտեր փողոցի ո՞ր անկիւնէն կապտորակ լոյս մը կ'երկարէր ձեզունին վրայ: Քիչ ետք, բոցի լեզուներ ինկան անոր մէջ, սրբեցին զայն ու կարմիրը եղաւ տիրապետող գոյնը, որուն դարձեալ պիտի յաջորդէր երկնային կապոյտը, բոցերը կրկին պիտի պարէին անոր մէջ, ընկլուղէին զայն ու արիւնի կարմիրը պիտի իշխէր նորէն:

Տունէն հեռու, անծանօթ միջավայրի մը անծանօթ սենեակին մէջ՝ առաջին գիշերը գրեթէ չեմ յաջողիր քուն մտնել: Կը մտածեմ, թէ այս պարագային, թերեւս նոյնը պատահի նաեւ յաջորդ օրը:

— Կը ցաւիմ, — ըսեր էր Պրեա, յաջողութենէն յղփացած պանդոկատէրի դոհոնակ ու պայծառ ժպիտով, — ո՛չ թէ մէկ, այլ՝ երկու համադումար. ինչպէս նաեւ մանուկներու գեղեցկութեան մրցում ու երիտասարդական միութեան մը պարահանդէսը: Բոլորը այս շաբաթավերջին գուգաղիպեցան: Ձեզաւ, չկրցայ մերժել, բայց մէկ գիշերուան համար է միայն և վրատահ եմ, ամէն կերպով շատ դոհ պիտի մնաք: Վաղը, հոս, ձեր սենեակը պատրաստ կ'ըլլայ արդէն:

Ձեզունի յարափոփոխ լոյսերը անվերջ կը պարեն: Հաւանաբար, ծովեզերեայ գինետան մը յանկուցիչ հրաւերը:

Տակաւին չեմ գիտեր, թէ մարդիկ ինչու համար այդքան կը սիրեն խումել, ինչ բանէ մղուած տեւական յաճախորդը կը դառնան կապելաներու: Ոմանց համար ներքին պահանջ մը կ'ենթադրեմ. ուրիշներ՝ թերեւս իրենց վիշտն ու ցաւը խեղդելու, միաքը թմրեցնելու, բթացնելու, իրականութենէն հեռանալու, իրենց միտակութիւնը մոռնալու: Ամէն ալքորսմով հաւանա-

բար իր ուրոյն պատճառը ունի եւ կամ ալ՝ չունի: Հարցեր, հարցեր, որոնց անտեղեակ կը մնամ: Չափաւորութեան մէջ՝ կ'ըսեն տրամադրութիւն բարձրացնող, միաքը պայծառացնող, քաջութիւն, համարձակութիւն պարզեւօր, թերեւս երեւակայութիւնն ալ խթանող...: Այնքա՛ն գովելու օրով խմբիչքի ազդեցութեանց ալլաղան կողմերուն անծանօթ եմ տակաւին: Կը խմեն արւեստագէտներ, գրողներ, հոգեպէս տառապողներ, ու ի՞նչ կ'ըլլայ արդեօք իրենց ստացածը...: Առեղծուածը կը մնայ առեղծուած ինծի համար:

Կը յիշեմ, որ անգամ մը, հաւաքոյթի մը, երբ արդեւք եղայ պարոնի մը կիսատ դաւաթս լեցնելու փորձին՝ դարձայաւ: «Ատկէ աւելին չատ է, — ըսի, — թոյլ կը զգամ միայն, ի՛նչ հարկ»: Ու դառնալով մօտս նստող ստրեց յոյն բժիշկին՝

— Մարդիկ ինչո՞ւ այդքան կը սիրեն խմել, — հարցուցի, — երեւի մոռնալու համար:

— Ա՛ա ոչ, — պատասխանեց ժպտելով եւ ցուցումատը շարժելով, — ո՛չ թէ մոռնալու, այլ յիշելու համար:

— Յիշելու ի՞նչ բան, հաճելի պահեր, հին ու լա՞ւ օրեր...

Գլուխը կարծեմ հաստատական շարժեց ու զիս այնքա՛ն հետաքրքրող խօսակցութիւնը ընդմիջուեցաւ. յապաղած հիւրի մը ժամանումով:

Կը վառեմ անկողնիս քով երկարող սեղանին դրուած լամպը, որուն լուսամփոփը տակաւին կը պահէ իր դունաթափ ծալիկներուն գեղը: Անոր մօտ՝ միակ գիրքը, զոր կը գտնենք բոլոր պանդոկներուն մէջ: Կ'ուզեմ վերջնել, կարդալ էջ մը կամ երկու, բայց յոյնած են աչքերս ու լոյսը ակար:

Տան մնացեալ մասերուն գեղեցիկ կահաւորումէն ոչինչ ունի այս սենեակը: Հայկազարդ դարակ մը, հանդերձակալ մը, զիս հետաքրքրող ու տարիներու հնութիւն ունեցող խոշոր դարադարան մը, որ կը պարծանէ սակայն ու սեղանին վրայ՝ մոխրաման մը, դաւաթ մը, սրբազան մատեանն ու արժագոյն լոյսը տարածող լամպը:

Որո՞ւն կը պատկանէր արդեօք անպահճոյճ, բայց մաքրութեամբ ծփացող սա սենեակը, զոր այժմ ամառները վարձու կու տային: Ինչպէ՛ս պիտի ուզէի, որ շուրջիս իրերը լեցու առնէին ու պատմէին ինծի իր մասին...: Կը խորհիմ, թէ ամէն մէկ անձ վէպ մըն է՝ իր ուրոյն խառնուածքով, իր ներաշխարհով, ձգտումներով, կեանքի իր ելեւէջներով եւ կամ ճակատադրական խաղերով: Ոմանք գրուելու անարժան, տափակ ու անհամ, ուրիշներ, բացառիկներ՝ կենդանի տողերով, հարուստ էջերով, խորունկ ճշմարտութիւններով, առաջին բազէն իսկ քեզ կ'ըմբռնէ, խանդավառող, էութիւնդ իրենց կապող:

Գրադարանին առջեւ՝ մանիշակներու փունջ մը գրկած գեղեցիկ ծաղկաման մըն է դրուած: Այնքա՛ն իրական կը թուին ծաղիկները, որ մօտէն քննելէ ետք միայն կարելի է ստուգել անոնց արուեստական ըլլալը: Ամէնէն աւելի զիս կը գրաւէ, սակայն, անկողնիս դիմաց, պատէն կախուած սա ձեռագործ նկարը: Տասնըիններորդ դարու տարագով նուրբ կին մը, իր բաց հովանոցիկով, սիրուն գլխարկով, շրջագլխատի ծայքերուն գունաւորումներով ու համադրուած գոյներու ընդհանուր ներդաշնակութեամբ ուղղակի ակնապարար գործ մը: Ինչ որ կը նեղէ զիս, սակայն, երկար քանոցքին տակէն ոտքերուն բացակայութիւնն է: Եթէ չըջանակուած ու զայն պաշտպանող ապակին չըլլար՝ պիտի ուզէի գրչոյս իսկ կօշիկի պզտիկ քիթ մը աւելցնել ու փրկել զայն օդին մէջ կեցած ըլլալու պատրանքը տուող դիրքէն:

Ակնարկս կրկին կը հանգչի ծաղկամանին վրայ: Անքուն թափառող միաք մը, թիթեռնիկի նման անվերջ կը թռչկոտի: Յուշեր, մտածումներ

զիրար կը հրմշտակեն: Այդ ծաղկամանը, չեմ գիտեր ինչպէս կը յիշեցնէ ինծի աննման Ակսել Բակունցի մէկ պատմուածքը, որուն հերոսը իր սենեակին մէջ պատահամբ ինկած, կանացի ձեռքի մը նմանող, ծաղկաման մը ունի, որ անկրկնելի քաղցր յիշատակներ կ'արթնցնէ իր մէջ:

Սա անծանօթ սենեակ մըն է, ուր ես եւս պատահամբ ինկեր եմ:

— Եթէ կ'ուզէք՝ կանչեմ աղան եւ ձեզ անմիջապէս տանի հոն, թերեւս հանդստանալ ուղէք, — ըսեր էր Ֆրեա:

— Ո՛չ, — պատասխաններ էի, — վար գիր իրերս, երեկոյեան կը հանդիպիմ ու կ'երթանք:

Արեւը կիզիչ էր: Առաջին օրը գէթ պէտք էր զգուշանայի իր սաղնատոզ ճառագայթներէն: Եւրջ սողահոտող նախասիրած վայրս էր ծովափի այն լայնանահիստ շէնքը, ուր տեղի կ'ունենային համազումարներ, դանադան ձեռնարկներ եւ որուն սրտազամները տարիներով բաց էին եղած հանրութեան: Երբ նստէիր ճակատի պատշգամին՝ նաւու մը կամրջակին վրայ ըլլալ կը կարծէիր: Դէմդ ովկիանոսի յարաշարժ տարածութիւնն էր ու հորիզոնը: Ալիքները, սակայն, անյերջ կու գային լուալ սիւները, որոնց վրայ նստած էր շէնքը ու ժամանակի ընթացքին, ջուրի այդ տեւական շիւղմէն, հարուածներէն կ'ենթադրեմ՝ այլեւս վտանգուած: Յաջորդ տարին անոր յատակն ու շուրջը աւաղ էր լեցուած եւ պատշգամներէն մէկը միայն բաց կը մնար շուքի մէջ նստիլ փափաքող հասարակութեան:

Քաշեցի ծանր ու լայն ճօճաթոռը այն անկիւնը, ուր հովտ օրերուն պաշտպանուած կ'ըլլայի հոսանքէ, ու ժպտեցայ յիշելով նախորդ տարուան միջադէպը:

Լուրջ ու վայելչակազմ մարդ մը՝ շարժաթոռի մը վրայ նստած ուժեղ դիմադիմերով, խիստ աչքերով, խնամքով հազուած տարեց կին մը կը բերէր. աթոռը կը դնէր մօտս եւ ինք կը նստէր միւս ծայրը:

— Հոս հովէն պաշտպանուած ես, — կ'ըսէր հիացում առթող դուրդուրանքով եւ ինք կը բանար «Թայմզ»ի էջերը:

Ուշագրաւ արդուղարդով պշրոտ կիներ, հաւանարար նոյն պանդուկէն, յաճախ կանգ կ'առնէին պարոնին առջեւ՝ շաղահրասեղու ակներու մարմաջով: Այդ խօսակցութեանց ընթացքին էր, որ տեղեկուցեր էի, թէ անունը Միլլըր էր, եւ կաթուածահար կիներ՝ մայրը:

Կը զգայի, թէ այս վերջինը թշնամանքով կը նայէր անոնց. կարծես յափշտակիչ թռչուններ ըլլային. իսկ աղան՝ դատելու ընդունակ հօգիի մը լուրջ վերապահութեամբ:

Անգամ մը, մօրը պողաջուր բերելու համար հեռացաւ Միլլըր: Մեծդի մարդ մը, խոշոր սիկարը բերնին՝ իսկայն եկաւ բազմեցաւ աթոռին. կնոջ գէմքը մթազնեցաւ, աչքերը անձկութեամբ լեցուն ուղղուեցան մարդուն: Յայտնի էր, որ կաթուածը իրմէ խլած էր նաեւ խօսելու կարողութիւնը:

— Պարոն, — ըսի խոյն, — այդ աթոռը դրաւ ուսած է...

— Այս աթոռը պարապ էր եւ վստահ եմ, ով որ նստած էր՝ դնած չէր զայն, — պատասխանեց ամբարտաւանօրէն, սիկարին անախորժ ծուխը տարածելով օդին մէջ:

Երբ Միլլըր վերադարձաւ՝ խօսուն ժպիտով մը նայեցաւ աչքերուս:

— Ըսի, թէ աթոռը դրաւ ուսած էր, սակայն օգուտ չըրաւ, — եղաւ արդարացուցիչ պատասխանս:

Մարդուկը, առանց բառ մը արտասանելու՝ հեռացաւ, ու այդ աթոռի առաջին անգամ ըլլալով՝ քանի մը բառ փոխանակուեցաւ մեր միջեւ:

Յաջորդող օրերուն, երբ կու գային՝ դուրս վեր կ'առնէի ձեռքի գիր-

քէս թեթեւ ժպիտով մը ու ինք կը բարեւէր քաղաքավարօրէն:

Կ'ենթադրեմ մ'օտ երկու շաբաթ վերջն էր, որ պատահեցաւ անսպասելին: Անհաճոյ հով մը կար. սոքի ելաւ Միլլըր, կոճկեց մօրը վերարկուն, դարձուց շարժաթոռը, եւ՝

— Պիտի ուզէի՞ք օրուան թերթը տչքէ անցընել, — ըսաւ առանց պատասխանի սպասելու ու զայն դրաւ աթոռիս թելին վրայ:

Երբ վերցուցի թերթը՝ չկրցայ աչքերուս հաւատալ... Առաջին էջին վրայ, մանր ու վարժ ձեռագիրով մը գրուած էր հետեւեալը. «Զիս մեծապէս պիտի երջանեցնէիք, եթէ այս երեկոյ հետս ընթրելու պատիւը ընէիք ինձի: Պիտի սպասեմ այստեղ ժամը հինգին»:

Տէ՛ր Աստուած, այս էր պակասը, ըսի վրդովուած: Ո՞ր պիտի նըստիմ, ի՞նչ պիտի ընեմ ասկէ ետք:

Կը գդայի, թէ լուրջ ու անուշաբան մարդ մըն էր եւ ուրիշ մը, հաւանաբար, սիրով պիտի ընդառնէր հրաւերին եւ քանի մը ժամ հաճելի ու հետաքրքրական գրոյց ունենար, բայց ոչ ես: Չէի ըրած ու պիտի չընէի երբեք: Թէ՛ խառնուած քային, թէ՛ տոհմիկ, անտեղիտալի, անպարտելի գիծ մը:

Յաջորդ օր, սովորականին նման դացի անկիւնս: Խորհեցայ, թէ այլեւս արժանապատուութիւնը վերաւորուած՝ ուրիշ վայր մը պիտի փնտռէր, բայց մեծ եղաւ դարմանքս, երբ կրկին երեցաւ: Չզացի, թէ կը սպասէր, որ աչքերս վեր առնէի գիրքիս վրայէն եւ առի ու դարձեալ բարեկեցինք գիրար՝ լուրջ ու անժպիտ:

Կը կարգայի թամբս Վուլֆի «Վէպի մը պատմութիւնը», կը կարդայի խոր յախշտակութեամբ՝ իր հետ ապրելով հողիին խոսքն ու տառապանքը: Երեսունութ տարեկանին մահացած մարմնով հսկայ մը, մտքով մեծ տաղանդ մը, որուն էութիւնը հրեհուած էր ստեղծագործելու կիրքով: Ներքին հզօր մղումով՝ անվերջ մեքենայներ էր հաղարաւոր էջեր: Անգուստ գետի նման, չափի զգացումը կորսնցուցած՝ յորդեր էին մտածումները, ապրումները, յոյզերը: Գրի էր առեր ու պատկերներու վերածեր իր փորձառութիւնները, այցելած վայրերը, հանդիպած անձերը եւ այդ բոլորը, հետագային վերածուեր էին իր վէպերուն, բարեկամ խմբագիրի մը օժանդակութեամբ:

Չզացի, թէ մայր ու զաւկի ներկայութիւնը խանգարեց զիս: Չէի կրնար այլևս կեդրոնացած ըմբռնել՝ զիս այնքան հետաքրքրող տղերը:

Հիւանդը բաց օդին մէջ խսկոյն փակեց աչքերը ու Միլլըրի դէմքը կորսրեցաւ «Թայմզ»ի էջերուն ետեւ: Հինգ րոպէ ետք, սակայն, միջին տարիքով հիւանդապահուհի մը եկաւ իմաց տալու, թէ կարեւոր հեռաձայնի մը պատճառաւ, պարոնը կ'ուզէին պանդոկէն:

— Օդը զովացաւ, կոճկէ մօրս վերարկուն, — ըսաւ Միլլըր հեռանալէ առաջ: Հիւանդապահուհին զլուիւր աջ ու ձախ շարժելով ինձի դարձաւ.

— Այսքան դուրդուրանք մօր մը հանդէպ՝ հրաշքի համազօր բան մը կը նկատեմ ներկայիս: Պատուական անձ մըն է. հաճոյք կը նկատէ այդ պարտականութիւնը. կիները ի դուր կը դառնան իր շուրջ, բայց ինք մօրն է նըւիրուած ամբողջովին. ինձի անգամ չի վստահիր:

Այդ եղաւ վերջին օրը:

— Այսօր մայրս լաւ չ'երեւիր, — ըսաւ Միլլըր մտահոգ դէմքով, երբ քառօրդ ժամ ետք վերադարձաւ, — օդը խոնաւցած է, լաւ է պանդոկ վերադառնանք:

Մեծ եղաւ դարմանքս, երբ դիտով բարեկեղէ ետք՝ թերթը կրկին դրաւ աթոռիս: «Բոլոր սրտովս ձեր ներողամտութիւնը կը խնդրեմ — գրած էր, —

չկարծէք, թէ նման համարակուսութիւն ուրիշ առիթներով եւս ունեցած եմ. առաջին անգամ էր, կրնաք վստահ ըլլալ եւ թերեւս պատմաառ զուշակել» :

Տարի մը առաջ էր այս բոլորը : Նոյն գիշերն իսկ պատմած էին, թէ Պըրբլիէն կաթուածահար կին մը հիւանդանոց էր փոխադրուած, եւ թէ՛ ճամբան իսկ մահացած :

Փամանակը, յաճախ, անցեալէն որոշ դէմքեր ու դէպքեր հաճելի խորհրդաւորութեամբ մը կը պարուրէ : Աւելի քան տարի մը ետք, գրեթէ զբարձալի էր յիշել այդ հանդիպումը :

Օդը մեղմ էր. անմիջապէս որ առջևի աթոռներէն մէկը պարպուեցաւ՝ անցայ հոն :

Արձակուրդի մեկնելէ առաջ, միշտ սովորութիւն եմ ըրած փոքրածաւալ գիրք մը դնել պայուսակիս մէջ : Կարդացուած գիրքեր, որոնք պիտի ուզէի կրկին կարդալ, ինչպէս Ուլֆի «Վէպի մը պատմութիւնը» : Այս անգամ վերցուցեր էի Նիգոս Քազանծագիտի «Ճգնութիւն»ը, զոր Մարգար Շարապխանեան թարգմաններ էր ընադրէն : Գիրք մը, որ կարելի է յաճախ բանալ ազօթամատենանի մը պէս ու կարդալ : Գիրք մը, որ կը պահանջէ կեդրոնացում՝ կարենալ թափանցելու համար յայտնուած միտքերուն, հեղինակի անվերջ փնտառումներն, ներքին աշխարհին : Մարդկութիւնը միտքարելու համար կենսաբնի ու մահուան նոր իմաստ մը տալու իր հզօր ճիգին, ինչպէս կ'ըսէ ինք : Կը յաջողի՞, յաջողած է, այդ չեմ գիտեր ես :

Կանգ առած եմ պարբերութեան մը առջեւ, զոր կը կարդամ կրկին ու կրկին : Ի՞նչ գեղեցիկ պատգամ. «Յեղիդ հանդէպ կատարած ծառայութեանդ ընթացքին, առաջին պարտականութիւնդ է ներաշխարհիդ մէջ զգալ բոլոր նախահայրերդ : Երկրորդ պարտականութիւնդ է իրենց խոյանքը լուսաւորել եւ շարունակել իրենց գործը : Երրորդ պարտականութիւնդ է յանձնել գաւկիդ՝ քեզ գերագնացելու մեծ պատգամը» :

— Ժամը քանի՞ է արդեօք...

Մօտդ նստող ու խօսելու մարմաջ ունեցողներ այս ձեւով կը սկսին ընդհանրապէս : Տրտում աչքերով վաթսուներ անց կին մըն է :

— Թոռնուհիս, հոն, ժայռերուն վրայ բարեկամուհիին հետ նստած է : Չուզեցի իրենց մօտ մնալ. թող ազատօրէն խօսին, ըսի : Մեծնալէ ետք չեն ուզեր տարեցներու հետ ըլլալ : Տարբեր էր, երբ տակաւին փոքր էին... : Քանի մը շաբաթէն գոլէճ պիտի մեկնի. այսօր հետս բերի, որ քիչ մը զուարճանայ : Մտահոգ եմ. տունէն հեռու չես գիտեր ինչպիսի ընկերներ պիտի ունենայ, որոնց պիտի ծանօթանայ : Բարոյականի անկում ամէն կողմ : Իտալական ծագում ունինք. հայրս ու մայրս ինչքա՞ն խիստ էին մեզի հանդէպ, ինչպէ՞ս կը հսկէին մեր վրայ. այս նորերը կը խնդան, երբ մենք խորատել ջանանք : Լսել իսկ չեն ուզեր... Բարքերու ինչպիսի՞ յեղաշրջում, խաթարում : Անցեալ շաբաթ քրոջս հետ եկած էի... շատ առանձին կը զգայ : Իր լաւագոյն բարեկամուհիին գողցաւ ամուսինը... : Այո՛, իր լաւագոյն բարեկամուհին : Կրնաք երեւակայել, թէ ի՞նչ զգաց : Լացաւ, սաստիկ դառնացաւ, բայց ի վերջոյ անգի տուաւ. «Եթէ զիս այլեւս չի սիրեր, — ըսաւ, — ի՞նչ շահ պիտի ունենամ իրենց ամուսնութեան դէմ կենալով» : Կը ներես, արգելք եղայ կարդալուդ... : Շատ կը խօսիմ, ջղային եղած եմ, լուրջ պատճառներ ունիմ այդպէս ըլլալու : Չորս տարի առաջ փեսաս կորսնցուցի... : Պատուական տղայ մըն էր. այնքա՞ն կը սիրէր աղջիկս : Ընտանիքին կապուած, լաւ տուն պահող ազնիւ տղայ մը : Գլուխը բացին, ու մը հանեցին : Ուրախացանք, որ լաւացաւ : Բարեգործութիւնը իր գլխաւոր հաճոյքներէն էր. եկեղեցիին համար գիշեր-ցերեկ կ'աշխատէր : Այդ տարի Ծնունդին մեծ

փարթի մը տուաւ ազքատ տղոց համար. ի՛նչ նուէրներ, ի՛նչ ուտելիքներ : Բայց քանի մը տարի ետք կրկին... ու այլևս չազատեցաւ : Այդպիսի մէկը ինչո՞ւ այդքան կանուխ պէտք է երթար, Աստուած իմ, ինչո՞ւ... :

Փակած դիրքս ջղախօրէն կը թղթատեմ : Ի՞նչ պիտի ըսէր արդեօք սարկազատ կինը, եթէ կարգայի իրեն հետեւեալ պարբերութիւնը. «Իմ Աստուածս ամենատուրք չէ, Ան լեցուն է անգթութեամբ, վայրագ արդարութեամբ. անխղճօրէն կ'ընտրէ լաւագոյնը : Զի կարեկցիր, մարդերու եւ անասուններու համար հոգ չ'ընե՞ր եւ ոչ ալ՝ առաքինութիւններու եւ գաղափարներու : Աստե՛ք բոլորը կը սիրէ վայրկեանի մը համար, ապա, զանոնք կը խորտակէ յաւիտեանապէս ու կ'անցնի» :

— Աղջիկս չորս անչափահաս դաւակներով դրեթէ խենթացաւ. ջիղերը քայքայուեցան : Ապրուստի մտահոգութիւն չունեցաւ, բայց շատ մինակ զգաց : Քանի մը ամիս առաջ նորէն ամուսնացաւ : Ուրախ եւ դո՛հ եմ անշուշտ, որ դարձեալ տէր մը սննի, առանձին չի զգար, բայց մեծ տղան ըմբոստացած է. «Մայրս պէտք չէր որ ամուսնանար, — կ'ըսէ, — այդ մարդը հօրս դրամները պիտի վասնէ» : Կը ջանամ համոզել. «Ո՛ր, տղաս, ոչ, — կ'ըսեմ, — ան ալ իր դործը ունի, ինչո՞ւ համար հօրդ գրամը ծախսէ. լաւ մարդ կ'երեւի, համբերէ քիչ մը» : Կը վախնամ, որ յաջորդ տարի երբ ան եւս զոյժ ճ երթայ, այլևս չլիբրադատնայ ու փճացնող մոլութեանց մէջ իյնայ :

Երբեմն տկնարկս կը հեռանայ իրմէ : Կը դիտեմ ծովը, որուն կայոյցա ջուրերը այսօր նազանքով կու դան շոյել խորտկները ու մեղմ շառաչով լըլալ աւազը : Եւ կինը կը պատմէ ու կը պատմէ : Ատոր է, որ պահանջը ունի արդէն. կ'ուզէ պարզուիլ ու կարծիքս լսել, միաքը տանջող հարցերուն :

Գիտեմ, թէ ուրիշ մը պատրուակով մը շատոնց հեռացած պիտի ըլլար քովէն, — հաճելին, զուարճալին է, որ կը փնտռուի միշտ, — մինչ ես ուշադիր կը հետեւիմ խօսքերուն ու ան կը պատմէ այնպէս՝ կարծես իր կարգացած մէկ վէպին կամ տեսած մէկ շարժանկարին տխուր գրուազներուն է, որ զիս կը ծանօթացնէ, բայց կը զգաս հողիին գապուած փոթորիկը :

Հեռուն, մանուկներու խաղաղայրի մէջ հսկայ անիւր, գլուխը ամպերուն մէջ խրած՝ իր շրջանակէն կախուած դոյնգոյն կառքերով կը դառնայ ու կը դառնայ : Վարը՝ ջուրին մէջ ու աւազին վրայ մը ջիւններու պէս եռացող կիսամերկ մարմիններու խայտաբղէտ բաղմութիւնը : Երբեմն ձկնորսանակեր կ'անցնին, այն առեն, խաղաղ թուացող ովկիանոսը կ'ալեկոծի ու իրար հալածող փրփրերալս այիքները կատաղօրէն կ'արշաւեն ցամաք :

— Ամուսինս ձխարչաւի սիրահար է. ուրիշ հետաքրքրութիւններ չունի այլևս, — կը շարունակէ կինը, — այսօր դարձեալ դնաց : Հիւանդ է ու ձայն չեմ հաներ : Եթէ ծխելը տարիներ առաջ ձգած ըլլար՝ ասիկա պիտի չպատահէր... : Մենեակ մը վարձած է հոս՝ ամսուան մը համար. շտաթը անգամ մը կու գամ զինք տեսնելու. Օչըն Կրով պիտի հանդիպինք ու միասին ընթրենք. կ'ուզէ՞ք մեզի հետ քալել... :

— Քանի մը ժամ առաջ եկայ տակաւին ու պէտք է պանդուկ վերադառնամ, — կը պատասխանեմ ժպտելով :

Ու կինը կը մեկնի՝ իր սիրուն թռուռահին բազմակողմանի շնորհներովը հպարտ եւ իր բազմաթիւ հոգերը շարկած :

Աջքերս յառած պատի նկարին՝ կը յիշեմ կնոջ խօսքերը, կրծող վիշտերը : Զարմանալի տեղ մըն է սա աշխարհ կոչուածը, մա'նաւանդ՝ երբ անծանօթ վայրի մը մէջ անքուն կը դիչերես ու այս բոլորը կը վերյիշես : Կարծես սեւը կը պարուրէ կեանքը, որուն այնպէս կառչած են մարդիկ, թէ եւ կամովին անկէ հեռացողներ անպակաս եղած են միշտ : Բարեբախտաբար,

գիտեմ, թէ արեւի շողերը պիտի դան առաւօտուն այդ սեւը վարդազոյնի վերածելու :

Պղտիկ ճիչ մը կը հասնի ինծի : Կը յաջորդեն խօսակցութեան ձայներ : Կը սրեմ ահանջներս : Կարծես անձրեւէլ ալ սկսած է :

Երեկոյեան, ճաշարանի մը մէջ ընթրելէ ետք, դացեր էի պանդոկ : Ֆրետ իսկոյն կանչեց իր քով ծառայող ուսանողը, որ վերցնէ իրերս ու զիս առաջնորդէ գիշերուան մը համար վարձուած սենեակս :

Կը քայլէինք խօսելով .

— Ծառուղիի այս կողմն է տունը . դրան քովի կարմիր թուփերը կ'երեւան արդէն :

— Ուրիշ վարձակալներ եւս ունի՞նք, — հարցուցի :

— Այո, տարեց մարդ մը, որ գիշերները գինետունը կ'անցընէ ժամերը : Բայց անվնաս է եւ դուք առիթ իսկ չէք ունենար գինք տեսնելու :

— Գուն իրերս տար, — ըսի, — ես կ'ուզեմ լիճին եզերքը նստիլ քիչ մը :

Ծառուղիէն դէպի պարտէզ տանող փայտէ նեղլիկ կամուրջը նորոգւած էր : Նախորդ տարին ուղղակի սարսափեր էի . վտանգուած կը թուէր : Տախտակները տեղ-տեղ մաշեր էին, նոյնիսկ կոտրեր : Հեռուն՝ վերջալոյսի հրդեհը մարեր էր, տաք գոյները աժգուններ, պաղեր էին . լուսիւն ու խաղաղութիւն կը տիրէր ամէն կողմ : Միայն ես էի կամրջակին վրայ . կը դիտէի լիճն ու երկինքը, որ կարծես գրկած էին զիրար եւ ես անոնց մէջ տեղ մը կորսուած եւ կամ անոնց միացած : Լիճի ջուրերուն կեանք տուող, աղմուկող բաղերն իսկ երեւի քաշուեր էին կղզեակներու իրենց տնակներուն մէջ :

Տան դուռը թէեւ բաց էր, բայց հնչեցուցի զանգակը : Մանկունակ դէմքով, երկար սրունքներով աղջնակ մը վազելով եկաւ ու զիս ներս առաջնորդեց : Կանուխէն այրիադաժ տանտիրուհին պատմեց իր անցեալէն ու ներկայէն :

— Կեանքի պայմանները օրէ օր կը դժուարանան, — աւելցուց, — ընդարձակ է տունս . սենեակներէն երկուքը ամառները վարձու կու տամ . բախտաւոր էք, որ տիկին Մորիսընը յաջորդ շարաթ միայն պիտի կարենայ գալ : Ձեզի տրամադրուած սենեակը իրեն կը վերապահեմ : Միւս սենեակն ալ պարոն Գոսթելլոն վարձած է ամսուան մը համար . ձիարչաւի սիրահար մը : Տասնեօթը տարեկան մանչ մը ունիմ, որ պանդոկի մը մէջ կը սպասարկէ արձակուրդի այս ամիսներուն :

ձիւնը, զոր լսեցի, աղջկան՝ ձէնիին ձայնը պէտք է ըլլար, ու խօսողը՝ հաւանաբար եղբայրը :

— Արդէն թմրած է, կը զարնեմ գլխուն ու վերջացաւ, եւ կամ՝ ջուրին մէջ...

— Ո՛չ... ո՛չ...

— Լուեցէք երկուքդ ալ ու դո՛ւրս այստեղէն . հիւրը կրնայ արթննալ... : Յետոյ կ'որոշենք, թէ ինչ պիտի ընենք :

Կ'երազե՞մ...

Ձեզունին վրայ լոյսերու խաղը կը շարունակուի ու տիրապետող կարմիրը վտանգի ազդանշան կը թուի :

Գուռս կղզւած եմ, կ'իջեցնեմ նաեւ պատուհանը : Գլուխս մեղուներու փեթակ մըն է...

«Միւս սենեակը պարոն Գոսթելլոն է վարձած . ձիարչաւի սիրահար մը...» : «Ամուսինս այսօր դարձեալ ձիարչաւի գնաց, հիւանդ է, յոյս չկայ ու ձայն չեմ հաներ . ամսուան մը համար հոս սենեակ մըն է վարձած» : «Տա-

րեց մարդ մը, որ գիշերները գինետունը կ'անցընէ ժամերը»: Երեք տարրեր անձերէ լսածներս կը շագկապուին, կ'ազուցուին իրարու: Այլեւս կասկած չունիմ, թէ սիրտը ինծի բացող կնոջ ամուսինն է միւս սենեակի վարձակալը:

Մութը կարծես կը խթանէ մարդու երեւակայութիւնը: Կը յիշեմ պատանիներու եւ երիտասարդներու կողմէ կատարուած զարհուրելի ոճիրները...: Տան մէջ ոչ մէկ շշուկ այլեւս: Կը ջանամ խեղդել կասկածներս, կը ջանամ հեռանալ ներկայէն: Անվերջ թափառող միտքս այս անգամ — թերեւս «ձգնուիլ» էն թելադրուած — կը մտնէ անել բաւիղներու մէջ, անլուծելի հարցերու գիրար հալածող լաբիւրինթոսին մէջ՝ դէպի լոյս ուղիի մը փնտռուքով:

Ակնարկս յանկարծ կրկին կը հանդիպի ձեզունի յարափոփոխ լոյսերուն տակ խորհրդաւորութիւն մը զգեցած պատի նկարին ու պահ մը այնպէս կը թուի, թէ օդին մէջ կեցած ըլլալու պատրանքը տուող այդ կինն ու ես նոյնացած ենք:

Ի՞նչ անհեթեթ, ի՞նչ հիւանդագին մտածում...: Կ'ուզեմ քնանալ... քնանա՛լ...

**

Լուսադէմին բացի աչքերս: Ուրախացայ, որ միտքս յաջողեր էր թըմբիլ ու՝ կազուրուրիլ:

Կը ցատկեմ անկողնէն, հասցնելով կը պատրաստուիմ ու անշուկ կը նետուիմ դուրս:

Թաց է ու մշուշ ամէն կողմ, բայց լուսացուած ծաղիկներուն ու թարմ խոտին բոյրովը յազեցած է օդը: Լիճին մէջ կապարի երանգներ էին ինկեր ու զոյգ մը բադեր, այդքան կանուխ ու անձայն՝ ջուրն են իջեր: Քանի մը ժամ ետք, երբ մանուկներ հացի կտորներով լծափ վազեն՝ օդը պիտի լեցուի ուէք-ուէքներու համերգով:

Կը զգամ, թէ մէկը կը վազէ ետեւէս: Անքուն գիշերէ մը ետք անհանգարա եմ ու կասկածոտ: Ճէնին է. թուղթէ խոշոր տուրակ մը ձեռքին:

— Գիտէ՞ք, — կ'ըսէ խորհրդաւոր շեշտով մը, — պարոն Գոսթելլոն տուն չեկաւ երէկ գիշեր. մայրս կ'ուզէ ոստիկանատուն իմացնել:

— Ատո՞ր համար ճչացիր, — կը հարցնեմ՝ աչքերուն խորը նայելով:

— Օ՛, իմացա՞ք...: Ասիկա, ասիկա՛ էր պատճառը, — կը յարէ, ձեռքի խոշոր ծրարը ցոյց տալով, — գիշերները եղբայրս կառքով տուն կը բերենք. տեսանք, որ կառափի թակարդին մէջ մուկ մըն էր բռնուած: Եղբայրս ուզեց մեռցնել եւ ես լացի, չձգեցի: Հիմա, հոն, պարտէզի թուփերուն մէջ թող պիտի տամ:

Կասկածամտութեանս վրայ ծիծաղելով՝ կը քալեմ դէպի ծովափ: Շատ կանուխ է դեռ ու՝ ամայութիւն, խաղաղութիւն ամէն կողմ: Հազիւ նկատելի մշուշի քողով մը պարուրուած են շէնքերն ու ծառերը: Խոտը թաց է ու քերուս տակ, կ'անցնիմ մայթին վրայ ու յանկարծ կը նշմարեմ բազմութիւն մը հեռուն, աւաղի եզրին: Քայլերս բնազդաբար կ'արագանան: Գործաւորներ, ոստիկաններ, քանի մը տարեց այրեր ու կիներ:

— Տարի՛ն, — կ'ըսէ կին մը քովէս, — քիչ առաջ տարին: Հո՛ն, հոն էր ինկած, խեղդուած:

— Ոճի՛ր, — կը հարցնէ ծերունի մը, — ի՞նչ օրերու մնացինք, Աստուած՛ իմ:

— Ի՛նչ, ամէն ինչ վրան էր, թերեւս գինով էր եւ կամ կեանքին վերջ տալ ուզեց...

— Մինչև ուշ առե՛ն գինետունս էր, — մէջ կը մտնէ մեծղի մարդ մը, — չէր ուզեր մեկնել: Նկատեցի, որ լաւ չէր զգար. շաբաթներէ ի վեր ամէն գիշեր կու գար, շատ չէր խօսեր, կը սիրէր ձիարշաւները. շահելու նպատակով չէ, որ կ'երթար. «Երբեք բախտ չեմ ունեցած նման բաներու մէջ, երբեք բան մը շահած չեմ կեանքիս մէջ, — կ'ըսէր, — բայց միշտ սիրած եմ այդ խելացի կենդանիները»: Օր մը ընկերացայ իրեն: Մեծ հաճոյքով կը դիտէր անոնց արշաւը. «Կարծես թեւեր առած կը թռչին անհասանելի նպատակի մը», կ'ըսէր: «Ճօ, — ըսաւ երէկ գիշեր, — այսօր կ'նջու ու թոռնուհիս հետ մեծ ճաշ մը ըրի ու անոնց հետ էի մինչև ժամ մը առաջ. հիմա կարգը եկաւ խմելու. կը խմեմ, բայց չեմ գինովնար. կրցածիս չափ պիտի խրմեմ այս գիշեր, որպէսզի գինովնամ. այո՛, պիտի գինովնամ, այս գիշեր պէ՛տք է, որ գինովնամ», ու խմեց, խմեց:

Թաց աւաղին վրայ կը դիտեմ դրոշմը խոշորակազմ մարմինի մը. հաւանաբար երեսի վրայ ինկած, ոտքերը աւաղին մէջ խրած, դէմքը՝ պաղուկ ջուրին: Մօտեցող տառապազին օրերէն ձերբադատուելու, դանոնք կանխելու համար յօժարօրէն գացեր էր դէպի բնութիւնը... Եւ եթէ ճշմարտութիւն մը կար յոյն բժիշկին խօսքերուն մէջ, ուրեմն, այրող դէմքը լուացող ալիքներուն ու անոնց օրօրով՝ խաղաղօրէն յաւերժական քուն էր մտեր, հին քաղցր յուշերու երազանքով:

Կը հեռանամ: Ճեմտվայրի երկայնքին դոյնզգոյն դրօշները կը ծածանին գեփիւռէն: Խանութները կը սկսին բացուիլ. անցորդներ կանգ կ'առնեն դիտելու ցուցափեղկերը եւ կամ ծովուն դիմաց սուրճ մը խմելու, նախաճաշելու: Օդանաւ մը իր պուշին կապուած ժապուէն մը կը պտըտցնէ երկինքի պատտառին վրայ. ընդհանրապէս ճաշարանի մը կամ շարժանկարի մը յայտարարութիւնը: Աւաղին վրայ ճայեր աւաղանիներ, ովկիանոսը դորշ, մըռայլ, ալեկոծ, եւ հորիզոնը՝ անյայտ:

Անցորդներուն մէջ զոյգ մը կը գրաւէ ուշադրութիւնս... Ա՛ն է... կը ճանչնամ իսկոյն. նոյն վայելչակազմ պարոն Միլլըրը: Ո՞ր են սակայն նախորդ տարուան թախծոտ աչքերը. երանութիւն ճառագայթող արեւ. կայ այժմ անոնց մէջ: Իր քով՝ խոհուն նայուածքով, համակրելի դիմագիծերով, մայրանալու մօտ կին մը:

Կարծես էութեանս մէջ մակընթացութիւն մը տեղի կ'ունենայ. ընկճըւած տրամադրութեանս մէջ հսգիիս խորերէն հրճուանք մը կ'իյնայ: Հոն՝ դատապարտուածի մը կեանքին վերջակէտը, հոս՝ զրկուածի մը երանութիւնը՝ նոր կեանքի մը ակնկալութեամբ:

Մահ եւ կեանք:

Քայլերս կ'արագանան. մտովին կը ջանամ կրկնել Քաղանձագիտի միակ ու հզօր ցանկութիւնը. «Ըմբռնել ինչ որ պահուրտած է դրսերեւոյթներու ետին, լուծել այն գաղտնիքը, որ թէ՛ կը ստեղծէ զիս եւ թէ՛ ալ կը սպաննէ. հասկնալ՝ եթէ աշխարհի տեսանլի ու անդադրում հոսանքին ետին պահուրտած է անշարժ ու անտեսանլի ներկայութիւն մը»:

Կը քալեմ՝ դիտելով ալեկոծ ծովը: Մշուշը կը փարատի տակաւ, հորիզոնը կը յտականայ ու արեւի դէմքը թէեւ տժգոյն, բայց երկնակամարին վրայ է արդէն:

Խ Ա Մ Ա Ճ Ի Կ Ը

Յ. Պ Է Ր Պ Է Ր Ե Ա Ն

Ատեն մը կար,
երբ կրնայի մինակ ըլլալ:

Հիմա պէտք է
բաշեն ուտերէս, որ ոտքի մնամ.
Քեկերով բարակ
շարժեն ոտներս, գլուխս, ձեռքս,
գիս ձգեն ազատ,
որ հովերուն հետ՝ հագուստներս խաղան,
եւ մարդիկ կարծեն՝
տակաւին հոս եմ,
քոչուններ կարծեն՝
տակաւին կ'ապրիմ
եւ ցորենի
դաշտերն մնան ապահով:

Ատեն մը կար,
երբ գիտէի չանշարժանալ:
Հիմա միայն այստեղ եմ.
չեմ հետեւիք
արեւուն ու շրջադարձ
շարժումներուն ստուերիս՝
ժամանակի հատիկները հաշուելու:
Արեւը իմ հագուստներս
կը գունաքափէ,
հովը սառն
դիմագիծերս կ'ազաւաղէ,
եւ ես անխօս
կը մտածեմ:

Գուցէ այլեւս
պատուելու եմ
դիմակը դէմքիս,
որ քոչունները չփախչին ինձմէ,
եւ ապահով, ժպիտով մարդիկ
հանգիստ չննջեն
ցորենին համար
(Քէ հաւասար գլուխներով
կը բարձրանայ...):

Ատեն մը կար,
երբ կրնայի ինքզինքս ըլլալ:
Հիմա կ'ուզեմ
բոլորին մէջ
ինքզինքս մտնալ:

Հիմա գուցէ պէտք է երբայ:

Մ Ա Ն Ը Ն Ա Ր Ի Ի Ր Ձ Ե Ի Ե Ր Ո Վ
Կ Ը Ծ Ա Ղ Կ Ի Ա Ր Դ Է Ն

Մահը հարիւր ձեւերով
մեր շուրջը արդէն կը ծաղկի՝
օրինաչափ մեր բայերէն,
չոռոգուած եւ լոյսէ հեռու
ձգտումներէն նիհարկեկ
ապրումներու
ներմուծումէն մաքսանեց:

Մահը մեր շուրջ կը ծաղկի
չերմանցային սոօքային մէջ,
ուր կը փորձենք
պաշտպանուիլ ցուրտէն

ԵՐԳ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

Թրջուած էիր անձրեւին տակ :

Զգեստներուդ ու միսերուդ
պաշտօնական
դրացութիւնը ջնջուած ,
դարձուցած էր քեզ անպաշտպան՝
ժամանակի ,
ծլարձակուած զգայնութեանց
եւ կորսուած առիթներու
յարձակումէն :

Մինչդեռ , անդին
արահետը շոնիներու
անառին մէջ կը կորսուէր ,
քակարդելով քեզ անձրեւի
քնարական ուղկանին մէջ :

Հիմա ոչինչ կը տեսնէիր ,
բայց ամէն ինչ , բնագոյարար ,
կ'ըմբռնէիր :
Խօսէր չկային .
բառերը այնտեղ քոչուններ էին ,
թառած-կորսուած :

Ե Ռ Ա Ն Կ Ի Ի Ն

Լուսիւնը միշտ
քերթողութիւն է ,
ինչպէս եւ մահը :

Նաանկիւնը վերոյիշեալ՝
անմեկնելի
քաջողական ուժ մը ունի ,
Պերմուտայի եռանկիւնին
մագնիսական հոսանքին պէս ,

ուր ,
վտանգին մէջ
կախարդուած՝
կարելի է կորսուիլ . . . :

Եւ ջերմութեան
կաքիլները ամբարել՝
արուեստական մեր կեցութեան մէջ . . . :

Մահը արդէն կը ծաղկի
եւ քակարդին մէջ անոր
ամէն վայրկեան կը սահիւնք :

Ու ժպիտով կը հետեւինք
պարմաններու
շարժումներուն համարձակ :
Բայց կը սորվինք
շատ չգոհել , չակնկալել
գուռայ խօսքերով դրսեւորուիլ՝
տնտեսելով
ապրումներն ու
հայրերը մեր :

Մահը հարիւր ձեւերով
մեր շուրջ արդէն կը ծաղկի . . .
Բայց թոչունը
կը բարձրանայ վերստին
եւ աղջիկը՝ անակնկալ
կը հանդիպի , կը հալի :

Ու մենք տարբեր
կը տեսնենք
կեանքն ու մահը ամէն օր :

Կ. Ա Ր Մ Ե Ն Ե Ա Ն

Մ Ե Ն Ք

Դուք բուրդ, որ այդ տարի ձեմարանը աւարտեցիք կամ թերեւս չաւարտեցիք եւ սակայն անոր դադունի տպրումը դեռ կը տանիք երկրէ երկիր, անցեալ տարի, այս օրերուն, Պրիւքսէյէն ճամբայ ելլող թռիչքին մէջ մէկէն ի մէկ իրար գտաք եւ լուր չունիք:

Ես գիտեմ, թէ մեր ժամերը խոնկարուած են այլեւս. մեր նիստուկացը այժմ բարդ է ու չամփոփուիր: Եթէ ուզեմ ձեզ բուրդ ի մի բերել այս պահուն, աշխարհն է, որ պէտք է փոխուի: Կրնա՞յ փոխուիլ. կրնա՞յ ներել ինքզինքին այս անպատկառ տեղաշարժը: Քանի՞ հոգի տեղէն հանեմ սա պահուն, որ զիս լսէ. քանի՞ հոգի արթնցնեմ, դարմացնեմ. քանի՞ մարդու առեւտուրը կասեցնեմ: Ես լաւ գիտեմ, թէ այս բոլորը մեր անհաշիւ եւ անկարեւոր խոհերն են. անոնք կ'իյնան թուղթին վրայ եւ կը մնան ապարդիւն: Ես եմ միայն, որ այս պահուն կ'առանձնանամ եւ կ'ըմբռնեմ մեր այս օրը: Հոս ցերեկ է ու արեւ կայ. դարնան յոյզը արդէն կը զգամ ծառերուն մէջ. կ'ուզեմ երգել. ես երգելով կ'ուզեմ մեռնիլ: Վաղը նորէն պիտի լծուիմ իմ պաշտօնիս: Այսօր ես հին դաւադիրն եմ. այսօր նորէն կը սնանիմ իմ քովնաի դաւերովս: Ես ձեր մէջն եմ. դուք՝ իմ մէջն: Պրիւքսէյէն ճամբայ ելանք. շուտով Լոնտոն պիտի հասնինք:

Թռիչքին մէջ նոյն մարդերն են. Ստպենայի անգոյն, անկապ ժողովուրդը: Գործի մարդէր. տուն-տեղ ունին. իրիկուն է. կը շտապեն տուն: Նոյն բաները պիտի ընենք. նոյն կէտերէն պիտի անցնինք. ոչ ոք իրար պիտի ճանչնայ. ոչ ոք իրար պիտի յիշէ. ոչ առնելիք, ոչ ծախելիք: Դուռը դուռ է, դուր կը բանաս մեքենաբար կամ կը գոցես. միեւնո՛յնն է: Այս ուշ ժամուն ըրածներդ հետք չեն թողոր. արարքներ չե՛ն: Հարցաքննիչ դատաւորն է, որ կը ջանայ փնտռել արարքներուդ շարժառիթը ու չի գտներ: Լաւ կը յիշէ՞ք դուռը բացած ըլլախիղ: Ո՛չ, չեմ յիշեր, բայց յայտնի է, բացած եմ... Ինչպէ՞ս կ'ըլլայ, որ բացողը դուք էիք եւ չէք յիշեր: Հարցաքննիչ դատաւորը հիմա նստած է դէմս ու չի խօսիր, այլ կը գոռայ՝ «Ծօ, սրիկայ, աչքերուս մէջ նայեցար եւ չճանչցա՞ր, որ ես էի, Արա Ղարիպեանը...»:

Մեր հանդիպումը այսպէս չեղաւ. ասիկա ժամեր ետքն էր, երբ այլեւս իմեր էինք, պարպեր էինք քանի մը շիշ, փողկապները քակուեր էին. դուրս պատուհան բանալ տուինք, որ քրտինքնիս պաղեցնենք: Պըռնին նստած էր քիչ անդին եւ կը մասնակցէր մեր այս քէֆին ինքն իր ձեռով: Պըռնին մեզի

ատրեկից է. ամերիկահայ տղա՛յ մը, որ բարբառի հեռքերով կը խօսի իր ընտանի հայերէնը. առատ, դանդուր մազեր ունի, որոնք կ'իջնեն քունքերն ի վար եւ թաւ փունջեր կը կազմեն հոն. այդ փունջերուն մէջ արդէն իսկ կէս առ կէս կը փայլի վայելուչ արծաթագոյնը եւ մեղ երեքս կ'ընէ քառասունի զուռներուն այս կողմն ու այն կողմը կեցած վեթերան ընկերներ:

Արան եւ Պըռնին միասին կը ճամբորդէին: Արան Բագրուշ Ընկերութեան հետ է. Պըռնին՝ Ա.յ. Պի. Դմ.ի: Մինչեւ մեր հանդիպումը՝ անոնք Սապնայի Թոխչիին անարտայայտիչ գէմքերն էին, իսկ ես նստեր էի ներսը եւ կը նայէի անորոշ ուղղութեամբ: Երկու հարկ մօտեցան եւ դրանցին կողքի աթոռները. մեր միջև կար նեղ միջանցքը, ուրկէ պիտի անցնէր աղջիկներուն երթեւեկը, երբ այլևս թռիչքը ճամբայ ելած ըլլար եւ մենք մեր զօտիները քակէինք: Ես արդէն լեցուցեր էի գարեջուրը եւ արդէն իսկ քիթս թաթթիս փրփուրին մէջ, երբ աջ ուսիս նստաւ թաթր.

— Այ կը բաւէ, սրիկա՛յ, ուշքի եկուր, ես եմ, Արա՛ն...

Աշխարհ մը մարդ մեր շուրջը վարձացուցինք, երբ երկու արջերու պէս փաթթուեցանք եւ միջանցքին անհանդիստ երթեւեկը կասեցուցինք:

Գիտեմ, թէ պատմածս այդքան ալ կարևոր պատմութիւն մը չէ եւ կրնամ նոյնիսկ զանց ընել դայն եւ սակայն անպանդառելին այս հանդիպման շարունակութիւնն է: Այս հանդիպումը տասը տարին մէկ անգամ միտն տեղի կ'ունենայ, բայց ան միշտ ալ այսպէս սեղի կ'ունենայ: Վայրը չէ կարելորդ: Վերջին անգամ մենք հանդիպեր էինք Ֆիլատելֆիոյ մէջ. ամբողջ զիշեր մը նստանք նեղ սեղանի մը շուրջը, զոր զրեք էինք ուսանողական մեր յարկարաժնի խոհանոցին մէջ. ամբողջ զիշեր մը նոյն բաները պատմեր էինք իրարու: Յիշատակութեան արժանին Ապրիլ Մէկի առաւօտն էր, զոր բոլորդ կը յիշէք: Ելեր էինք դրօսանքի. խաղը կ'եռար բախին մէջ, բայց հասած էր զօտի ժամը եւ զանգն էր, որ պիտի արուէր. այդ պահուն էր, որ պատըզ դամին վրայ նշմարեցինք խուճաղահար երթուղարձը արիւրն Գոհարին. մեծկահ ու հին զանգը ձեռքն էր, զոր կը թօթուէր ամբողջ ուժով. յիմար զանգէն ձայն դուրս չէր գար... Մենք խուլ չէինք. արթուն էինք. Լրգիծարա՛նն էր, որ փրցուցեր էր անոր լեզուն: Ես կը նայեմ աչքերուն մէջ. ան կը խընդայ. հին դաւն է, որ այս ուշ ժամուն մենք վերստին պիտի տօնենք:

Այսպէ՛ս կ'ըլլայ: Երբ կը նստինք ու կը խմենք ու կը պատմենք, հին վէպն է, որ ծնունդ կ'առնէ. մեռածներն են, որ կ'ողջնան. կորուածները կը գանուին. մոռցուածն է, որ վերստին կը փնտռուի: Ամէն մէկը պիտի յիշենք իր իսկական անունով: Այսինքն՝ ա՛յն անունով, որով անոնք բերնէ բերան դաւադրօրէն կը ծանուցուին: Նոյնիսկ այսօր, Երբ ձեռք կ'առնենք ուսուցիչ մը, անողորմ ենք: Նստեր ենք հոս, սեղանին շուրջ. Մուշեղ, կ'ըսենք. Բանեան, կ'ըսենք. Թոփալ, կ'ըսենք: Անոնք կ'ապրին քուրմերու պէս. անոնց ձայնը զեռ կը լսենք պատէն անդին: Այսպէս է, որ մերթ Մասունին պիտի յիշենք եւ մերթ Սըրը. անուննե՛րն են. անվիճելի ու վերջնական. չրփոթ չունին. չեն աղօտիր. մէկ շարժումով կը ճանչցուին: Կը պատմուին:

Վայրկեան մը կայ գանգէն առաջ, որ չի հասնիր, այլ՝ կ'երկարի. կը բռնուիս անօգնական եւ կ'աղերսես օգնութիւնը. Գիւզալն է, որ պիտի կրկնէ իր անսղոք հարցումը.

— Որտե՞ղ կը նստում Հայոց կաթողիկոսը:

Աջ կը նայիս. ձախ կը թեքիս. հեռուէ հեռու ամէն մէկը իր գիտցածը պիտի յուշէ, բայց անօգուտ: Ճշնոթամի այլ վայրկեանին, երբ վաժան է կացութիւնը եւ ելք չունիս, երգիծարանն է, որ մէջերէդ սարսափահար պիտի ծնի ու գոչել սայ:

— Անթիլիա՛ս...

Նստի՛ր տեղդ, Ս. Նշանի քորեպիսկոսոս... պիտի դառնամ Արային եւ բաժակ երկարեմ: Մեր սորվածները մենք մոռցեր ենք շատ վաղուց. եւ ո՛ր վ գիտէ, թէ ո՛ւր նստած էր Հայոց կաթողիկոսը այլ ուշ ժամուն. որոշած էր մնալ Դուի՞ն, թէ անցած էր Աղատ դետը. Էջմիածի՞ն հաստատուած էր, թէ Աղթամար. Հոռմկիս՞ոյ, թէ Սոոյ վանք: Այս բոլորը մենք թողուցինք պատին ետեւ: Դարե՛ր անցան: Մէկ շապիկով ճամբայ ելանք:

Հիմա հոս ենք. հիմա գիտենք, թէ մեր մէջն է անհերքելին: Ձայն չենք սորված եւ չենք մոռցած: Ձայն փրկեր ենք ու բերեր ենք մինչեւ այստեղ: Եւ փրկուածը օրերու այս չլիժան էր. փրկուողը ձեռարանի փողոցներն էին, գրացիները, խանութպանները, սափրիչ Ռուբէնը, Փա՛նը. դերձակ մը կար, որ տարական շեշտերով կը խօսէր հայերէնը եւ կը սնուէր, թէ ինք հին հէյոց կը պատկանի. կար արդուկիչ Խորէնը, որ նախ եւ առաջ կարնեցի էր: Այս պատմութեան ծայրը չեկաւ. մեզմէ ո՛վ կրցեր է իր խօսքին ծայրը բերել: Դուք ժողովի չէ՞ք նստած. հոգաբարձու չէ՞ք եղած ամերկահայ մեր զպրօցներէն մէկն ու մէկուն. չէ՞ք գիտեր, թէ այլ ժողովները վերջ չունին. Արա՛, կ'ըսեմ, այս սղաքը ի՞նչ պիտի ընենք...

Յանկարծ գգացինք, որ դուրսը մտի էր եւ մենք վաղուց այլեւս չէինք խնդար. բառերը անկույ պատառներու պէս էին այլեւս. անոնք կը խափանէին մեր կոկորդները:

— Պէտք է, — կ'ըսէ, — ձեւը գտնե՛նք... Պէտք է հաւաքենք մեր այս սղաքը Պոսթրնէն, Տիթրոյիթէն, Թորոնթոյէն, ուրկէ՛ որ կրնանք:

Նստած ենք բոլորով մեր սեղանին շուրջ. եղած-չեղածը դրուած է ու կերուած. պարսպ են արգէն շիշերը. Վրէժուհին բաժնած է սուրճը եւ հիմա ուժայ առ ուժայ կը քաշենք գոյն եւ օտարոտի համ մը կը զգանք մեր քիմքերուն վրայ:

Սեղանին շուրջն են նաեւ երեխաները: Մենք մոռցեր էինք զիրենք.

մենք մտեր էինք մեր հին աշխարհը եւ այս պահուն չենք գիտեր, թէ այս բուրբը ի՞նչ կ'ըսեն իրենց: Նստած է նաեւ Պրոնին, որ կը ջանայ հասկնալ, թէ ինչո՞ւ մէկէն լրջացեր են մեր խօսքերը. մեր բառապաշարը անզգալարար փոխուեր է մէկէն եւ ինք այլեւս դժուար կը հետեւի: — Եկուր տեսնեմ, Չանգո՛ւ, — կ'ըսէ Արան եւ իր թաթը կը դնէ տղու ծոծրակին. հիմա խօսք մը ունի ըսելիք եւ կ'ուղէ ճիշդ բանաձեւել իր այդ խօսքը. կողորդը մաքրելու անյաջող փորձերէն կը հասկնամ ես այդ բանը: Իր անձկութիւնը ի՛մա ալ է այդ պահուն: Ի՞նչ բառեր եւ ի՞նչ լեզու գործածէ, որպէսզի հասնի այս նոր ազուն:

— Հայերէնս կը հասկնա՞ս, տղաս, — կը հարցնէ ու կը զգայ, թէ սխալմամբ գաշտյն մը կը խրէ կողիս:

Չանգուն դուրսը կը շարժէ հաստատական գործածելով իր նուազազոյն այն, մինչ Վրէժուհին կ'անհամբերի անդիէն.

— Բերանդ բա՛ց, տղաս, այ՛ն ըսէ...

— Այո, — կ'ըսէ Չանգուն ինդալով ու բարձրաձայն եւ մեղ ալ հետը կը խնդացնէ:

— Նայէ՛, տղաս, — կ'ըսէ Արան վերջապէս, — ես ալ քեզի պէս տըղայ մը ունիմ. ան ալ քեզի պէս հայու աչքեր ունի. ես եւ հայրիկդ գպրօցի ընկերներ եղած ենք. դուք ու մեզի պէս ընկերներ պիտի ըլլայիք, եթէ...

Խօսքը կողորդը կը մնայ: Կը լսենք բոլորս: Լուռ են նաեւ երեխաները. կը զգան, որ բան մը պատահեցաւ եւ կը փորձեն մեկնել գայն. ինչո՞ւ յանկարծ հասանք տեղ մը, ուրկէ չենք կրնար վերստին ճամբայ ելլել: Անելը խախտողը պիտի ըլլայ Պրոնին. պիտի նայի ժամացոյցին եւ իր տեղէն պիտի ցատկէ:

— Հէ՛յ, — պիտի զոչէ անգլերէն, — քսա՛ն վայրկեան միայն ունինք... Եւ մեր սեզանը պիտի իսկոյն տարտղնուի:

Հիմա փաթթուեր ենք իրարու մեր տան շեմին: Արան եւ Պրոնին պէտք է հասնին յաջորդ թռիչքին: Լոնտոնը միջանկեալ գազար մըն էր միայն: Ծուտով մեր ուղիները նորէն պիտի կորսուին ամպերուն ետեւ: Հիմա քա՛ւսին պիտի շրջադարձ մը պիտի կատարէ փողօցին անկիւնը եւ նոր սասնամեակն է, որ պիտի սկսի: Մեր յաջորդ հանդիպումը պիտի ըլլայ նոր ու տարբեր աշխարհի մը մէջ, երբ մենք հասած ըլլանք մեր յիսունի դուռներուն: Չանգուն եւ իր տարեկիցները թերեւս համալսարան մտած պիտի ըլլան: Թերեւս բախար բերէ եւ ծանօթանան իրարու եւ մեր սրտերը լեցնեն անօրինակ ու բախութեամբ:

ԿԱՐՕ ԱՐՄԵՆԵԱՆ



ՄԻԱՄԱՆԹՈՅԻ ՍԵՐԵՐԸ...

Վահան Թէրէկեանի, Ջաղէլ Եսայեանի եւ Սիւսանթոյի ծննդեան 100ամեակներուն նուիրուած մեր յունուարեան բացատրիկէն դուրս մնացած նիւթերէն ոմանք, առաջին երկուքին վերաբերողները՝ Տպարդեցիք յաջորդական թիւերով: Պարզապական խորագրի մը աակ արուող հետապայ էջերը անջատուած էին դարձեալ նոյն մտքով, բացատրիկին համար, ուր հնարաւոր էջերը անհրաւորել զոնանք, տեղի անձկութեան պատճառով:

Սիւսանթոյի կեանքին սիրոյն երեսը զբէթէ նիւթ էջ ելած մեր իրականութեան մէջ և այն կարծիքը կը տիրէ, որ անոր հողին փոթորկած է միայն դաղափարական ծովուն մէջ, անտեսելով անհատական ամէն յոյզ: Տարբեր բան կ'ըսեն սակայն նոր յայտնաբերուած թուղթերը, որոնց մէջ հետաքրքրական նմոյշ մըն է Հեկտոր Ռշտունիի կազմած հետադայ էջը՝ ի մասին Սիւսանթոյի եւ Սաթենիի Ջաղէթեանի մտերիմ կապերուն:

Ամբողջացնելու համար այս մասին եղած ծանօթութիւնները՝ յաջորդ թիւով պիտի ներկայացրնենք Սաթենիի քրոջ՝ Մաշայի եւ Սիւսանթոյի սպրած մտերմութիւնը, ի կովկաս, Վարդգէս Ահարոնեանի գրիւով:

Նամակներ գալիս են նաեւ Մարտիկից, Լոզանից, Ալեքսանդրիայից և այլ բազմաքանակից: Նամակներ, ողջոյնի ջերմ խօսքեր են տեղում Ժրնեսի հայ ուսանողներէր, որոնց մէջ էր քերթողի սիրոյ զիցուհին: Դա բժշկական բաժնի ուսանողուհի օրիորդ Սաթենիի Ջաղէթեանն էր(1): Երազկատ ու քնքոյշ և նոյնքան հայրենասէր այդ օրիորդը բնաւորութեամբ ընդհանուր շատ բան է ունեցել Սիւսանթոյի հետ, որին կապուել է բանաստեղծը մաքրաթեւ երազներով: Այդ մասին գրել է քոյրը. «Եղբայրս ժընեւ եղած առեմիս, ուսանող, ուսահայ étudiante Սաթենիի անունով (լաւ չեմ յիշեր) սիրահարուած էր ու քրթակցութիւնները քէեւ կարգալ կու տար ինձի եւ Վահանին, բայց անհնարին եղաւ հետքը գտնել մօտս»(2): Սակայն այդ նամակներից Երեքը գտնուել է արխիւում: Դրանք քնքոյշ սիրով ու թախիծով տողոր-

ւած էջեր են, որոնցից մէկի մասին խօսում է Ռ. Սեւակը. «Մարդը ստեղծուած է պայքարելու, ու կիմը՝ ուզմիկը մխիթարելու համար», կը գրէ նիցէ: Ահաւասիկ նաեւ կիմ մը՝ ուզմիկը մխիթարելու համար: Թօշնամ ծագկեփումը մը՝ որ կովկասեան անծանօթ գեղուի մը կը դրկէր մահահոտ բանաստեղծին... Հիւանդն իր դողող շրթներուն դրաւ գանձ: Իր հպարտ սիրտը դեռ էջը քանցած սէրը: Տարտամ խոնարութիւն մը իր աչքերը լայնցուց, լացուց...»(3): Բովանդակութիւնից երեւում է, որ սիրոյ այդ նամակը իրօք կարող էր յուզել բանաստեղծին: «Ատում, ինչո՞ւ ոչինչ չես գրում. հիւանդ ես, հոգիս: Այսօր ամբողջ օրը անհամբերութեամբ քեզից տողի էի սպասում, բայց ի գուր: Վերջի փոստի ժամանակն էլ անցաւ, էլի ոչինչ: Ինչո՞վ բացատրեմ լուսթիւնդ, հոգիս. արդեօ՞ք բարկացած ես վրաս եւ ուզում

ես դրանով պատժել ինձ․ եթէ այդպէս է, պատիժդ անչափ խիստ է, գթացիր: Գոնէ բացատրիր, ո՞ր մեղքիս համար է այդ սուկայի պատիժը: Ոչ, չեմ կարծում, որ Ատումը այդչափ չար կը լինի դէպի Սաթենիկը, որը պաշտում է իրան․․․

«Եթէ այս չէ պատմաոր, ուրեմն հիւանդ ես․ ամէն բոպէ այդ բանը մտածելիս խենթութեան եմ հասնում․․․ աղաչում եմ, շուտ գրիր եւ բացատրիր պատմաոր: Եթէ վաղն էլ քեզից տող չունենամ, չգիտեմ ինչ կը լինի հետս: Չեմ կարողանում գրել, հոգիս, արցունքները խեղդում են ինձ, այլեւս ուժ չունեմ գրելիչ բռնելու»(4):

27-10-05 *Թուակիր նամակում այս նուրբ ու խոհուն հայ աղջիկը խօսում է անցած օրերի դուարթութեան եւ անջաման խենթացնող ախրութեան մասին: Սիրում է կարգալ Պօլ Վեռլենի երկերը, սրովհետեւ այդ երկերը սիրել է նաեւ ընտանեկանը: «Շարունակ Վեռլենը կը կարդամ․ կարծես այդ . . . տաղանդն էլ նոյնն էր գգացել կեանքի մէջ եւ նոյն մեղամաղձիկ, դժգոհ կեանքէն, բոպէին էր, որ բացազանչեց՝ Un grand sommeil noir tombe sur ma vie . . .» (Մի մեծ սև ջուն է իջնում իմ կեանքի վրայ)(5): Սիրոյ այս տաղնայը գուզաղիպում է Կովկասում սպասուող քաղաքական արիւնտանցքերին: Ըստ երեւոյթին, հասարակական հեաաքրքրութիւններով ապրող օրիորդը որոշ դեր է կատարել Սիամանթոյի կեանքում, ստեղծագործութեան նիւթ տալով նրան Կովկասի 1905ի անցքերից: «Ատում, չգիտեմ մամակս քեզ կը համնի՞ թէ ոչ, որովհետեւ լուրեր են տարածում, որ վաղուանից ընդհանուր գործադուլ է յայտարարուած: Աւելի վատ պիտի լինի դրու թիւնս, եթէ ճշդուի այդ: Ինչպէ՞ս քեզից լուր չպիտի ստանամ երկար ժամանակ․ եւ այդ ժամանակամիջոցում ո՞վ գիտէ ինչեր չեն պատահիլ այստեղ․ խառնակութիւններ, կոտորածներ․ արիւն է, որ պիտի հոսա: Ո՞վ գիտէ, արդե՞՞ք ողջ պիտի մնամ, որ եւրոպա գնամ: Թէ՞ ես էլ պիտի ընկնեմ կոզակի կամ թուրքի սրէն: Սարսափում եմ*

մանից․․․ Ատումս, ի՞նչ ես անում․ ինչպէ՞ս է առողջութիւնդ, սրամաղքութիւնդ, նիւթական վիճակդ»(6):

Յանձին Սաթենիկի՝ բանաստեղծը դուել էր զարգացած, հագեցից եւ զազափարակից մի ընկեր եւ միխիթարում էր նրանով:

Սաթենիկն արժէքաւոր յուշեր ունի(7), սրանք ներկայացնում են հեաաքրքրական միջադէպերով զարգացող սիրոյ դրամատիկ մի պատմութիւն, լոյս սփռելով 1904-1906ի միջեւ ընկած բանաստեղծի կեանքի տարիներին եւ սրախնուրական պայտնիքները վրայ:

Այդ յուշերը վկայում են, թէ ինչ սիրով է շրջապատել քերթողին հայ ուսանողութիւնը, ինչ ներշնչումներ է ըստացել հայ մտաւորական երխասարգութիւնից, ինչպէս է ապրել եւ ստեղծագործել: Մանօթութեան սկզբում, երբ Սաթենիկը նամակներին պատասխանում է փոքր-ինչ յայպալումով, բանաստեղծը ազնուական հպարտութեամբ ու նուրբ հեղնանքով գրում է․ «Օրիորդ Շաղեթեան(8), ինչպէ՞ս ժամանակ կրնամ գրունել այդչափ բարի ըլլալու համար» (1905-ին, 4/XI):

«Լօզան եղած ժամանակ, — գրում է Սաթենիկը, — մի օր Սիամանթոն խընդրեց ինձ եւ ընկերուհուս միառժամանակ սենեակից դուրս գալ, թողնել իրեն մեանակ եւ եթէ կարելի է, գտնել մի սիգարէտ, որի կարիքը գգաց:

«Մենք չհասկացանք․ շատ տարօրինակ թուաց մեզ եւ երբ նա սենեակից դուրս եկաւ գոհ եւ յուզուած․ «Մուսաս էր եկել, — տասց, — շատ անգամ դիչերներն էլ է դալլիս եւ այդ պատճառով մահճակալիս մօտ, աթոռի վրայ, միշտ դնում եմ թուղթ եւ մատիտ: Առաւօտը շատ անգամ ոչինչ չեմ հասկանում զրածիցս, որովհետեւ մթութեան մէջ, կիտարթուն, մի տողի վրայ գրում եմ մի ուրիշը եւ անհասկանալի է դառնում գըրածս»:

«Սիամանթոն ոչինչ չասաց իր գրածի եւ առհասարակ չէր խօսում իր ստեղծագործութիւնների մասին:

«Իմ հարցին՝ «Շատ դժուար է քեզ

հասկանալ եւ կան մարդիկ, որ բեզ լին-
վին չեն հասկանում, ինչպէս եւ ես»,
Միամանքոն հպարտ ու վստահ պատաս-
խանեց. «Իմ բանաստեղծութիւնները ան-
կողմու մէջ կարգալու չեն. պէտք է խո-
րը ըմբռնել, հասկանալ, ապրիլ...»:

Այս յուշերում երբեմն բացուում է
քերթողի գրամատիկ աշխարհը: Մրտի
մէջ սիրոյ անշէր, զեղեցկութիւն ու
ցաւ, կրճքի տակ հիւժոյ կրակ, ուղե-
ղում կեանքի վաեմ իղձալներ, իրակա-
նութեան մէջ արիւնաներկ հայրենիք,
մոխիրներում բացուող երազի վիրաւոր
նայուածք...:

1904-1905ի շրջանում քերթողը տե-
ղափոխուելով բարձր, անտառապատ, գե-
ղատեսիլ, ամբողջապէս գարնանային ծա-
ղիկներով պատած մի առողջարան, ըն-
կերներին հրաւիրում է իր մօտ: «Փնջեր
կազմած, երբ ուզում էինք վերադա-
նալ, — գրում է Սաթենիկը, — Միա-
մանքոն ցոյց տուեց սանատորիայի շէն-
քը, իր սենեակի պատուհանը՝ ամբողջ-
վին ծածկուած սպիտակ շուշաններով:
Մանկական ժպիտը դէմքին, նա մեզ դի-
մեց. «Դուք շատ էք ծաղիկներ սիրում,
հիացէք. ձեզ արժանի են այս սպիտակ
շուշանները միայն...»:

«Միամանքոն ինքը շատ ծաղկատէր
էր. նուրբ նաշակի, ֆնֆոյշ զգացմունք-
ների տէր: Խիստ տարուած էր գեղար-
ւեստով. պաշտում էր պոետ Վեռհարնին,
նկարիչ Հեննէրին, քանդակագործ Ռոդէ-
նին եւ շատ շատերին:

«Հագնուում էր նաշակով, չափազանց
մաքուր: Ես նրա վրայ, երկու տարի շա-
րունակ, տեսել եմ միեւնոյն կոստիւմը,
բայց այնպէս պահուած, կարծես նոր էր
դուրս եկել գերմանի մօտից»(9):

Կանացի այս նուրբ դիտողութիւննե-
րում բացուում են քերթողի բնաւորու-
թեան կրակոտ ու բուռն, միաժամանակ
ինքնամփոփ ու զուսպ խառնուածքի գծե-
րը: Մի անգամ 1905ի ամբանը բանաս-
տեղծ Արամ Չարբղից իմանալով, որ
վերջինս սիրահետել է Սաթենիկին, յուզ-
ւած պատասխանում է. «Ես երկու տարի
է տառապում եմ. ես չեմ համարձակուել
օրիորդին յայտնել իմ զգացմունքներս.

եւ աշխատել եմ ապաքինուել, ուժ հա-
ւաքել սիրտս բացելու նրա առաջ: Նրա
շնորհիւ է, որ ապրում եմ: Ես ոչ ոքի
չեմ գիջիլ իմ սէրս...»: Սաթենիկին յա-
ճախակի ասել է. «Մարդու ամենամեծ
երջանկութիւնն է տեսնել գեղեցիկը, վա-
յելել գեղեցկութիւնը. բոզ այս աստղե-
րը վկայ լինեն իմ մեծ սիրոյն»:

Երբ նոյն թուականի ամբանը Սաթե-
նիկն ուղեւորում է Թիֆլիս, ծնողների
մօտ հանգստանալու եւ աշնանը վերա-
դառնալու որոշումով, Միամանքոն հրա-
ժեշտի պահին ինչ-որ նախապագումով
ասում է. «Ժամանակը եւ տարածութիւ-
նը ինձ կը սարսափեցնեն»: Եւ իրօք, Ժա-
մանակը եւ տարածութիւնը ի վերջոյ
փշրում են սիրոյ երազը: Թիֆլիսում
ծնողներին յայտնի է դառնում աղջկայ
կապը հիւանդ բանաստեղծի հետ: Սա-
թենիկի վերադարձը դառնում է անհնա-
րին, եւ նա յուսահատ մեկնում է Թաւ-
րիլ ասուցչութեան: «Մեր նամակագրու-
թիւնը, — գրում է Սաթենիկը, — շա-
րունակուում էր մէկ տարի անոյս: Միա-
մանքոն յուզուելով, տանջուելով չուզեց
այլեւս ինձ եւս յուզել: Նա, սիրոյ ան-
սահման կարօտը սրտում, լուեց յուսա-
հատ...»:

«Անա այդպիսին էր այդ ազնիւ, հր-
պարտ, զգայուն, նուրբ, մեղմ, փափկա-
նըկատ, հրաշալի մարդը, որին ես հան-
դիպեցի, նամաչեցի, եւ որը անչափ դժ-
բախտ վախճան ունեցաւ...»:

**

...1914ի Ապրիլին գրած նամակում
Իսահակեանը Միամանքոյին հրաւիրում
է աշխատակցել հայ-գերմանական ընկե-
րութեան հրատարակութեամբ Բեռլինում
լույս ընծայուող «Մետրոպ» ամսագրին.
«Ամէնից առաջ խնդրում եմ, քանի այդ-
տեղ ես, մի բանաստեղծութիւն ուղար-
կիր ոչ այս համարի համար, այլ երկ-
րորդ համարի, որ լոյս պիտի տեսնէ Յու-
նիսին: Առաջին թուի համար չէ, քանի
որ գերմաներէն առաջին թուի մէջ թարգ-
մանօրէն դնելու եմք քո «Հայրենի աղբիւ-
րը», ուրեմն ժամանակ ունես գրելու»:

Իսահակեանը ամսադրի խմբագրութեան անդամ էր եւ ցանկանում էր տաղանդաւոր ուժերը համախմբել ամսադրի շուրջը:

Նոյն նամակում նա հեռաքրքրում է Սիամանթոյի անձնական կեանքով եւ սրաի գաղտնիքներով: Քերթողին այդ շրջանում հրատարակել էր մի հայ գեղուհի. դա Ռեթէսս Պէրպէրեանի դուստր օրիորդ Մաննիկ Պէրպէրեանն էր: Վերջինս յայտնի է իբրեւ դրական ձիրքով օժտուած արձակագրուհի. նրա գրչին են պատկանում մի շարք գողտրիկ արձակ բանաստեղծութիւններ, որ իւրայատուկ քնքշութեամբ պատկերում են բնութիւն, սէր, մանկութիւն, մտերմիկ տեսիլներ, եւայլն («Կարօտ», «Աստղեր եւ արցունքներ», «Ուրուականներ»): Բացի այդ, նա օժտուած էր երաժշտական ձիրքով, ունէր հրաշալի ձայն եւ ազգային տարազով զգեստաւորուած համերգներ էր տալիս՝ իր շուրջն ստեղծելով մեծ հմայք: Երգում էր Կոմիտասի «Ալագեագ»ը, «Կելեր», ցոլեր»ը, «Կոունկ»ը եւ մի շարք հայ ժողովրդական կամ եւրոպական երգեր: Այսքանը բաւական էր զրուելու Սիամանթոյի հեռաքրքրութիւնը, որը Մաննիկին ծանօթ էր Պոլսից, զեւ պատանեկութեան շրջանում:

Բանաստեղծի «գաղտնիքները» գիտէր Իսահակեանը, եւ նա գրում է իւրայատուկ պայծառ, անկեղծ հիւմորով. «Մաննիկի հետ ի՞նչ հոգեկան աստիճանի վրայ ես: Նամակներ կը գրէ՞, հա՞շտ էֆ: Ի՞նչ կայ, ինչպէ՞ս է նրա առողջութիւնը: Ե՞րբ ես Փարիզ գնալու կամ ե՞րբ ես Պոլիս գնալու: Խնդրում եմ անյայտագ ու դարկես օր. Մաննիկի հասցէն. մէկ որ պիտի նիւթ խնդրեմ նրանից, երկրորդ որ, քանի թեռլին եմ, ոչ մի լուր չունիմ, նամակ գրեմ, ֆէֆն հարցնեմ»(10):

Մի փաստից պարզ երևում է, որ Սիամանթոյի մտերմութիւնը օր. Մաննիկի հետ շարունակուում է մինչեւ վերջ: 1915ի Յունիսին Այաշի բանտից եզրօրը գրում է. «Սկիւտար օր. Մաննիկին պիտի երթայիր, եթէ գացիր, ինձի տեղեկութիւն տուր. այս թղթատարով անոր ալ փարս մը կը դրկեմ»(11):

Բանաստեղծի սրտի գաղտնիքները ամբողջովին լուսարանում են քրոջ՝ Զարուհի Համբարձումեանի նամակով: Պէրպէրեան եւ Յարձանեան ընտանիքները ապրում էին Սկիւտարում եւ զրեթէ հարեաններ էին այն ժամանակից, երբ Սիամանթոն սուլորում էր Ռեթէսս Պէրպէրեանի գալրոցում. «Սկիւտար կը բնակէիք եւ կը նաեջնայի Պերպէրեանները: Շահնուր իր ամէնէն մտերիմն էր, նաեւ Մաննիկը, որ երիտասարդ բանաստեղծուի, հմայիչ եւ լաւ երգչուհի մը, միակ անձն է, որուն հետ կրնամ հաեոյժ գգալ կ'ըսէր եւ կարծեմ platonique սիրով մը կապուած էր Մաննիկին, որ իր հմայիչ ձեւով զինուած էր եւ հպարտ, որ Սիամանթոյի միակ բարեկամուհին էր: Այս եղած է միմայն իրենց բարեկամութիւնը: Եղբայրս չէր մտածած երբեք մոռննութեան մասին, եւ որքան կը յիշեմ, Մաննիկը եղած էր Ակնուցիի սիրուհին այդ օրերուն»:

ՀԵՆՏՈՐ ԹՇՏՈՒՆԻ

(1) Այժմ՝ տիկին Սաքենիկ Սարգսեան, գաբգացած, վաստակաշատ մի ուսուցչուհի, որ ապրում է Երեւանում, իբրեւ անցեալի կենդանի բեկոր: Ուսուցչական աշխատանքը սկսել է Թարսիզում, եղել է Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի առաջին կին-ուսուցչուհին (նրա մօտ է սովորել Ա. Միկոյեանը):

(2) Զապէլ Համբարձումեանի 17/6 1963ի նամակը Փարիզից:

(3) Ռուբէն Սեւակ, «Բժշկին գրքէն փրցուած էջեր եւ քերթումներ», Փարիզ, 1946, էջ 120:

(4) ԳԱԹ, Սիամանթոյի ֆոնդ:

(5) Նայն տեղը:

(6) ԳԱԹ, Սիամանթոյի ֆոնդ:

(7) Վերջերս այդ յուշերը գրել եւ յանձնել է գրական քանգրամին: Սաքենիկ Զաղեթեան - Սարգսեան, «Սիամանթոն իմ յուշերում», Երեւան, 1965, 24/IV:

(8) Բանաստեղծը դիտաւորութիւն է ունեցել Զաղեթեանի փոխարէն Շաղեթեան ասել:

(9) Այս եւ յաջորդ փառուածքները բերում ենք Սաքենիկի յուշերից («Սիամանթոն իմ յուշերում», ԳԱԹ, Սիամանթոյի ֆոնդ):

(10) ԳԱԹ, Սիամանթոյի ֆոնդ, Ա. Իսահակեանի նամակը Սիամանթոյին, 21 Ապրիլի, 1914:

(11) «Կեանք եւ արուեստ», Փարիզ, 1936, № 10, էջ 259:



Կ Ո Ն Տ Ո Լ Ի Ն

Մ Է Զ ...

Վենետիկեան լուսնոտ գիշեր...

Կոնտոլի մը մէջ միմակ եմ, ու հետս ունիմ սպիտակ հոգին իմ մեռած բանաստեղծ բարեկամիս:

Ան, իր արտայայտիչ ձեւերուն մէջ, ընկողմանած է քովս, կոնտոլին սեւ բարձերուն վրայ, եւ իր ազնուական ձեռքերը իմիմներուն մէջ են:

Ան կը սիրէ զիս սիրով մը այնքա՛ն մեծ, որ ես անկէ ի վեր կը հաւատամ յաւիտենապէս՝ սիրոյ հրաշքին: Եւ իմ շնորհապարտ սիրոս կը գրկէ իրենը:

Մենք կ'երթանք կոնտոլին ուրիշ, Վենետիկի լուսնոտ ջուրերուն վերայէն եւ բանաստեղծին հոգին այնքա՛ն կեանքատ է եւ այնքա՛ն գորովոտ, որ ամբողջովին սէրով կը լեցնէ Վենետիկեան այս խորունկ գիշերը...

Ձեռքերը իմիմներուս մէջ, ան կը նայի իր իմացական աչքերով Վենետիկեան հրաշալիքին, լոյսերով ու խորհուրդներով լեցուն: Բայց անոր հոգին կ'երթայ ետ եւ կը տանի զիս իր հետ, դէպի Արեւելի մեր հին պարտէզը, ուր լուսնակ գիշերներ, երեք նոնիներուն կապոյտ շուքին տակ մենք կը մնայինք անորոշ ու բարախուն...

Բայց, այս գիշեր, ես կ'ուզեմ, որ ան իր բանաստեղծի ազնուական ձեռքերը իմիմներուս մէջ, մնայ ամբողջովին Լակունային խորունկ ջուրերուն վրայ, եւ Վենետիկեան գիշերը, իր լուսնկայով ու աստղերով, փայլփայլ մեր վրայ...


ՄԱՆՆԻԿ ԳԵՐԳԵՐԵԱՆ

Շ. Տ Ա Ս Ն Ա Պ Ե Տ Ե Ա Ն

Ֆրանսական զրահանութեան ներկայ դարու արտակարգ տաղանդներէն Անթոնէն Արթօ անծանօթ անուն է մեր իրտիրոնութեան մէջ եւ որքան կը յիշենք, մեր երիտասարդ աշխտակիցին այս փորձը առաջին դրութիւնն է մտքի այդ յախուսն արկածախնդիրն մասին:

Շուշիկ Տանապետեան Արթօյի աշխարհը բացող իր փորձին ընկերացուցած է նաեւ անկէ կատարուած թարգմանական էջ մը, բայց որպէսզի մտրդկային կացութեան տաղնապալի երեսներուն հետ ունեցած Արթօյի խոր արնշուքիներն ու ոճը աւելի լայն ծառայի մը վրայ մատուցուին ընթերցողին, տեղ բացինք թարգմանական երկու նմոյշներու եւս, որոնք շատ մատչելի բաներ չեն թէն, բայց ուշադիր ընթերցողին բաւարար զաղափար կու տան արտասովորին մասին:

Վերջին երկու նմոյշները առնուած են «Գէնգէն Լիթերէր» Երկշարաթաթերթի Շժական թուականներու թիւերէն:



ԱՆԹՈՆԵՆ ԱՐԹՕ ԵՒ ԱՏԵՂԵԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԸ

«Ոչնչութիւնը բամաստեղծներուն է, որ կը պատկանի»

Կամ՝ ինչ պէտք է ընել դռներու (վերադռներու) տիեզերքի եւ մարդ էակի ջրղարկուած, բայց դոյ կապակցութիւնը: Կեանքի իրականութեան հետ. ու նաեւ թեքսթի ընդմէջէն: Ինչպէս ըսել, թէ Գիտութիւնը Բանաստեղծութիւն կը նշանակէ (եւ փոխադարձորար): Ապա, վերջապէս՝ ինչպէս ապրիլ մարմինիդ վրայ Ֆիզիքապէս տպուած ջու մտածողութիւնդ, ու տակաւին՝ ստեղծել, գրել, ճանշարով կարուստը, ոչ էութիւնը, անկէ ըլլալով, սերելով...:

Սկսելու համար: Արթօյի յաճախ կոտորակեալ խօսքի ներքին արամարանական կառոյցը ինքզինք կը դրսեւորէր արեւմտեան մշակոյթի հաստատուած դրոյթի ուժական ըննադատութեամբ: 1936ին գրուած «Թատրոնն ու իր կրկնբեւոյթը» դորձին յառաջաբանով՝ Արթօ կը ձաղկէր կեանքէն անջատ, ուրմճն՝ առանց արգիւնքի, մշակոյթի մը դադարարը: Պալիի պարարուեստի մասին խօսելով՝ ան կ'ըսէ. — «Արուեստի հանդէպ մեր ունեցած անշունչ եւ անհետաքրքիր գաղափարին, վաւերական մշակոյթ մը կը եկապարէ մոգական եւ ուժգնօրէն եսակեդրոն, այսինքն՝ շահագրգռուած գաղափար մը»:

Արդ, ինչու, ըստ Արթօյի, քատրոնը իրականութեան մէջ ծննդոցն է ստեղծագործութեան: Բանի որ թատրոնը կը պատկերէր իրականութեան կենսական խաղը, թատերական բեմը կ'ըլլար դիցաբանական այն վայրը, ուր

կը յայտնուի գոյութիւնը (ստեղծագործութիւնը), սկզբնական ոչինչէն, ան-
 գոյութենէն բխած: Հոն է, որ առաջին անգամ ձեւ կ'առնէ ստեղծագործա-
 կան խաղի ընթացքը: Հոն է, որ կը ստեղծուի (կը վերաստեղծուի) կեանքը:
 Որուն կեզրոնը՝ ղերասանի մարմինը:

Բայց ինչպէ՞ս փորձել սահմանել ստեղծագործական այնչափ բաց ու
 անեզր իրականութիւն-ընթացքը: Պայման էր նախապէս ընտելանալ Արթոյի
 թեքութեւն մէջ ի յայտ եկող կարգ մը յղացքներու հետ, այսպէս՝ բիւրե-
 դացած մարմինի Ֆիզիք յղացքը, վերացականի ու շօշափելիի անքակտելի
 կապը, եւայլն...

Արթօ կ'ըսէր. «Թատրոնը պէտք է դառնայ տեսակ մը փորձառական
 ապացոյց առարկայականի եւ վերացականի նոյնութեան», որովհետեւ նիւ-
 քէն կը բխի մտայինը, հոգեկանը: Ահա թէ ինչու, ըստ իրեն, ղերասանի
 մարմինը, սկզբունքայնօրէն ու Ֆիզիքապէս, բնակեցուած է ղիցարանական
 արժէքներով, արժէքներ, զորս պէտք է ղրսեւորել խաղին մէջ: Արեւմուտքը
 ցաւազնօրէն կտրատած ու բաժնած է այդ մէկ ամբողջութիւնը. Արթոյի
 փորձը կը կայանար կոտորակեալ սիւքեմի միաւորման ու նոր՝ միաձոյլ
 մարմինի մը յայտնաբերման մէջ: «Թատրոնն ու անգրութիւնը» յօդուածով,
 ան կը գրէ. — «Մարմինը չենք բաժնէր հոգիէն, ոչ ալ զգայնութիւնները՝ ի-
 մացականութենէն»: Արթոյի մտածողութիւնը Ֆիզիքապէս տպուած է իր
 մարմինին վրայ. նաեւ թեքութի մարմինն, ղրութեան էականութեան միջ-
 նորդութեամբ: Արդարեւ, թեքութի է այն յոգնակի վայրը, ուր կը ստեղծու-
 գործուի ստեղծագործութիւնը ի'նք, երբեք զոց, մշտաբաց եւ ազատ: Ազատ՝
 ու միաժամանակ կրկնեւելոյթը քու սեփական ձայնիդ, ետ մղուած խօսքիդ:

Մեքսիքա կատարած իր ճամբորդութենէն ետք, Արթօ ղրեց «Թարա-
 հուամարա»ները խորագրեալ երկը, ուր կը յայտնաբերուին իր կարգ մը կա-
 րեւոր մտածումները: Հոն է, որ կը կարգանք. — «...Մոգերը կը խարտեն
 երկու սկզբունքներու խառնուրդը կամ բաժանումը, եւ զանոնք կը խարտեն
 վերացականին մէջ, այսինքն՝ սկզբունքին մէջ: Երբ, աւելի վար, այս եր-
 կու սկզբունքները, մարմնացեալ, կը հանգչին նիւթին մէջ, այսինքն՝ շօշա-
 փելիին» (էջ 52): Այսպէս է, որ շօշափելի կը դառնայ ամէնէն վերացական
 գաղափարն իսկ: Գաղափարները նիւթական են, կան ու կ'ապրին: «Գաղա-
 փարները գործարաններ են», կ'ըսէր Արթօ:

Մարմինն ու մտածումը յարատեւ յարաբերութեան մէջ են. անդադար
 նորոգուող կապ մը կայ անոնց միջեւ: Մտքի եւ նիւթի տրամասութիւնն է
 (dialectique), որ կ'ընթանայ ու կը բացուի անսահմանօրէն: Յեղափոխական
 է այս ընթացքը ու կը տապալէ շատ մը ընդունուած տարազներ:

«Իսկական քատրոնը կը ծնի, բանաստեղծութեան նման, բայց այլ
 նամբաներով, ձեւաւորուող անիշխանութենէ մը»:

Հոս կը ղրսեւորուի ստեղծագործական ընթացքի անդուլ պրոցեսը:
 Զեւական ստեղծագործութիւնը (la création formelle) կարելի է նկատել իբր

ոչինչն սնած իրականացումի մը խաղը: Այդ յայտնաբերուածն է, ինչպէս Արթօ կ'ըսէ. — «...Այն սկզբնական փիլոսոփ, որմէ շունչը երբեք չէ հեռացած»: Գտնելու է առաջին վայրկեանը, ուր յայտնաբերուածը եղաւ, ստեղծուեցաւ: Որեւէ ստեղծող ափսօսկոյնական գայաթեան պատկերն է անկասկած: Հոս այլևս յտակ կ'երեւի, թէ ստեղծադործական արարքը անբաժանելի է այն ոչինչէն, որմէ կը սերի (կը սևոփ): Ամէն ստեղծուած բան կը կանգնի քառային իրականութեան մը վրայ, որ անէութիւնն է, չիքը: Ստեղծագործական որեւէ աքթ, Արթօյի աչքին, յարատեւ խաղ մըն է այլազան ուժերու, որոնք կը հունուորուին ու կը տարբալուծուին նոյն ատեն: Գործող բնականութիւն մը, յարատեւ շարժումն, փոխառող և կենդանի, ուր «ստեղծուած քան ի ստեղծուի»:

Պրոցեսը կ'ենթադրէ հակա-ներու հանդոյց, ազուցում: Անիկա յոդնակի է ու միշտ ներկայ: «Թարահումարա»ներու թեքսթին մէջ կը կարգանք.

«Սիկուրիի ծէար ստեղծագործական ծէս մըն է, որ կը բացատրէ, թէ ինչպէս գոյակներ են պարապին մէջ, եւ ինչպէս դուրս եկան իրականութեան մէջ եւ եղան» (էջ 23): Կամ՝ «...Ծննդոցի ու փառսի պատմութիւն»... (էջ 43): Միշտ ձգտում դէպի գոյութիւն, կասարելութիւն, ու նաեւ ձգտում դէպի մահ, կազմալուծում: Բացասականութիւնն իսկ կ'ըլլայ պրոցեսի կազմաւորման սկզբունքը, այսինքն՝ ստեղծուող թեքսթի արամբանականութիւնը: Սօսքը ձգենք Արթօյի.

«Իրադութիւն մը վերածելի չէ պարզ ու վերջնական տարրի մը: Պէտք է գայն դիտել շարժումին մէջ, քանի որ շարժումին մէջ է, որ ապրուած է եւ անկէ դուրս գոյութիւն իսկ չէ»:

Հոս, նշանները կը բացուին իմաստի յոդնակիութեան մը: Ու անսահմանորէն բաց. այս ընթացքը կրնայ միայն ծնանիլ շարժումն եւ ազատագրուած ենթակայ (sujet) մը: Բացասականութեան յղացքը, վերջ ի վերջոյ, կը դառնայ արտադրիչ (եսի եւ գրութեան արտադրողականութիւն) ու անկէ է, որ կը ծնի իր լեզուին տիրապետած ենթակայն: Լեզուն (նիւթական, անտաշ) կը հիմնուի ամէնէն անգիտակից տարրերուն վրայ, իրականին վրայ, որ մոռցըւած է, կորսուած, ետ մղուած (refoulé): «Ոնր գարշանք կը պատճառէ ինծի... երեսուն տարիներէ ի վեր, որ կը գրեմ, տակաւին չեմ գտած (ոչ միայն խօսքս կամ լեզուս) այն գործիքը, գոր չեմ դադրած ստեղծելէ»:

* * *

Պէտք է յայտնել լեզուն. անոր վաւերական հիմունքն է մարմինը, որ պիտի ըլլար պար, անգուլ շինուող, մաքուր եւ խօսուն: Կշտութաւոր վայրը հաճոյքի, ուր կարենաս մտածումդ ապրիլ՝ առանց բարդոյթի: Ստեղծադործութեան ընթացքը հոս կեանքն իսկ է, մարմինն ու հոգի:

Իր վերջին երկերուն մէջ, Արթօ միշտ կը յիշէ բիւրեղ ու միացեալ մարմինի իրականութիւն-յղացքը: Ան կը հրաւիրէ

Գոյակը (մարդը)
 Ելլելու
 Իր
 մարմինին հետ

հետեւելու երկինքին մէջ այս նոր, արտասովոր եւ քաղաքային Աստուածայայտնութիւնը :

Կամ՝

Երբ իրեն շինէք մարմին մը՝ առանց գործարանի
Այն ատեն զինք ձերբազատած պիտի ըլլաք բոլոր մեքենականութիւններէն եւ վերադարձուած իր իսկական ազատութեան :

Այսպէս է, որ ինքզինքդ կը գտնես առանց Աստուծոյ էութեան մը մէջ, էութիւն, որ քեզ կ'առնէ ու կը ծնի (նոյն ատեն), այնպէս՝ ինչպէս եթէ դուն քեզ ծնէիր, այնպէս՝ ինչպէս, ամէն ժամ, ինքզինքդ կը ծնիս ոչնչութեան մէջ եւ անոր դէմ («Թարահումարա», էջ 15) :

Ահա թէ ինչու

ես, Անթօնէն Արթօ, իմ գաւախ եմ, իմ հայրս,
իմ մայրս,

եւ ինքզինքս

քանի վերջաւորութիւնն է սկզբնաւորութիւնը :

Ոչէութեան եւ յայտնաբերուած դոյութեան բախումը ձեւական չէր կրնար ըլլալ լոկ : Ան կը յանդի, դէթ սկզբունքային գետնի վրայ, հակասութիւններու վերացման : Քատուր կը վերածուի որոշ տրամաբանութեան, քանի որ ստեղծագործական յարատեւ ընթացքի գործնական մտապատկերումը կ'ըլլայ յեղափոխութեան ի հաշիւ գործ դրուած յղացք : «Մեքսիկայէն վերջ ի վերջոյ յեղափոխութեան նոր յղացք մըն է, որ կը սպասուի» : Արթոյի մօտ չկան վերջնականօրէն ընդունելի եւ ընդունուած առանձնաշնորհաւ տարազներ, դիրքեր, այլ կայ ճամբորդութիւն մը, բացարձակօրէն բաց, գաղթ մը, եթէ կ'ուզէք : «...ես՝ որ միշտ շարժումն ու ստեղծագործութիւնը տեսնել եմ երբեք յստակօրէն գծուած, երբեք վերջնականօրէն տեղաւորուած, երբեք սահմանուած ուժականութեան մը մէջ» :

Քաղքէնի դադարաբանութեան դէմ Արթօ կ'արտայայտուէր առանց վախի. — «Ծնած էք գուգադիպութենէն, ոչնչութենէն, կղկղանքէն՝ գոր կ'ուզէք օրէնքի վերածել եւ որ կը վախնայ միայն անկանոնութենէն, գուգադիպութենէն, կղկղանքէն ու ոչնչութենէն, այսինքն՝ քաղքէնիութենէն» :

**

Թէ ինչ են մտածումն ու իր հակա-ն : Արդէն ըսուած է եւ կրկնուած, թէ բերեղացած երկը ոչինչին վրայ է, որ կ'ըլլայ : Նոյնը կ'ըսէր Արթօ. — «Մտածումս, երբ ըսելիք կամ գրելիք բան մը ունէի, ամէնէն աւելի արգիլուած էր ինձի...» : Ահաւոր է այս դիտակցութիւնը, սակայն իր պատճառով է, որ մարմինի մը մէջ, լեզուն կը շինուի : Արթոյի խօսքը բացարձակ է հոս եւ կը լուծէ հակա-ները՝ փորձելով գտնել այն այլ կէտը, երրորդ եւ սկզբնական, ուր ստեղծագործութեան ընթացքը իսկականօրէն կ'ըլլայ :

Գրել՝ կը նշանակէ ազրիլ, հողորդակցութեամբ : Մա՛նաւանդ՝ երբ գիտես, թէ «մտածումդ չես կրնար ունենալ : Պատկերներ ունիմք՝ մտածելու համար, բռնել ունիմք՝ այդ պատկերներուն համար»... : Ամէն մտածում ի սկզբանէ կորուստի դատապարտուած տարր է. կորուստը առյաւէտ արձանագրուած է հոն : Արթօ չէր հաւատար ներշնչման : «Ներշնչում չկայ... այլ՝ ամբողջական բացակայութիւն մը, իսկական նուազում մը» :

Այս ինքնիրմէ փախչող մտածումը, այս կորուստը, Արթուրի խօսքին կեղբորնական մտասուկներէն է անպայման: Սկզբնական չգոյր թեքութիւն մէջ է, որ կը խօսուի (կը գրուի):

«Ամբողջ գործս կառուցուած է եւ կրնայ միայն կառուցուիլ ոչինչիմ վրայ»: Ահա այն շարժումը (procès), ուր կը գետեղուի, կ'իմաստաւորուի Արթուրի փորձառութիւնը. այս շարժումը տրամախօսութիւնն է գոյութեան եւ ան-գոյութեան, նախնական քաստին եւ ստեղծագործական աքթին: Անէութիւնը կ'ըլլայ ա'յն վերօ կէտը, սրուն շուրջ կ'երեւնայ, կը յայտնուի Իրա-կանութիւնը:

Արթօ, իր թեքութեան մէջ, յաճախ կը խօսի կորուստին մասին, մտա-ծումի փախուստի եւ անոր դժուար կաղմաւորման շուրջ: Կարծես ան դպած ըլլայ, իրմէ անկախ և փաթեթիք սխալմունքով մը՝ այն կէտին, ուր մտածե-լը միշտ ալ արդէն սակարկի չմտածել է, անկարողութիւն՝ իր բառով, եւ որ կենսական է մտածման, բայց նաեւ անկէ կ'ընէ ծայրայեղ ցաւ մը, կորուստ մը... (Մ. Պլանչօ, «Գալիֆ երկր»): Ահա թէ ինչու «գոյութիւնը գոյութիւն չէ, այլ՝ գոյութեան պակասը» (Ա. Արթօ):

Ան կը գրէր պարապին դէմ, նաեւ փախչելու, ազատուելու համար ան-կէ: Բայց նաեւ կը գրէ «Գիմագրաւելով զայն (կորուստը) եւ փորձելով ար-տայայտել այդ եւ անկէ հանել իր արտայայտութիւնը՝ ԼեճՈՒՅ» (Պլանչօ): Խօսքը Արթուրին կ'ուղենք վերադարձնել:

«Կ'ուզէի այլեւս անցնիլ այս բացակայութեան, ունայնութեան կէտը»: Ունենալու համար կեանքը, տառապանքէն ալ անդին:

ՇՈՒՇԻԿ ՏԱՄԱՊԵՏԵԱՆ

«Կրկին անգամ ձեզի կ'ըսեմ, երբեք չեմ կրցած ապրիլ, մտածել, բնա-նալ, խօսիլ, ուսել, գրել:

Եւ եթէ գրած եմ, միայն ըսելու համար, որ ոչինչ ըրած եմ, ոչինչ կրնայի ընել, եւ ընելով որեւէ բան՝ իրականութեան մէջ ոչինչ կ'ընէի: Ամ-բողջ գործս կառուցուեցաւ, եւ ուրիշ կերպ ալ չէր կրնար ըլլալ՝ այդ ոչեութեան վրայ,

այդ կոտորածին վրայ, այդ մարած կրակներու չորցած ճիչերու եւ սպանդներու խտնակութեան վրայ,

ոչինչ կ'ընեն, ոչինչ կ'ըսեմ, բայց կը տառապին, կը յուսահատին եւ կը պայքարին

— Պիտի գնահատուի՞, պիտի դատուի՞, կռիւր պիտի արդարացուի՞ .
Ոչ:

— Զայն պիտի անուանե՞ն,
Կրկին ոչ,

Կռիւր ըսել, ոչնչութիւնը սպաննել կը նշանակէ, թերեւս:
Բայց մա'նաւանդ կեցնել կեանքը

Կեանքը երբեք պիտի չգաղթի:

(Անթոնէն Արթօ, «ՆԱՄԱԿ»՝ շարժուած Փ. Ուաթսընի):

Ա. Ա Ր Թ Օ

ԱՆՀԱՏԻՆ ՆՈՐ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ

Կ'ըսեմ ինչ որ տեսած եմ եւ ինչ բանի, որ կը հաւատամ. եւ ով որ ըսէ, թէ տեսած չեմ այն՝ գոր տեսած եմ, հիմա՛ կը պատռեմ անոր գլուխը:

Որովհետեւ ես անգիջող Անասուն մըն եմ, որ այսպէս պիտի շարունակէ, մինչեւ այն ատեն, երբ ժամանակը դադրի ժամանակ ըլլալէ:

Ո՛չ երկինքը, ոչ ալ Դժովսքը, եթէ գոյութիւն ունին, կըրնան ոչինչ ընել այս բրտութեան դէմ, գոր պարտադրած են ինծի, հաւանաբար որպէսզի ծառայեմ իրենց... Ո՛վ գիտէ:

Յամենայնդէպս, պատռտելու համար զիս այդ ձեռով:

Ինչ որ է՝ կը տեսնեմ վատահօրէն: Ինչ որ չէ՝ պիտի կատարեմ, պարտական եմ գայն կատարելու:

Երկար ատենէ ի վեր զգացած եմ Պարսպը, բայց որ մերժած եմ նետել ինքզինքս պարսպին գիրկը:

Վատ եղած եմ, այնպէս՝ ինչպէս իմ տեսած բոլոր բաները:

Կը կարծէի, թէ աշխարհը կը մերժէի, հիմա սակայն գիտեմ, որ Պարսպն էր, որ կը մերժէի:

Որովհետեւ գիտեմ, որ այս աշխարհը գոյութիւն չունի եւ գիտեմ, թէ ինչպէս գոյութիւն չունի:

Ինչ որ ցայժմ տանջած է զիս, Պարսպը մերժելու համար էր:

Պարսպը, որ արդէն մէջս էր:

Գիտեմ, որ ուզուեցաւ զիս Պարսպով լուսաւորել եւ ես մերժեցի թոյլ տալ, որ լուսաւորեն զիս:

Եթէ զիս հարոյկի մը վերածեցին, այդ իմ ծնած ըլլալս բուժելու համար էր:

Եւ աշխարհը իլեց ինձմէ ամէն ինչ:

Պայքարեցայ, որպէսզի փորձեմ գոյութիւնս պահել, համակերպելու համար ձեւերուն (բոլոր ձեւերուն), որոնց աշխարհի մէջ գտնուած ըլլալու ցնորական պատրանքը իրականութեամբ զգեստաւորուեցաւ:

Այլեւս չեմ ուզեր պատրանահար մը ըլլալ:

Մա՛հ աշխարհին. մեռած եմ աշխարհին համար. մեռած այն բոլո՛ր բաներուն համար, որ աշխարհ կու տայ միւս բոլորին, ինկած վերջապէս, ինկած, կանգնած այն պարսպին մէջ, գոր կը

մերժելի. մարմին մը ունիմ, որ կը հանդուրժէ կեանքը եւ դուրս կու տայ իրականութիւնը:

Չանձրացած եմ լուսնի այս շարժումներէն, որոնք ինծի ցանկալ կու տան ա՛յն՝ գոր կը մերժեմ եւ կը մերժեն ա՛յն՝ գոր կը ցանկամ:

Պէտք է վերջ տալ: Պէտք է կապերը խզել այս աշխարհին հետ, որ իմ մէջս գտնուած էակը, ա՛յն էակը, որ այլեւս չեմ կրընար ցանկալ, եթէ գայ՝ ես կ'իյնամ Պարապին մէջ, այդ էակը միշտ մերժած է:

Եղաւ: Ինկած եմ իրապէս Պարապին մէջ այն օրէն ի վեր, երբ ամէն բան, — այն բաները, որոնք աշխարհը կը կազմեն, — վերջապէս յաջողեցան յուսալքել գիս:

Որովհետեւ աշխարհի մէջ չըլլալդ կը հաստատես այն աւտեն, երբ անիկա իրապէս վերջնօրէն լքած է քեզ:

Մեռելներ. միւսները չեն անջատուած. անոնք տակաւին կը դառնան իրենց դիակներուն շուրջ:

Եւ ես գիտեմ, թէ մեռելները ինչպէս կը դառնան իրենց դիակներուն շուրջ, որոշապէս երեսուներեք դարերէ ի վեր, որ իմ կրկնօրինակս չէ դադրած դառնալէ:

Ուստի, գոյութենէ դադրած ըլլալով՝ ես կը տեսնեմ ինչ որ գոյ է:

Ես իրապէս ինքզինքս նոյնացուցած եմ այդ էակին հետ, ա՛յն էակին, որ երբեք չէ դադրած գոյութիւն ունենալէ:

Եւ այդ էակը ամէն ինչ պարզեց ինծի:

Ես գիտէի ատիկա, բայց չէի կրնար ըսել, եւ եթէ հիմա կը յաջողիմ ըսել գայն՝ ատիկա անոր համար է, որ ես լքած եմ իրականութիւնը:

Իրական յուսահատ մըն է, որ ձեզի կը խօսի եւ որ աշխարհի մէջ ըլլալու երջանկութիւնը կը քանչնայ միայն հիմա, երբ այլեւս լքած է այս աշխարհը եւ անկէ բացարձակօրէն անջատուած:

Մեռելներ. միւսները չեն անջատուած: Անոնք տակաւին կը դառնան իրենց դիակներուն շուրջ:

Ես մեռած չեմ. բայց անջատուած եմ:

Պիտի ըսեմ ուրեմն ա՛յն՝ գոր տեսած եմ, եւ այն՝ որ կայ:

Աստղագէտներուն պէս, որոնք կարդալ չեն գիտեր, ես գայն ըսելու համար Թարոնները պիտի հիմ բռնեմ:


ԱՆԹՈՆԷՆ ԱՐԹՕ

(Հատուած — 1937)

Ա Ն Թ Ո Ն Է Ն Ա Ր Թ Օ

Մ Տ Ե Ր Ի Մ

Ն Ո Թ Ե Ր



Խօսակցութիւն,
 հրաժարում,
 կարեւորութիւնը, որ անոնց կ'առընչեմ,
 տառապանք,
 լոյս,
 կակազում,
 թոքովանք,
 մտքի ազատ ճախրանք,
 չփնտռել իր մտածումը,
 ոչ ալ մտածել,
 դիրութիւնները, որ ծնունդ կ'առնեն այդ
 խօսակցութենէն,
 ինձի կը վերադարձնեն
 մարմինի անդամներ,
 վիճակներ,
 յիշողութեամբ կը վերականգնեմ
 յարաբերութիւններ :
 Պայծառատեսութիւնը կը փոխարինէ հարստութիւնը,
 կը կիրարկէ բաղդատութիւններ, այլոց յարաբերութիւնները
 (բանի որ անեղծ է) ;

կ'ոգեկոչէ երեւոյթներ, սկզբունքներ, կարելիութիւններ, դէպքեր,
 ինչ որ ես ինքս ալ կը մտածեմ՝ հետագային կը վերադառնայ ինձի :

Յետոյ գործունէութիւնը,
 ամէն ինչ մոռցուած,

ինչպէ՞ս մտածել,
 տեսնուածը կը հրամցուի,
 ասիկա ծուխ է, շունչ, չի կառչիր
 ընդհանրական գիտակցութեան,
 ցաւագին շփոթ,
 շուարում,
 շփոթը լուծել,
 կէտը, ուր բռնուած ես,
 կը հեւաս — սարսափ,
 անձկութիւն,
 կարօտախտը,
 դեռեւս չեղեալը,
 մահը:

Անօգուտ է ամէն ինչ (արժէքը),
 ոչ մէկ բան իմաստ ունի, ամէն ինչ անօգուտ,
 անարժէք,
 տրուած ըլլալով, որ ծնունդ չէ առած:

Քերթնածները, գորս պիտի գրես,
 վիճակներու եւ զգացումներու հարուստ
 արտայայտութիւններ, կենսական յիշողութեամբ
 վերագործուած, որ իրականութեան մէջ կեանքի կը վերածուի,
 հարկադրանք, բխում,
 հարստութիւնը, գոր հոն պիտի տեղադրես,
 նշմարանքներուն լոյսը:

**

Տրուած ըլլալով, որ նարտարարութեան անհանալու սահմանուած ըն-
 կերային ամէն կարգուսարք, որմէ ոչ իսկ գաղափարները կը խուսափին, ա-
 մէն ինչ, որուն նպատակը եւ նակատագիրը ուրիշ ոչինչ է, եթէ ոչ *մտածու-*
մը, նայնիսկ հիմնական կէտերու շուրջ, հետեւաբար խորապէս անշահախըն-
 դիր, այս բոլորը իրաւունք չունին ապրելու, եւ եթէ կ'ապրին՝ կ'ապրին
 շնորհիւ անսահման հնարագիտութեան:

**

Ժամանակը սպասումն է,
 հոն՝ ուր սպասում չկայ,
 ժամանակ չկայ,
 սպասում — յոյս,
 սպասում — յուսալքում,
 մէկը դէպի առաջ լաբուած,
 միւսը՝ դէպի ետ,
 մէկը, որ գալուստը կը տեսնէ,
 միւսը՝ փախուստը,
 այսուհանդերձ, փորձել միտքը կեդրոնացնել

Ժամանակի փախուստին,
 Ժամանակը խոյս չի տար,
 ոչ ալ՝ դուն,
 ամէն ինչ կը կեդրոնանայ, կը միտի
 դէպի ներս,
 այն ատեն ի՞նչ կը պատահի,
 ոչինչ, յարմարեցում առաւել յարմարեցում,
 յարմարեցման վրայ յենուած, հիմնուած պատկերացում,
 եւ՝ հակադարձաբար
 բայց իրականութեան մէջ, ոչինչ, փոշի՛,
 փոշի, բայց տակաւին սարսափելիօրէն իրական, որովհետեւ այժմ գի-
 տակցութիւնը կը մերկանայ, իր տաֆ, եռեւեփող անդամները ցուցադրելով
 սարսափազդու առկախման մը մէջ եւ որ դարձեալ *կը սպասէ* :

**

Քու հարազատ զգայարաններուդ չկարենալ յարմարելու պատճառաւ
 կուտակուած սարսափը կու գայ այն իրողութենէն, որ զգայարաններդ չեն
 ընթանար իրենց բնական հունէն :

**

Կը նշանակէ, որ *ամբողջը* չի հիմնուիր փնտտութի մը վրայ, փա-
 խուստին եւ անջատման նիւթը չէ առկախուած լեզուէն, եւ լեզուն՝ անկէ :

**

Զկարենալ դրսեւորել գայրոյթդ
 մէկու մը պէս, որ կը փնտռէ հակադրեցութիւններ,
 որոնք մեր իմացականութիւնը կը նշդեն,
 սարսափելի է նշմարիտ մտածումին կայունութիւնը, երբ անհետացած
 են բանաւոր յիշողութիւնն ու բառամթերքը :

Բանաւորին ներսը կատարուած փուլմանց միջեւ ապրող միտքը, որ
 իր կերպարաններուն փնտտութիւն մէջ է, կ'ուղղուի հակոտնեայ եւ ենթա-
 դրեալ ձեւերու, որոնք շատ գէշ կերպով կը փոխարինեն զինք :

Միտքը ինքզինք չի գտներ այն պոռթկումներուն ճէջ, որոնք կարենա-
 յին զգեստաւորել իր գայրոյթը եւ կը գոհանայ սխալանքներ փնտտելով, եւ
փայլատակումներ, որոնք կը ներկայացնեն զինք :

**

Գարնանային իրաւ օրուայ մը ֆա՛ղցր սրտմութիւն :
 Ազատագրուած միտքը կը լողայ օդին խաւերուն մէջ :
 Ճշմարիտ երաժշտութեան վտանգ,
 Անիկա կ'անջատէ,
 Կը ֆանդէ կապերը,
 Կը գտնէ նորերը :
 Երբ կ'արթննայ, կը գտնէ մայրը այնֆա՛ն, ներող, այնֆա՛ն խորունկ :

եւ այնքա՛ն տրտում ժպիտով, որ իր մանկական շապիկը կ'երկարէ անոր, թերեւս արիւնոտած. երաժշտութիւն մըն է, որ զինք թաւալած է մինչեւ հոն:

Ընթացող նաւակի մը եւ ալիքի մը նկարը, որուն տեսքը կտրուած է աւագին վրայ:

Այդ տեսակ մը թափուն վիճակը, ուր կը ննչեն գաղափարները եւ ուղեղին մէջ արագօրէն կը լուծուին նկարներու սաղմեր,

որոնք տակաւին չեն սկսած իրենց գործունէութիւնը:

Յստակութեան մարզին մէջ ենթագիտակցութենէն բխած նախադասութիւններն են միայն, որոնք կրնան ամբողջապէս փթթիլ: Բայց երբ պատահի, որ գիտակցութիւնը արթննայ, ըլլա՛յ... ըլլայ արտաքին միջամտութեամբ մը, այն ատեն է, որ կ'անդրադառնամ այն խոչընդոտներուն, որոնք կը հակադրուին մտածումիս: Անոնք միշտ նոյն բնոյթը կը կրեն.— գաղափարները կը պարպուին իրենց հիւթէն, իրենց շղուտ եւ զգացական բովանդակութենէն, իրենց կազմութեան կարգ մը պահերէն, իրենց առարկայացման մէջ, որպէսզի կարենանք ընկալել զանոնք, որպէսզի կարենանք անդրադառնալ անոնց կազմալուծման, նուազման: Ասիկա շատ մօտիկ նմանութիւն մը ունի ուշաթափման հետ, բայց անիւի նիշդ պիտի ըլլար ըսել՝ ֆիզիքական ուշաթափման, արտայայտութեան հոսանքը փոխադրող արգելիքի մը: Յանկարծական երկընտրանք մը կայ, հակասութիւն մը, եւ մտքի աշխուժութեամբ առաջ եկած պայծառատեսութիւնը բրտօրէն կ'անհետի, մտածումները կ'ազօտին՝ կենսական չես գտներ ի՛նչ մագնիսականութեան մը չփայտման հետեւանքով: Շփոթանքի հիմնական զգայնութիւն մը, որուն մէջ մարդ կը միտի մեղադրել միտքին քառքը, ըսել կ'ուզեմ՝ միտքը կը տեսնենք իբրեւ խանգարուած հսկայ զանգուած մը, մինչդեռ անիկա հսկայ պարսպ մըն է միայն. կը փորձենք դարմանել իր ժամանակաւոր անկարութիւնը, յուսալով, որ մտային կեդրոնական աշխատնով պիտի կարենանք անմիջապէս առողջացնել զայն: Կը փորձենք փոփոխութեան ենթարկել մտաւորակա՛ն գործունէութեան առարկան, կարծելով, որ այս ուղղութեան փոփոխութեամբ անիւի լաւ բնորդւած եւ նոր կալուածի մը մէջ պիտի կարենանք անոր վերադարձնել կենսունակութիւնը, բայց անոր կը հետեւի ահաւոր յուսահատութիւն մը, ա՛յնքան անիւի ահաւոր յուսահատութիւն, որ պարսպութեան մէջ կը գործէ եւ որ այլեւս ոչ մէկ յարաբերութիւն ունի ներքին զգացողութեան համատարած երաշտին հետ, բացարձակ յուսահատութիւն մը, տրուած ըլլալով որ միտքի գործունէութեան օրգանը ի՛նքն է աղէտահարը, թէ՛ միտքի հիմքուն մէջ մըտաւորականութեան աներ մը կայ և մտածելու գրգի՛ռն է, որ վերաւորուած է, որ կենսական մագնիսականութիւնը փախուստ կու տայ ամէն կողմէ, չի ցտկեր արգելիքին վրայէն, իր ակունքին մէջ իսկ կը չորնայ, իւրաքանչիւր սլացքին: Շփոթանքի և տկարութեան վերոյիշեալ կացութեան հետևանքով կատարւած վերլուծումը ամբողջովին անկարող է արդէն իսկ արտայայտելու այս խանգարումը. ցոյց տալու համար, թէ ինչպէս այս բոլորը անհատականութիւն մը կը կազմեն, կ'ենթարկուին այս փայփայման, եւ ինչպէս եսի զգացումն իսկ կ'ընկղմի այս անկարգութեան մէջ՝ իր ամբողջ կարելիութիւններով:

**

Բոլոր հարցերը անհասկնալի են:

Չշղուտի կէտ մը գոյութիւն չունի, երբ վարը միտքը կը կործանի բը-

նազանցակնօրէն, եւ չի կրնար ինքզինք պահել առարկայական երեսոյթներու դիմաց :

Երեսն քերուելու կոչուած բնագանական գագաւմներ եւ նկարներու դասակարգեր ենթադրող վիճակներ խտացնել որոշ գոյնի երկինքներու պէս, որոնք որոշ քոչուններու թռիչքը ենթադրել կու տան :

Գալիլիի եւ կարելիութեանց գաղափարներ :

Գուրս գալ օգտակարութեան եւ առօրէական հոգեբանութենէ մը, որ որոշ քիւով գաղափարները ցոյց կու տայ իբրեւ ընդոժին գաղափարներ :

Ամէն յարաբերութիւն կորսնցուցած ենք կարգ մը խորհրդանիշներու հետ, որոնք պօտիկցուցած ու մաշեցուցած են մինչեւ իսկ իրենց գմայլելի միութիւնը :

Վախը բանաստեղծութիւնը ի՛նքն է :

Բնութեան կրօնաշունչ ուժերը :

Ես դժբախտ եմ այն աճին պէս, որ կորսնցուցած է իր ինքնութեան լաւագոյնը :

Չեմ հասնիր այլեւս իմ գեղեցիկ գաղափարներուս, բայց ոչ մէկու մը պէս, որ կը տառապի քանկարժէք կէտերու շուրջ իր գիտակցութեան ժամանակաւոր երաշտէն, որքան ալ այդ կացութիւնը կարելի ըլլայ պատկերալից երեսակայել, բայց, յամենայնդէպս, բացառի՛կ, եւ որուն մօտ ներկայ ըլլար բացայայտ սաստկութիւն մը, արտայայտութեան որոշ փայլ մը, միտքը ըմբռնելու հարուստ եւ փայլուն ձեւ մը, եւ ուժը, արուեստը եւ անմիջականութիւնը պակտող այն գաղափարներուն, քան գաղափարը ի՛նքն է եւ այնքան դառնութեամբ, որ կարելի ըլլայ գայն վերածել այն ամէն ինչին, որ գոյ է : Վերածել գայն այն ամէն ինչին, որ ինքն է, եւ անշատի այն ամէնէն, որ ինքն չէ : Ո՛չ, առիկա նոյնիման գաղափարն է, այդ գաղափարը եւ իր յիշողութիւնը, ա՛յն գաղափարը, որ մոռցուած է, մոռցուած, ինձմէ դուրս ելած . անիկա իմ մէջս չի բնակիր այլեւս, ինք եւ միւսները՝ ա՛յնքան, որ պիտի չկարենամ երբեք գիմք հետ կանչել, յիշեցնել գայն ինձի, անուանել գայն եւ բնորոշել իր կերպերուն ու սրութեանց մէջ, ինչպէս նաեւ իր յստակ անջատումներուն մէջ : Վերստին կորսնցուցած եմ մտածելիին գգայնութիւնը, ա՛յնպէս՝ որ երբ անուանել ուզեմ գաղափարներ, որոնց միջոցաւ կարելի ըլլայ բանի մը մասին մտածել, կը նշանակէ ինձի բանի մը յայտնութիւնը կատարել, իմ յիշողութեանս վերյիշեցնել մոռցուած բաները աշխարհի մը, որուն դրան դէմ դրուած եմ . բառացիօրէն իմաստակ մըն եմ եւ, որովհետեւ մտածումները, որոնց կը հպիմ, մտածման այն կէտերը, որոնց կրնամ մօտենալ՝ անհունօրէն սահմանափակ են :

...Անհունօրէն աւելի կարեւոր, քան րնկերային բոլոր հարցերը, իրերուն ամբողջ կառոյցը, որուն ուղղութեամբ կ'ընթանայ մտածումներուն մեծ

մասը: Բոլոր այն բաները վերածուած են այս բջիջին, որուն պէտք է նաեւ վերածուի միտքը, եթէ երբեք կ'ուզէ ինքն իրմէ դուրս ցայտել:

Այս աշխարհին թոյլատրած հնարաւորութիւններով, յամենայնդէպս, բան մը ըսել ուզող մարդիկ քիչ կամ բնաւ չեն յաջողիր խտացնել իրենց անհատական մասնակի համակարգերը:

Եւ ասոր կողմին կայ պատտառին շատ մօտ գետեղուած շարժանկարի գործիքի մը միջոցաւ ներկայացուած ծննդոց մը, որուն պատճառաւ անհատները կ'երեւան նզուած, ճեւղագծուած դիմագիծերով եւ որոնք, այդ մօտիկութեան հետեւանգնով՝ կ'երկարին ամէն ուղղութեամբ:

Կենդանի ամէն նկարի եւ ամէն եզրի շարժունակութիւնը արգիլելով՝ եւ կեանքը հոգեբանականօրէն մեկուսացնելով՝ կը վերագտնուի նկարներուն տեսական միաձուլումը:

Հետապնդումը այն անսովորին, որով ոչ ոք կը մտահոգուի, նոյնիսկ եթէ գտած ըլլայի՝ իրական ոչ մէկ օգուտ պիտի բերէր ինծի: Որովհետեւ, իրականութեան մէջ, օգտակարութիւնն է խնդրոյ առարկան, եւ օգտակարութեան ամէնէն կենսականը, սրուած ըլլալով, որ շփոթներու եւ անկարգութեանց ընդմէջէն ինչ որ խենթի պէս կը հետապնդեմ՝ ուրիշ բան չէ, եթէ ոչ բացարձակ մտածման իրողութիւնը:

Ինչ որ կը ջանամ առանձնացնել եւ շրջապատել, եւ որուն դէմ յանդիման կ'ուզեմ գտնուիլ գոնէ անգամ մը կեանքիս ընթացքին՝ *մտածման այդ կէտն է*, ուր թօթափել էտք լեզուական ամէնէն հասարակ փորձութիւններն ու պատրանքները, եւ ինքզինքս կը նետեմ իմ միտքիս օգտակարութեան բռնորովին մերկ, բոլորովին յստակ եւ անբեկդիմի եւ շփոթանք չվերցնող կացութեան մը մէջ: Այս ընելով՝ շատ լաւ գիտեմ, որ ինքզինքս կը խաբեմ, որովհետեւ բնական ժամանակներուն պէտք էր ինքզինքս *սէր* գգայի այդ կէտին, պարզ այն պատճառով, որ գայն կ'ըզձայի: Այն խորունկ շփոթը, որուն մէջ կը լողայ ամբողջ իմ միտքս, եթէ միակ պատճառն է, որ պէտք է գրգռեմ հնարամտութիւններու, համբերատարութեան եւ տհաճան աշխատանքներու շնորհիւ, մտաւորական կեցուածք մը, որուն մէջ պէտք էր ինքզինքս փոխադրած ըլլայի, պարզ յստակութեան այդ կեցուածքը, այդ տեսակ մը արուեստականօրէն ստեղծուած վերսկսումը պէտք էր օգնէր իմ միտքիս՝ հշտելու համար, թէ ո՞ւր եմ եւ ի՞նչ եմ, հեռացնէր անմիջապէս մղձաւանջները, որոնք կը գրոհեն վրաս, այն միակ տուեալով, որ կը մտածեմ, կը փորձեմ մտածել: Եւ նոյնիսկ այն կացութիւնը, որուն մէջ կը գտնուիմ այժմ, եւ որ կը յիշեցնէ, թէ նոյնիսկ միտքի ամէնէն պարզ գործողութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ քայլ առ քայլ առաջանալ՝ պահուրտելով եւ իմ անձիս ետին իւրաքանչիւր պահ, միտքիս ներքին *ժեստ*երը չափելով իւրաքանչիւր քայլափոխի, ընելով այնպէս՝ որ ոչ մէկ բան կասկած արթնցնէ այդ ազդուներուն մասին, որոնք կը հետապնդեն ու կը սպառնան ինծի, որ եւ իմ ըսածէս աւելի անդին մտածողը չեմ, որ կը խուսափիմ լուրջ անձկութիւններու միջամտութենէն, որոնք ստեղծուած են՝ ինձմէ խլելու համար մտաւորական ամէն յատկանիշ: Գիտեմ արդէն, որ բոլոր այս հնարամտութիւններն ու խաբ-

կանգնեցրը աւելորդ պիտի ըլլային եւ որ այս պահուս ես աւելի հարուստ եմ եւ աւելի ուժեղ, քան ինչ որ եմ իրականութեան մէջ, առանց որուն ամէնէն պարզ եւ ամէնէն անկշան առարկաներուն ռազդուած մտաւորական մտածողութեան այս շնչին մասնի՛կն իսկ ամբողջովին պիտի խլուէր ինձմէ, որովհետեւ ես սորված եմ, թէ նախառագիւրդ աւելի ուժեղ է, քան անձս եւ որ իմ դէմ կը մնամ անապաստան եւ անպաշտպան. ստեղծուած միտքերուն ամէնէն ազատը եւ ամէնէն անգէնը: Ասոր համար է, որ այս գրութիւնը ուրիշ բանի չի միտիք, եթէ ոչ գաղափար մը տալ թշուառութեանս տարածութեան եւ աւերին մասին, որ իմ կարծիքովս աննախընթաց է եւ զուրկ բարոյաւորութեան հնարաւոր որեւէ եզրէ: Որովհետեւ կը կարծեմ, որ տակաւին ոչ ոք չէ տեսած *ապրող* միտք մը. երբ կ'ըսեմ *ապրող*՝ ըսել կ'ուզեմ տակաւին գիտակից եւ պայծառ, որ կարող է արձանագրել եւ չափել իր իսկ կեանքը, կարող՝ ի պահանջել հարկին գնահատելու եւ դատելու իր սեփական մտածումը, ըստեղծագործութիւնները եւ ստեղծագործութիւնները նոյնիմէն այդ միտքին, եւ որ, այնուամենայնիւ, կարծես մեռեալ ըլլայ եւ վերածուած ըլլայ իրականացէս եւ տառացիօրէն մտածելու անկարող այն բանին, որ *մտածել կը կոչուի*, որովհետեւ նոյնիսկ այն մտածումները, զորս երբեմն-երբեմն կը կազմէ, վնասները, որոնք բիրտ գրգռութեան մը հետեւանում իրմէ կը խուսափին, փաստն են անէութեան միօրինակութեան: Որովհետեւ սարսփելին այն է, որ իրեն յայտնուած եւ հագար անգամ փաստուած անկարողութեան մը մէջտեղ ստիպուած է պայքարիլ ուրիշներուն գրեթէ միասնական անհաւասարութեան դէմ, որուն հետեւանում կ'արգելուի իրեն ընծայուելիք օգնութիւնը: Իրաւ է նաեւ, որ զինք ճզմող այդ անէութեան համազարկերը տագնապներով կ'անցնին ու կը ներկայանան. իրաւ է նաեւ, որ ինչ որ կը վերաբերի իր անձին, որ կը գտնուի նուազման այս խորունկ դրութեան և իր կարողութիւնները չկարենալ իրագործելու կացութեան դիմաց, կը չափէ եւ ուրիշ տեւէ մէկէն աւելի լաւ գիտէ, թէ ուր հասած է, իր իրական մտածումին հետ, իր տեսանելի ինքնութեան հետ, ինչպէս ներքին պայքարն մը, ինչպէս իրաւ մտածման մը թանձրացումը: Գիտէ, օրինակ, թէ տիեզերական արդի մտածումներուն բարխման դիմաց որքան նուազ կը զգայ ինքզինք, եւ որքան իր խորունկ գիտակցութիւնը պատասխան կու տայ, ներքին եսի մը առանձնութեան եւ կայունութեան մէջ իր մտերիմ գիտակցութիւնը ի՞նչ զբաւակալուողութեան մը, տեսական ի՞նչ պատուումներու, շատ սուր զգայնութեան մը եւ զսպուած իմացականութեան մը ի՞նչ ծանր անհամաձայնութիւններու թատերավայր է — եւ պտուղը: 'Նախ եւ առաջ' կայ գիտակցութեան եւ միտքին միջեւ ներքին երկախօսութիւն մը, այս տեսակ մը մենախօսութիւնը, որուն, վերջին հաշուով, կը վերածուի ամէն ինչ՝ ներքին կայուններէն ներս, որ իր խօսքին նարնատումը կը նշմարէ, իր նախադասութիւններուն, որոնք կը վիժին, իր կայունութիւնը տարտղնուած, տարօրինակօրէն փորուած, առկախեալ ահռելի բացակայութեան մը փախուստով լեցուն. հետեւաբար, այս աւելի քան տաղակալի աղէտին առջեւ, որ աստիճան մը վեր անկութեան կը հասնի, ամէնէն իրական անձկութեան, գիտակցութիւնը իրաժարելով յատկութեամբ պայքարիլ է, ինչ որ, այնուամենայնիւ, շատ անհրաժեշտ պիտի ըլլար, եւ տեղեկ ըլլալով իրեն սպառնացող անբացատրելի վիճումներուն, կ'իջնէ դէպի ինքզինք, կը փորձէ ապրիլ ձեւանալ, որ փերձէ *չմտածել*: Մի մտածեր, կ'ըսեն տխմարները, կ'ըսէ հասարակ արարածը, գոհիկը, *ինչո՞ւ անպայման մտածել*: Կարծես այդ ձեւով միայն կարելի ըլլար ապրիլ եւ որ, ուրեմն, կը փորձենք միտքի մը այդ բացարձակօրէն ան-

հրածեշտ բանը ներկայացնել, որ կարենար ըլլալ առանց մտածելու :

Եւ, այսուհանդերձ, եղածը այս է, միտքի այս տեսակ մը ներքին կայունութիւնը, անգործօնութիւնը, որով կ'արգիլուի ինքնութեան մը դրսեւորումը, որուն կը համակերպի *իմ միտքս*, որուն ուղղութեամբ կ'ընթանայ : Ներքին խօսքին մէկ ձախողութեան դիմաց, կը վերադառնայ տեսակ մը ջինջ գիտակցութեան, բայց հո՛ս է, որ իրապէս ծնունդ կ'առնեն անհանգստութիւնը, այդ խելագար պառակտումը, գագաղութեամբ խառն առկախում մը՝ ձեւերու, խօսքերու, ուղղութեանց, գգայնութեանց, շեշտերու : Որովհետեւ, եթէ այս կայունութիւնն ու այս լռութիւնը բնական ըլլային, ամէն ինչ լաւ պիտի ըլլար, բայց այս գիտակցութիւնը բնականօրէն չի կրնար ձեւեր ու խօսքեր պարփակել, բացարձակ տագնապը երեւան բերել, ինքզինք դատարկ, *անդո՛յ* հոչակել :

Բնական ամէն հանգիստ արգիլուած է իրեն : Իր վիճակները ամբողջական չեն, ոչ մէկ բանի վրայ չի կրնար հիմնուիլ, ոչ մէկ բանի մասին լման գագաղում ունի, ամէն ինչ, որ իր մէջ շաղկապեալ գագաղում է՝ կայունութիւն է, անմիջապէս փանդուած է, ան ցոյց կու տայ, որ իրապէս ջիղ չունի այլեւս : Ուրեմն, խօսքն ու մտածումը չեն, որ հիւանդ են, այլ՝ նոյնիմեֆն անձը, անձը իր ամբողջութեամբ, որովհետեւ բառին լռութենէն ետք, բան մը շրջապատելու անհրաժեշտութիւնը, որեւէ մէկ բան, գիտակցութեան խորքէն դուրս կը ժայթքի եւ այդ որեւէ մէկ բանը կը չորնայ անմիջապէս, կ'անշընչանայ պապակէն : Չկարենա՞լ յարմարելու այս կացութիւնը պէ՞տք է արդեօք վերագրել կեանքի գիտակցութեան :

Ուստի, այս պայծառատեսութիւնը, որ իմ մէջս է եւ որ ականատես է այս յարատեւ պարտութիւններուն, այս ձախողութիւնները կ'արձանագրէ անխուսափելի ցաւի մը նման :

Եղանակներուն բանաստեղծութիւնը, արշալոյսներ, այսինչ կամ այնինչ լոյսերէն կախուած արեւ, կանանչի, մովի, նարնջագոյնի գարնոյ այս կամ այն մառախուղը, ընկերային կամ անհատական յոյզերու ֆնարականութիւնը՝ այդ ամբողջը անկարելորդ արկածներ են,

ֆնարականութիւնը կ'ենթադրէ իրերու կատարեալ դրութիւն մը, վերստանձնուած, կայունացուած,

ուրեմն, նոյնիսկ եթէ բերկրանքի մը բանաստեղծութիւնն է՝ չի կրնա՞նք գոյութիւն ունենալ համակերպութեան մէջ, որովհետեւ ջատագովութիւնը, երջանկութիւնը եւ այս կարգի փառաբանանքներ, որոնք մերն են, խաբեբա՛յ փառաբանանքներ են,

պէտք էր սահմանել անծայրածիր տարածութեան մը նմանոյ այս վախճանը, վախճան այն պարապին, գոր կը գտնենք ջրապտոյտի մը կեդրոնը :

... Ո՞ՒՐ ԵՍ ԴՈՒՆ

Գիւղը՝ մանկութիւն կը կոչուէր,
Եւ անտառը՝ մանուկներ :

Մանուկներ,
Որոնք գայլէն չէին վախնար...

Մանուկներ չկան այլեւս,
Անտառը չկայ,
Ծառերը չկան :

Շէնքեր կան ու սենեակներ,
Ուր նոր մանուկներ կ'երգեն,

Թէ իրենք կը խաղան
Անտառին մէջ,
«Երբոր գայլը հոս չէ...»

Ծերացեր ես
Եւ այլեւս մանուկներուն հետ չես խաղար,
Մանուկները չեն հարցներ՝
«Գայլ, գայլ, ո՞ւր ես դուն» :

Պիտի սպասէիր, որ դիակիդ վրայ
Ծառ մը բուսնի,

Բայց պիտի չբուսնի,

Պիտի բուսնի երկար շէնք մը,
Ուր մանուկներ պիտի երգեն ու քեզ փնտռեն՝
«Գայլ, գայլ, ո՞ւր ես դուն» :



ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐԷՆ ԱՌԱՋ...

Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարներ»ը առաջին անգամ լույս տեսաւ 1976ին, «Սովետական գրականութիւն» ամսագրի բնօրինակում յաջորդական երկու (7, 8) թիւերուն մէջ եւ, մեր գրաւոր մշակոյթին մօտէն հետեւած մարդոց համար՝ առաջին վայրկեանէն յայտնի եղաւ անոր ծննդոցը:

Այդ մասին թէեւ հարեւանցի ակնարկներ եղան հոս ու հոն եւ գրական շրջանակներու մէջ յաճախ նիւթ դարձաւ երեւոյթը, բայց ոչ ոք փորձեց համապատասխան ծաւալի մը վրայ քով քովի բերել աւելի քան կէսդարեայ անցեալ մը ունեցող մայր արձանագրութիւնները եւ անոնց դաշտենցեան պատճէնաւորումները:

Շահագրգռութեան պակասի մը կամ անտարբերութեան պէտք չէ վերադրել այս վերաբերումը:

Այնքան բացայայտ էին Ռուբէնի «Յիշատակները» ամփոփող հատորներէն Դաշտենցի կատարած արտագրումները, եւ մարդկային առաքինութիւններով եւ գրողի խղճմտութեամբ այնպիսի՝ խոր համարում մը կը վայելէր ան, որ կարելի չէր հարցը կապել դրական դայթակղութեան մը եւ իր ձեռագիրին մէջ փոխադրուած էջերը բուն տիրոջ վերադարձնելու մասին խօսք բանալ:

Գիտենք, լսած ենք ու կարգացած, որ Խաչիկ Դաշտենցի իր ծննդավայրին յուշերով ու հերոսներուն յիշատակներով յագեցած ամէնօրեայ մթնոլորտի մը մէջ կ'ապրէր, ա՛յն աստիճան, որ անգամ Շէյքսպիրը թարգմանած ատեն չէր կրնար դուրս գալ կախարդական այդ աշխարհէն: Իրն է խօսքը:

«Եթէ ինձ հարցնեն, թէ Շէյքսպիրին քարգմանելիս ես ամէնից շատ ինչի՞ մասին եմ մտածում, ես անկեղծօրէն կ'սսեմ իմ ծննդավայրի մասին, Սաաունի եւ Հայկական Տարոսի մասին, ա՛յն երկրի մասին, որտեղ ապրել են իմ պապերը, մեր ամբողջ ժողովուրդը Բաք-մանայ ջրից մինչեւ Անիի ակերակները: Շէյքսպիր քարգմանելու դժուարութիւնները չեն, որ տանջում են ինձ, այլ իմ բռնագրաւուած ծննդավայրի մտմտքը: Շէյքսպիրի նկարագրած երկրները եւ նրա ստեղծած կերպարները ինձ շարունակ յիշեցնում են իմ հեռուոր երկիրը եւ նրա պատմական հերոսներին»:

«Բռնագրաւուած ծննդավայրին մորմոքը» եւ բռնութիւնները չքացնելու կիրքով ահագնացած ծննդավայրին չէյքսպիրեան հերոսները, որոնց առաջին վարք սրբոցը դրեց Ռուբէն, եւ այնքան հարազատութեամբ եւ վարակիչ շունչով, որ այնուհետեւ մարդոց սրբապղծութիւն թուեցաւ տարբեր բառերով ու պատկերացումներով ընկալել անոնց մեծախառով անձնաւորութիւնները:

Սխալ չըլլար ենթադրել, որ Պաշիկ Դաշտենց ինք եւս նոյն երկիրա-
ծութեամբ մօտեցած է Ռուբէնի վարք սրբոցին եւ ջանացած է իր մեծարած
հերոսները պահել առաջինին էջերէն արդէն ծանօթ վարքով, բարքով ու
բարբառով :

Եւ յետոյ, չմոռնանք, «Ռանչպարներ»ը լոյս տեսան Պաշիկ Դաշտենցի
մահէն ետք եւ առանց անոր ձեռագիրին յղացման, ժամանակագրութեան ու
նպատակին մասին որոշ լուսաբանութիւններ տալու ընթերցողին :

Այս հանգամանքները լուրջ պատճառներ էին, որպէսզի մեր մտաւորա-
կանները հեռու մնան «Ռանչպարներ»ը ինքն իր մէջ անկախ գործ մը համար-
ելու եւ բոտ այնմ դայն դատելու փորձութենէն : Գործին զբախօսական նուիր-
ած գրողներն անգամ չուզեցին պրպտումները շատ խորացնել եւ բաւարար-
ւեցան հարեւանցի ակնարկներով : Անիկա տեսակ մը ձեռագիր համարուեցաւ
ամէնուն կողմէ, Դաշտենցի մտերիմ թուղթերէն մէկը, հոսմ նիւթը ով գիտէ
փայտայուած զրահան մեծ ծրագիրի մը եւ ոչ թէ բացարձակ հեղինակու-
թիւն մը :

«Ռանչպարներ» գործը այսօր եւս նոյնը կը մնայ մեզի համար, անիկա
դատումի ենթակայ անկախ գործ մը չէ, չի կրնար ըլլալ, մինչեւ որ ողբաց-
եալ զբազէտին մտերիմները կամ բանասէրներ հաւաստի հաղորդագրումներ
լոյս չընծայեն անոր մասին :

Երեւի այսպէս չէ մտածած Հայաստանի քննադատներէն Սուրէն Աղա-
բաբեան, որ, «Ռանչպարներ»ը ամբողջական հեղինակութիւն մը համարելով՝
զբախօսական մը նուիրած է անոր եւ ինչ-ինչ մեկնաբանութիւններ դունա-
ւորած :

Ինչ խօսք, որ մաքսային նման հակումներու տէր մարդոց համար ձե-
ռընտու հող է մեր իրականութիւնը՝ թէ՛ հայրենական պայմաններուն պատ-
ճառով, թէ՛ Սփիւռքի սիրւութեան կացութեան : Հոն՝ բազմազան հնարաւոր-
ութիւններու բացակայութեան հետեւանքով, հոս՝ սակաւութեան : Անհրա-
ժե՞լտ է սակայն, որ այդ դժբախտութիւնները նպատակայարմար հող հա-
մարենք եւ դատողական դժբախտութիւններ կուտակենք մեր թուղթերուն մէջ :

Կը կրկնենք. Պաշիկ Դաշտենցի «Ռանչպարներ»ը ինքն իր մէջ անկախ
գործ մը չէ եւ, հետեւաբար, դատումի ենթակայ չէ առայժմ :

Որպէսզի «Հայ յեղափոխականի մը յիշատակները» եւ «Ռանչպարներ»ը
միաժամանակ իրենց տրամադրութեան տակ չունեցողները իրենք եւս առիթ
ունենան հաստատելու ըսուածը, քով քովի կը բերենք Ռուբէնի «Յիշատակ-
ներ»էն որոշ հատուածներ եւ անոնց դաշտենցեան ուղղակի արտագրումներն
ու մերձաւոր պատճէնաւորումները : Եւ անո՛ր համար, որ ուրիշներ, ուրիշ
Աղաբաբեաններ այնքան ամայի չկարծեն հրապարակը եւ մարդոց ծանօթու-
թիւններն ու դատողութիւնը արհամարհող իրենց գրոհներուն սանձ դնեն քիչ
մը : Սորովին սանձ դնել :

Ստիպողական ուրիշ յիշեցում մը.—

Այս պահուն, դժբախտաբար, մեր տրամադրութեան տակ չունինք
«Ռանչպարներ»ուն տպագրեալ առաջին աղբիւրը հանդիսացող «Սովետական
գրականութիւն» ամսագիրին վերը յիշուած երկու թիւերը, օրին ունէինք,
տարին, չբերին, եւ մենք հարկադրաբար դիմեցինք «Էտվան» հրատարակչա-
կանին լոյս ընծայած հատորին, որ տպագրական աներեւակայելի դժբախ-
տութեանց ենթարկուած դժբախտ բան մըն է, սխալներու, կրկնուած նախա-
դատութիւններու, աղաւաղուած անուններու ընդարձակ տակնուլրայութիւն
մը, «եղակի»՝ նոյնիսկ «Էտվան»ի լոյս ընծայած շարքին մէջ :

Սուրէն Աղաբաբեանի մեկնաբանութիւններուն մասին մեր մեկնաբան-
ութիւնները՝ փաստաթուղթերէն ետք :

«ՌԱՆՉՊԱՐՆԵՐ»ՈՒ ԾՆՆԴՈՅԸ...

ԳԷՈՐԳ ՉԱԽՈՒՇԻ ՀՕՐԵՂԲՕՐ ՊԱՐԱԳԱՆ

Սերոբը, յետի՞ն մտքով թէ պարզամտորէն՝ յայտնի չէ, կը կանչէ Գէորգ Չաւուշը եւ ամբողի առջեւ նախատելով գայն, կ'ըսէ. «Ինչպէ՞ս կը լինի, որ դու, ամենահին զինուորը այս երկրի, ուր օրէնք է դրուած Փետայիներու կողմէ աղջիկ չփախցնելը, թոյլ կու տաս, որ հօրեղբայրդ կնիկ փախցնէ Սասնոյ աշխարհէն»:

Գէորգ համարձակ կը պատասխանէ. «Ինձմէ ծածուկ հօրեղբայրս կատարած է այդ յանցանքը: Դու մեծն ես այս երկրի, դատ ու դատաստան քու ձեռքին. ինչպէս կ'ուզես այնպէս արա»:

Բայց Սերոբ բարկացած՝ նորէն կը շարունակէ իր նախատինքները. «Գէորգ, Փսանայ ռայան ինչպէ՞ս կ'ըլլայ, որ համարձակուի գալ այստեղ եւ Սասունէն աղջիկ փախցնել, եթէ յոյս չունենար քեզմէ կամ խորհուրդ ստացած չըլլար քեզմէ: Եթէ դատ ու դատաստան իմ ձեռքն է, ես կ'ըսեմ քեզ, զնա՛ ու դատէ»:

Գէորգ դոյնը կը թուցնէ եւ առանց պատասխանի, գլխահակ, դուրս կ'ելլէ Սերոբի քովէն: Շտապ քայլերով կ'երթայ դէպի այն տունը, ուր բանտարկուած էին իր հօրեղբայրն ու կինը, եւ առանց խօսք մը իսկ ըսելու հրացանը կ'ուղղէ հօրեղբօր կուրծքին ու մէկ հարուածով գետին կը դուրսէ դայն գնդակահար: Մէկ ուրիշ գնդակ էլ կու տայ սարսափահար կնկան ճակատին եւ, հրացանը վիզը ձգելով, կը հեռանայ դէպի Հարսնգոմերի բլրակները:

Գ. Խատր, էջ 181

Եւ նեմբուքի Սերոբը դիմեց նրան՝ ասելով.

— Ինչպէ՞ս է, որ դու՛ ամենահին զինուորը այս երկրի, ուր օրէնք է գրուած, որ սասունցին իրաւունք չունի աղջիկ փախցնելու, թոյլ ես տուել, որ քո հօրեղբայրը կիսարմատ փախցնի Սասնոյ աշխարհից:

— Իմ հօրեղբայրը այդ յանցանքը կատարել է ինձանից ծածուկ, — ասաց նա, — դու ես երկրի մեծը եւ դատն ու դատաստանը քո ձեռքն է, ինչպէս ուզում ես, այնպէս վեռիր:

— Եթէ դատն ու դատաստանը իմ ձեռքին է, ուրեմն, այս գործը քեզ եմ յանձնում, Արաբոյի հին զինուորիդ, որ այժմ իմ զինուորն է: Գնա՛ եւ ինքդ դատիր, — ասաց Արքիւր Սերոբը եւ նոյնպէս ոտքի ելաւ:

— Ի՞նչ ես յանձնում:

— Այո՛, քեզ:

Գէորգ Չաւուշը առանց պատասխանի գէնքը վերցնելով՝ գլխահակ հեռացաւ Տէր Քաջի տնից:

Ես հետաքրքրութիւնից գնացի ետեւից դէպի այն մարագը, ուր փակուած էին Գէորգի հօրեղբայրը եւ աղբիկցի կինը:

Մոլեգին էր Գէորգը եւ անկշռադատ:

Նրա ինքնասիրութիւնը վիրաւորուած էր: Կանգնեց շեմքին եւ Հալէպից բերուած հրացանը որոտաց հօրեղբօր կրծքին: Երկրորդ գնդակով սպան-

նեց աղբիկցի կնոջը եւ, հրացանը վիզը գցելով, մոայլադէմ հեռացաւ Շուշ-
նամերկի անտառները :

«Ռանչպարներ», էջ 44-45

Ս Ե Ր Ո Ւ Ր - Ա Ղ Բ Ի Ի Ր

...Սոխորդ գիւղն ալ կը շրջապատուի թրքական զօրքերով :

Ծանր է Սերորի վիճակը եւ անելանելի : Եթէ դիմադրէ, կռիւ պիտի
լինի եւ ո՛չ միայն ինքը, այլեւ ամբողջ գիւղը կոտորածի պիտի ենթարկուի :
...Ուստի առանց այլեւս երկար մտածելու, Սերոր կը վերցնէ իր հրացանը,
կը կապէ փամփուշտները, կը հագնի լափանները եւ միս-մինակ դուրս կ'ելլէ
գիւղէն : ...Սերորը կ'երթայ ձիւնի վրայով հանդարտ ու հանդիստ, իսկ
գինուորները մինչեւ մէջքերնին խրուած ձիւներու մէջ կը քալեն անոր ետե-
ւէն ու կը կրակեն : Երբեմն-երբեմն Սերոր կանգ կ'առնէ, մէկ-մէկ գնդակ
կ'արձակէ թշնամու վրայ եւ նորէն կը շարունակէ իր ճամբան : Արդէն երեք
գինուոր սպաննուած են : ...Եւ զօրքը, վստահ ըլլալով, թէ Սերոր զոհ պի-
տի երթայ այդ բուքին, ետ կը քաշուի վարի գիւղերուն մէջ :

Քանի մը շարաթ, ո՛չ ոք լսեց Սերորի մասին. բոլորն ալ, թէ՛ հայ,
թէ՛ թուրք, թէ՛ քիւրտ, համոզուած էին, որ այդ քաջ մարդը զոհ է դացեր
ոչ թէ զօրքի գնդակներուն, այլ Նեմրութի խոր ձիւներուն : ...Եւ երբ կը
տարածայնուի, թէ Սերոր դեռ ողջ է, ընդհանուր զարմանքը այնքան մեծ
կ'ըլլայ, որ բոլորն ալ կը հաւատան, թէ հրաշքի մը առջեւ կը գտնուին : Ու
առասպելներ կը հիւսուին անոր անձին շուրջ ոչ թէ հայերու, այլ քիւրտե-
րու եւ թուրքերու կողմէ : Սերորի անունը կը դնեն Նեմրութի Սերոր, Նեմ-
րութի Աւլան :

Գ. հատոր, էջ 153-154

Փետրուարեան մի ձիւնոտ օր, երբ մենք Սոգորդում էինք, սուլթանի
զօրքը յանկարծ պաշարեց գիւղը : Փնտռում էին հայդուկապետին եւ նրա
խմբին : Սերորը վերցրեց հրացանը եւ մէն-մեճակ ելաւ գիւղից, որ կոտորա-
ծի պատճառ չդատնայ : Նա հագած էր լաքան եւ հանգիստ գնում էր ձիւների
վրայով : Սուլթանի զինուորները չէին կարողանում ետեւից հասնել, որով-
հետեւ ձիերը մինչեւ գաւակները խրում էին ձիւնի մէջ : Սերորը երբեմն-եր-
բեմն ետ էր դառնում եւ կրակում : Երեք ռումի ձիաւոր սպանուեցին : ...Ու-
տիկանները կարծելով, թէ Սերորը խեղդուած է Նեմրութի դաշտերի մէջ,
թողել եւ հեռացել էին գիւղից :

Երբ ամէնքը, հայ, թուրք, ֆուրդ, համարել էին Սերորին զոհ գնացած
Նեմրութի ձիւներին, յանկարծ, իլաթի գիւղերում յայտնուեց Սոգորդի հե-
րոսը, եւ մարդիկ սկսեցին նրա շուրջը առասպելներ հիւսել, նրան կոչել
Նեմրութի ասլան :

«Ռանչպարներ», էջ 36

Ս Ե Ր Ո Ւ Ր Ի Մ Ա Հ Ը

...Այդ ծանր վիճակին մէջ լուր կը տարածեն, հարկաւ հնարովի լուր,
որ բալակցի քիւրտերը սպստամբեր են կառավարութեան դէմ եւ վերջինս
զօրք կը հանէ անոնց դէմ :

Մինչ սասունցիք ու ֆետայիները կը կտրծէին, որ կառավարութիւնը, զբաղելով քիւրտերով, զիրենք հանդիսա պիտի ձգէ, Հոկտեմբերի վերջերը Պիթլիս քաղաքէն Խուլթի եւ Բոնաշէնի միտայով Ալայ բեկը կ'ուղեւորուի դէպի Սասուն՝ 500 զինուորներէ բաղկացած զօրաբաժնի մը հետ: Եւ այդ շարժումը կը կատարէ շատ դադանի կերպով: Միաժամանակ Խուլթի եւ Խեանքի քիւրտերն ալ շարժման մէջ կը դրուին: Եւ զիշեր մը, երբ ամբողջ Սասունը հանդիստ կը քնանար, վաղ արշալոյսին կը պաշարուի յանկարծ Կելիեկիզան զիւզը, ուր ապաստանած էր կիսամեռ Սերոբ՝ իր ընտանիքի եւ քանի մը զինուորներու հետ:

Գիւղի մեծ մասը անտեղեակ է, թէ ինչ կ'անցնի կը դառնայ. իսկ միւս մասը շուարած է եւ չի գիտեր իր ընկերքը, երբ յանկարծ հրացանները կը պարպուին տունէն դուրս ելլող Սերոբի եւ ընկերներու միայ: Սերոբ զբեթէ անկարող է շարժելու, անոր թեւերէն կը բռնեն զինուորները. Սերոբ զբեթէ չի տեսներ, աչքերը մթնած են ու խուճրը ամբողջ զբաղած է իր կիսամեռ խմբապետի փրկութեամբ: Մէկը միւսի ետեւէն կ'իյնան Սերոբի հաւատարիմ ուղեկիցները, բայց ոչ ոք կը լքէ Սերոբը. կ'իյնայ անոր մեծ եղբայրը՝ ոչս Մխն, կ'իյնայ փոքր եղբայրը՝ Չաքարը, կ'իյնայ որդին՝ Յակոբը: Իր կիներ՝ Սօսէն չի թողուր իր վերաւոր ամուսինը եւ կը ջանայ կերպով մը բարձրացնել ու տանիլ դայն լերան դադաթը: Գիւղացիներէն մէկ քանին ուշքի կու գան, հրացան կ'առնեն ու կը փորձեն ճամբայ բանալ Սերոբին, պատուելով թշնամիի շղթան, բայց այդ փորձը ի գուր կ'անցնի, որովհետեւ Սերոբ արդէն անկարող էր շարժելու: Ան կը խնդրէ դնել զինք քարի մը վրայ, որպէսզի վերջին ժամուն քանի մը հրացան կարենայ պարպել եւ այնպէս մեռնիլ:

Կելիեկիզանցի Տէր Քաջ, որուն առաջնորդութեամբ տեղի ունեցած էր փորձը Սերոբը փրկելու, կը զոհուի: Երբ Սերոբի բոլոր պաշտպանները արդէն ինկած են եւ միայն անոնցմէ չորսը հասած լերան կատարը, գնդակ մը կու գայ Նեմրուլթի Աւլան Սերոբ փաշայի տանջանքներուն վերջ դնելու: Կը հասնի զօրքը եւ Պշարէ Խայիլ կը կտրէ Սերոբի գլուխը ու գերի տանելով անոր վերաւոր կիներ՝ Սօսէն, նահանջի փողը կը հնչեցնէ:

• • • • •

Սերոբը Գուրան-Բարձրաւանդակի հայութեան ռազմական ուժի ոգին էր. ուստի կառավարութիւնը ամէն միջոց ի գործ կը դնէ, Սերոբի կտրուած գլուխը ցուցադրելով հայերուն, հասկցնելու, թէ այդ ուժը ոչնչացած է: Կը կազմակերպէ հանդէսներ Մուշ քաղաքի եւ շրջակայքի մէջ եւ ապա Մշոյ դաշտի վրայով Սերոբի գլուխը կը տարուի Ախլաթ ու Պիթլիս, հոն եւս հայութեան սոսկում ու սարսափ ազդելու համար: Ի վերջոյ Սերոբի գլուխը կը յանձնուի հայոց Առաջնորդին, որ վանքի սպասաւորին հետ միասին, գիշեր ժամանակ, կը թաղէ դայն եկեղեցիի մէկ անկիւնը:

Գ. Խատր, էջ 183-185

...Եւ նայն գիշերը, սուլթանի զօրքը Բաղէշից դէպի Բոնաշէն շարժւեց, լուր տարածելով, թէ Սասնոյ ըմբոստ քրդերին ննջելու կ'երթայ: Հրամանատարը Ալայ բեկն էր: Միաժամանակ, Խալիլի գլխաւորութեամբ Գելու վրայ շարժուցին Խալիլի եւ Խեանքի զինուած քրդերը: Սուլթանի զօրքը հինգ հարիւր ասկեար էր, աշիրէքը՝ հազար հինգ հարիւր: Գելին պաշարուեց 1899 Հոկտեմբերին, երբ ամբողջ գիւղը ֆնած էր:

լերան գոմի մէջ քնած էր նաեւ Սերոբ Աղբիւրը՝ գլուխը դրած իր հրացանի նոր շինուած խզակօթին:

Թուխ Մանուկ եկեղեցու մօտով սեւ գօրքն սուրաց դէպի Սերոբի պահած լերան կողմը:

Սօւէն բռնեց Սերոբի քեից, որ բարձրացնի, բայց ծանրութիւնից երկուսն էլ վայր ընկան: Տէր Քաջն ու իր որդի Ադամը փարձեցին՝ նրանք էլ վայր ընկան:

Մի գնդակ եկաւ լերան կողմից, եւ Տէր Քաջը հենց այդպէս էլ ընկած մնաց իր դրան շեմքին:

Յանկարծ փոթորկի պէս յայտնուեցին Սերոբի զինուորներից չորս հոգի եւ Սօւէի հետ Սերոբին իրենց թեւերին առնելով, թոցրին դէպի Անդոկ: Ամբարնի կոչուող մի բարձունք կայ Անդոկի վրայ. նրան այնտեղ դրին: Սօւէն մօսինը տուեց Սերոբի ձեռքը, բայց նրա թեւը մերժեց գէնք վերցնել: Հայդուկապետը դժուարութեամբ մէկ-երկու գնդակ վառեց եւ թուլացած ընկաւ:

Ու Ամբարնու վրայ հերոսաբար կռուելով, նահատակուեցին Սերոբ Աղբիւրի եղբայրները՝ Մխէն ու Զաքարը, եւ որդին՝ Յակոբը: Քոհուեցին նաեւ չորսը այն եօթը զինուորներից, որ Ախլաթից եկել էին Սասուն: Իսկ Տէր Քաջն արդէն սպանուել էր իր պատի տակ:

.

Ճիշդ այդ միջոցին մի գնդակ վերելից գալով, խոցեց Աղբիւր Սերոբին: Մասնայ ցեղապետ խալիլ աղան հասաւ եւ մեռած հերոսի գլուխը կըտրելով ու վիրաւոր Սօւէին գերի վերցնելով, կրաման տուեց աւարտի փողը հնչեցնել:

Սերոբի գլուխը նախ տարան Մուշ, ապա այնտեղից՝ Բաղէշ: Երկու օր քաղաքի կրապարակի վրայ ցուցադրելուց յետոյ, յանձնեցին Բաղէշի հայոց առաջնորդարանին:

Կարմրակ անունով մի վանք կայ Բաղէշում: Հայոց առաջնորդը եւ վանքի սպասաւորը Նեմրութի հերոսի գլուխը գիշերով քաղեցին Կարմրակ վանքի արեւելեան գաւթի մէջ, մի ծեր թթեմու տակ:

«Ռանչպարներ», էջ 54-56

ՊՇԱՐԷ ԽԱԼԻԼԻ ԳԼԽԱՏՈՒՄԸ

...Բուռն պահանջ մը կար պատժուած տեսնել Սպաղանքը կոտորող եւ Սերոբի գլուխը կտրող Պշարէ խալիլը:

Այս խնդրոյ շուրջ համաձայնութեան կու դան Փետայիները՝ Գէորդի, Անդրանիկի եւ Մակարի գլխաւորութեամբ. կ'ընտրեն երեսուցի չափ լաւ կռուողներ եւ կը վճռեն, ինչ գնով ալ ըլլայ, կտրել խալիլի գլուխը:

Մուշէն Կոտոյի Հաճին եւ Պոլէի Մճոն կ'իմանան, որ խալիլ քաղաք պիտի գայ պատուանշաններ ստանալու: Իսկոյն Փետայիները կ'ուղեւորուին դաշտի կողմը: Եւ, երթալով Մարնիկ գիւղը, կը վերցնեն քանի մը լաւ վալաղներ ու կը բռնեն Բոնաշէնի ճամբաները:

Պալիլը կը վերադառնար Մուշէն քանի մը ծառաներով. ան գրեթէ կասկած չունէր, որ Բալակցոյ սահմաններուն մէջն է, որ իր գլուխը պիտի ուտեն: Երբ խալիլ կը հասնի այնտեղ, ուր ճանապարհի երկու կողմը բռնած էին Փետայիները, կը լսէ յանկարծ անոնց «թեալիմ» պահանջը եւ կը փորձէ

վախճիլ. Փետայինները գնդակներով վար կ'առնեն ձիերէն զինքը եւ ծառաները ու կը սպաննեն: Ֆետայինները երգում էին կատարեր, որ Մակարին պիտի յանձնեն Սալիլի գլուխը եւ սիրտը կտրելու պատիւը, բայց ան հեռուն էր ու զրազած Սալիլի ծառաներու սպանութեամբ: Առաջին անգամ կը հասնին ուրիշները, որոնց մէջ նաեւ Անդրանիկը, ու կը կտրեն Սալիլի գլուխը՝ գեռ կենդանի եղած ասէն: Անդրանիկ կը վերցնէ անոր կուրծքէն կախուած նշանը եւ իր կուրծքին կը կախէ: Երբ Մակարը կը հասնի, Սալիլի դիակին վրայ կը տեսնէ խենչալը, զոր կ'առնէ ու իր վրայ կը կախէ: Իսկ Գէորգը, արդէն գործը վերջացած ըլլալով, հրացանի վրայ լնկած՝ հեռունները կը դիտէ:

Գ. հատոր, էջ 217-218

— Ամէն ինչ կարգադրուած է, — ասաց Գէորգը, — նրա շփախմբի հետ լինելու է նաեւ Մառնայ Պողէն եւ մի քանի հայ մշակներ:

Սպաղանքը քանդելու եւ Սերոբին սպաննելու համար կառավարութիւնը Քշարէ հալիլին հրաւիրել էր Մուշ՝ փաշայական աստիճան տալու և պարգևատրելու սուլթանի ուղարկած պատուանշանով:

Աշիրաք-ապետը ձիու հետ ընկած էր կիրնի մէջ՝ անկարող շարժուելու: Անդրանիկը եւ Մակարը բռնեցին հալիլի թեւերից, բարձրացրին քամրից, ստեքը ասպանդակից հանեցին եւ բերեցին ծակ քարի մօտ:

Գէորգ Չաւուշն ու Անդրանիկը երդուել էին, որ Սպաղանաց Մակարին է պատկանելու հալիլ ազային պատժելու իրաւունքը, եթէ նրան ողջ բռնելու լինեն:

Գալէն՝ Անդրանիկի ուղարկած հրացանը վերցնելով, գնացել էր զինուած զուամների առաջը կարելու: Մակարը, ուժեղ կրակոցներ լսելով, շտապեց Գալէի օգնութեան:

Եւ քանի որ Մակարն ուշանում էր, Անդրանիկը հալիլի մագերը ստնձի պէս ոլորելով, դաշոյնը իջեցրեց կոկորդին: Երկրորդ հարուածին զլուխը ընկաւ եւ ձեռքից պոկուելով՝ գլորուեց ձորն ի վար:

Մակարի ձեռքից փչերն էին ազատուել: Նա մօտեցաւ եւ հալիլի դաշոյնը քանդելով՝ կապեց իր մէջքին: Գէորգ Չաւուշը ոտքը ջոք քարին դրած՝ նայում էր ձերունի սալտրիկցուն, որ ուշացեր էր իր իրաւունքը գործադրելու:

«Ռանչպարներ», էջ 70-74

Մ Ե Հ Մ Է Տ Է Ֆ Է Ն Տ Ի Ն

Մեհմէտ էֆէնտի, Պուլանըլի գիւղացի, ծննդեան անունը Աւետիս, զարոցական անունը Արմենակ: 1885 թուականներուն ուսուցչութիւն կ'ընէ, կը տարուի յեղափոխական գաղափարներով մինչեւ Վարդէնիսի Մարգար վարժապետին կախուիլը Պիթիսի մէջ: Այդ ժամանակ խիստ հալածանք կը սկսի Աւետիսի դէմ, կը բանտարկուի ու մահուան վտանգին կ'ենթարկուի: Կը դառնայ թուրք եւ կ'ազատի՝ երեւի որոշ ծառայութիւններ մատուցանելով. խլամացած Մեհմէտ էֆէնտի կը դառնայ սանտուլի Էմինի, յետոյ ոստիկան եւ յետոյ պաշ քոմիսէր:

Ամէնէն յարգուածն էր խլամներու մէջ իրրեւ մոլեռանդ մահմետական եւ հաւատարիմ եւ հարպիկ պաշտօնեայ: Անոր խօսքը արժէք ունէր կա-

նավարութեան մէջ, իսկ թրքութիւնը մոռցնել տուած էր իր ծնունդը, կը համարուէր թուրք օղլու թուրք եւ թունդ թշնամի հայութեան ու յեղափոխութեան: Հայութիւնը զայն կը համարէր ուրացող, դաւաճան ու ամենավտանգաւոր մարդը: ...Ան հայերու հանդէպ խիստ էր, ինչպէս ամէն մէկ թուրք եւ ոչ մէկ կերպով ցոյց չէր տար, թէ ինք ետ կը մնայ բնածին թուրքէն իր ատելութեամբ, կոպտութեամբ, հալածանքով: Յեղափոխականներու դէմ եղած կռիւներուն, հալածանքներուն մէջ ատաղին մրցանակը կը շահէր իբրեւ հաւատարիմ կառավարութեան: Իբրեւ պաշ ջոմիսէր՝ ամէն լրտեսութիւն, ամէն գործ ուշադրութեան կ'առնէր բարեխղճօրէն, ամենակտրուկ միջոցներու կը դիմէր յեղափոխականները պատժելու համար: Դաժան էր եւ յայտնի դարձած չարչարելու, ծեծելու իր համբաւով: Ամէն կերպով կառավարութեան իսկական յենարանն էր, ամէնէն անհրաժեշտ պաշտօնեան:

Այսուհանդերձ, ան նոյնքան անհրաժեշտ մարդ էր յեղափոխական շարժման համար եւ հայ ժողովուրդի տառապանքները ամէնէն ուժեղ մեղմացնողն էր:

Իբրեւ կառավարութեան բարձր պաշտօնեայ՝ անոր յայտնի էին թէ՛ պետութեան ծրագիրները եւ թէ՛ քայլերը: Ան իբրեւ անհատ՝ դէմ չէր երթար այդ քայլերուն, այլ գործօն կերպով կը մասնակցէր. բայց միաժամանակ այդ ծրագիրները եւ քայլերը վաղօրօք կը յայտնէր Տատրակին, ցոյց տալով, թէ ինչ միջոցներով կարելի է խուսափիլ պատրաստուած ծրագրէն, որպէսզի չիմացուի, թէ կառավարութեան քայլերը յայտնի դարձած են:

Հանդիպումը եղաւ առանձին եւ սկիզբը տարօրինակ: Ներս մտաւ Մեհմէտ էֆենտի, պաշտօնական հաղուստը վրան, սուրը չիկացնելով: Հսկայ մարդ էր եւ գեղեցիկ. կարծես գերմանացի ըլլար:

...Մեհմէտ էֆենտի ցանկութիւն յայտնեց, որ իր մասին միշտ վատ խօսինք, հալածենք՝ առանց սպաննելու:

...Ան շարունակեց. «Իմ վզին միշտ վաթթած կը տեսնես ճերմակ մի սաւան, թէ որ իրարու հետ կուտի մէջ պատահինք, ճանաչիր ինձ»:

Գ. հատոր, էջ 120-125

...Նրան անձամբ քանչցող մի հայ գիւղացի Մշոյ շուկայում յայտարարել էր, թէ Մեհմէտ էֆենտին հաւատափոխ հայ է, անունը պարոն Աւետիս, Մանազկերտի Իկնա գիւղից: Եւ նոյնիսկ աւելացրել էր՝ «այդ գիւղի նահապետ Պօզոս աղայի փեսան է»:

Դառնալով բաշ ֆուխտրի (գլխաւոր ոստիկանապետի) օգնական, Մեհմէտ էֆենտին իր ձեռքին էր կենտրոնացրել լրտեսական ամբողջ ցանցը: Նա էր հրահանգում ոստիկանական գաղտնի ջոկատներին եւ կառավարական գործերին՝ շարժուել այս կամ այն գիւղի վրայ: Ամբողջ Մշոյ դաշտում եւ Սասունում նա յայտնի էր դարձել ֆետայիներին հետապնդելու եւ տանջելու իր խստութիւններով:

Կար, սակայն, մի բան, որ ոչ ոք չգիտէր: Մեհմէտ էֆենտին գաղտնի կապեր էր հաստատել հայ ֆետայիների առաջնորդների հետ: Իբրեւ ոստիկանութեան խուզարկու պետ, նրան յայտնի էին հայդուկներին պատժելու պետութեան ծրագիրները եւ միջոցառումները: Նա այդ մասին ծածկաբար տեղեկացնում էր Գէորգ Չաուշին եւ Անդրանիկին, բայց հրապարակով դաժանօրէն չարչարում էր իր ձեռքն ընկած յեղափոխականին, նպատակ ունենալով իր հանդէպ ատելութիւն տարածել հայերի մէջ, եւ վստահութիւն՝

թուրքերի շրջանակում: Թուրք պաշտօնեաների ներկայութեամբ Մեհմէտ Էֆենտին իրեն ձեւացնում էր մոլեռանդ մահմետական եւ շատ աւելի հայատեաց, քան թուրքը:

Հայերը նրան համարում էին «ուրացող», «ազգադաւ», «դարձուկ», իրենց ցեղի ամենավտանգաւոր թշնամի, իսկ թուրքերի մէջ առաջին մրցանակն էր շահել իբրեւ սուլթանին նուիրուած շուն: Ընդհակառակն, ուզում էր, որ հայերը իր մասին միշտ վատ խօսեն, տասնապատիկ ատեն ու հայտնյեն իրեն: Կարեւորը այն մեծ նպատակն էր, որին նուիրուել էր:

Մեհմէտ Էֆենտին գաղտնի պայմանաւորուել էր ֆետայիների հետ, որ ինքը բաշ քոմիսեր Հիւսնի Էֆենտուց եւ միւս պաշտօնեաներից ու ոստիկաններից արտաքինապէս զանազանուելու համար իր պարանոցի շուրջը սպիտակ փաթաթան է կապելու, որպէսզի հեռուից նանաչելի դառնայ եւ իր վրան գնդակ չարձակուի:

...Մեհմէտ Էֆենտին դիմագծերով շատ նման էր գերմանացու:

«Ռանչպարներ», էջ 93-94

Հ Ր Ա Յ Ր Դ Ժ Ո Ւ Ք

Վտիտ մարմնով, փոքրիկ հասակով մարդ մըն էր ան, որ օժտուած էր խոշոր ձիրքերով եւ մտային կարողութիւններով: Խորունկ համոզմունքի հետ ան կը միացնէր հետեւողականութիւն եւ յամառութիւն: Խիստ էր ինչպէս հանդէպ իրեն, այնպէս էլ հանդէպ շրջապատին: Իր կրօնական հաւատով դէպի Դաշնակցութիւնը եւ խստապահանջ ոգիով, ան կը յիշեցնէր մասամբ Բալթարէիս Կարապետը: Անոր օրով Դաշնակցութիւնը իրապէս կը դառնայ կրօն. եկեղեցիներու մէջ նորընծայ դաշնակցականները խաչի եւ սուրի վրայ կ'երդնուն: ...Ան կ'ըսէր, թէ յեղափոխականը պիտի մեռնի կա'մ դնդակով, կա'մ կախողանով, կամ բանտի մէջ, եթէ հաւատարիմ է իր տուած երդումին: Ամէն դաշնակցական պէտք է աչք առնէ վաղահաս մահը, որուն պատճառս պիտի ըլլայ ամէն վայրկեան: Ինչի՞ են պէտք անձնական ապահովութիւնն ու բարօրութիւնը, երբ յեղափոխականի կեանքը ենթակայ է պատահականութեան: Ինչի՞ է պէտք նոյնիսկ անհատական կամ ընտանեկան սէրը, երբ դաշնակցականը պիտի խոնարհի ազգի սիրոյ առջեւ. ընդհակառակըն, այդպիսի սէր մը միայն արգելք է ազատօրէն գործելու եւ հանդիստ մեռնելու (Գ. հատոր, էջ 199-200): Որովհետեւ, կ'ըսէ Հրայր, տոկայն ու համբերելը նոյնքան անհրաժեշտ զէնքեր են, որքան հարկ եղած պարագային զէնքով կոռուիլը եւ արիւն թափելը (Գ. հատոր, էջ 236): Գիւղացիի հագուստով, ցուպը ձեռքին, գիշերուան խաւարին մէջ, Հրայր ճամբայ կը կտրէ գիւղէ գիւղ, շրջանէ շրջան եւ ամէն տեղ կը քարոզէ ու կը կազմակերպէ (Գ. հատոր, էջ 244): ...Անոնք ատելութիւն կը սերմանեն դէպի այն բոլորը, որ վատ է ու անձնական եւ, ընդհակառակն, անձնուէր սէր դէպի այն, ինչ որ լաւ է, վեհ եւ օգտակար հայրենիքին ու ազգին (Գ. հատոր, էջ 245): Կարծես մեր անցեալէն եկած ուրուական մը ըլլար ան, որ կը դեզերէր հայրենական աշխարհը, արթնցնելու համար ժողովուրդը: Եւ հայ մարդը ոչ թէ կը սիրէր զինք, այլ կը պաշտէր (Գ. հատոր, էջ 244):

Գ. հատոր, էջ 199-244

Նա Տարօն աշխարհի սուլթանի բռնակալութեան դէմ մարտնչող հայ-

դուկային խմբերի զաղափարական առաջնորդն էր: Նա էր մտքընդ սրի եւ խաչի վրայ երդուելու արարողութիւնը: ...Հայ փետային ունի միայն մէկ իտեալ՝ տառապելով ծառայել հայոց Աստուծոյ ազատութեանը: Նա պէտք է մեռնի գնդակով, կախողանի վրայ կամ բանտի մէջ, եթէ հաւատարիմ է իր ուխտին: Ինչի՞նչ են պէտք ետական սէրը, երբ կայ մի աւելի մեծ սէր՝ հայրենիքի սէրը: Յեղաշու անձնական սէրը լոկ արգելք է ազատօրէն գործելու եւ հանգիստ մեռնելու հանապարհին: «Քարայր»ն ասում էր, որ տոկայն ու համբերելը փեղաշու համար նոյնքան անհրաժեշտ է, որքան պատերազմի դաշտում գէնքը ձեռքին կոռելը: «Քարայր»ը խիստ էր ինչպէս իր սեփական անձի, այնպէս էլ ուրիշների հանդէպ: ...Այս մոլեռանդ քարոզիչը գիւղական շորեր հագած դերվիշի նման քափառում էր գիւղից գիւղ, ասելով թիւն սերմանելով դէպի այն ամէնը, ինչ վառ էր ու կործանարար, եւ անձնուէր սէր արծարծելով դէպի այն ամէնը, ինչ վեհ էր ու օգտակար հայրենիքի եւ ընդհանրականի համար:

Տարօնի ժողովուրդը սիրում էր համեստ արտաքինով այդ խորհրդաւոր մարդուն, որ կարծես մեր անցեալի մշակութիւնից ելած մի ուրուական լիներ:

«Ռանչպարներ», էջ 108-110

Բ Ե Ր Թ Ա Կ Ի Կ Ռ Ի Ի Ը

Ապագանաց Ակէն իջած էր Մշոյ զաշտ այլ ըրամազ մը զնելու: Վերադարձին կը տեսնէ, որ Գէորգի վրայ կոխ կայ: Կր խէ սպաննուած զինուորի մը հրացանը եւ կը միանայ Փետայիններուն, առանց կողքէն կախած մազէն բաժնուելու: Թշնամին կը նկատէ, որ Գէորգի հետ եղբայրներէն մէկը շարունակ վահանի նման բանի մը հետ կը իրազայ եւ կը կարծէ, թէ նորահար զէնք մըն է, մանուսանդ ժողովուրդի մէջ տարածաշնուած էր, թէ զնդակներու գէմ Փետայինները կը պաշտպանուին կյոը մագանման գործիքով մը: Երգերու մէջ յիշուածը, թէ մագով զնդակ կը ժողովէ Գէորգը, Ակէն այլ ըրամազի այս պատմութենէն ծագած է:

Գ. հատոր, էջ 226

Ընդամենը մի քանի ժամ չկար, որ բաժանուել էի եւ յանկարծ վերադարձիս հանապարհին դէմ եմ առնում մի կատարեալ մահախառնարտի: Ես անմիջապէս խլեցի սպանուած զինուորներից մէկի հրացանը եւ շտապեցի միանալ փեղաշիներին, առանց իմ մաղից բաժանուելու: Հենց որ մօտեցայ Գէորգ Չաւուշին եւ Գալիին, որոտաց ուժգին համազարկ: Ես մաղը վեր բարձրացրի. որոտաց երկրորդ համազարկը: Մաղը տարայ դէպի այլ եւ դէպի ձախ համապատասխան թեքելով իմ գլուխը: Մաղի ամէն մի շարժումին հետեւում էր մի համազարկ: Ու յանկարծ թանձր մշուշ իջաւ լեքան վրայ: Ես մաղը մի քանի անգամ մշուշի միջով այլ ու ձախ տարայ եւ բարձրացրի վեր: Եւ ի՞նչ, թշնամին խունապահար ետ դարձաւ: Երկու հագարից աւելի թուրքեր եւ քրդեր ազաղակելով սկսեցին փախչել: Բերնէ բեքան տարածուեց սուլթանի զօրքի մէջ եւ սմբողջ Մշոյ դաշտում, թէ Գէորգ Չաւուշի կողքին երեւացել է մի մարդ՝ ձեռքին վահանի մանուկեամբ մի նորահնար գէնք, որ

անխոցելի է գնդակների դէմ: Եւ երբ մարդը մատներով դիպչում է այդ գործիքին, երկնից կրակ է քափում: Պատում էին, որ նոյնիսկ Աստուածն է պաշտպան կանգնում հայ ֆեդայիներին՝ վերելից մշուշ իջեցնելով լեռներին, որի միջից միայն այդ մազանման գործիքն է երեւում եւ Գէորգ Զաւուշի գլուխը, կողքին՝ գէնքը բռնած այդ հսկայ մարդու կերպարանքը:

Եւ երգեր յօրինեցին Գէորգ Զաւուշի վրայ, նրան դարձնելով առասպելական հերոս, քէ նա այնքան քաջ է, որ քշմամու գնդակները մազով է ծոզովում:

«Ռանչպարներ», էջ 127-128

Ֆ Ե Տ Ա Յ Ի Ն Ե Ր Ը

Վաղ արշալոյսին՝ գեղեցիկ են այդ խումբերը Ֆետայիներու: Անոնք Հագած են երկներանգ շորեր, բոլորին գլուխը՝ կարմիր արախչին, սասունցնակ կամ մշեցնակ հիւսուած եւ բանուած փուչիները անոր բոլորտիքը՝ քամիին հետ կը փողփղայ, եւ անոնց դէմքին աւելի դաժանութիւն եւ անվիհերութիւն կու տայ: Հագած են նաեւ դոյնդոյն արխալուխ եւ լայն փէշերով շարվարներ՝ ասեղնագործուած կարմիր ու դեղին նաշխերով: Ուշխուրներուն փունջերը անոնց կողքերէն կախուած են, իսկ ոտքերնին տրեխներ հագած: Մէջքերնին կապած են Հալապի, Լահորի, կամ Տխարպեքիքի գօտին, որուն վրայ չորս կապ կաշիէ պատրոնակալ 240 փամփուշտ մոսինի: Կողքերնուն՝ տասնոց մասուէրը, դարձեալ մէջքերնուն՝ 140 փամփուշտ տասնհարուածեանին: Իսկ այդ բոլորին վրայ ամուր մը կը քաշէ գօտին, խենչալի գօտին, որուն կապուած է կեռ խենչալը Մսրբի կամ Դամասկոսի: ...Աւելի կը գեղեցկացնեն Ֆետային անոր ուտերէն ձգուած խաչկապ բաց պատրոնակալները, երկուքը միասին 280ի չափ պսպղուն փամփուշտներով: Չանոնք ծածկելու համար վրան կ'առնէ մաղոտ ապան՝ առանց թելերի եւ առանց կուրծքի: ...Ֆետային՝ սպային վրայէն կը կախէ փոքրիկ պայտուակ մը, մէջքին: Երբեմն, մէջքին, բայց աւելի յաճախ ձեռքին է բռնած մոսին հրացան: Ան թուրը չի սիրեր, բայց ատոր փոխարէն, մանաւանդ լեռնականները ճոկան կը պտըտցնեն եւ իբրեւ երրորդ ոտք կը գործածեն ժայռոտ լեռներուն վրայ:

Բ. հատոր, էջ 283-284

Իմ շուրջը նստած հայդուկները քաջակազմ էին, տալից ու պաղից քրծուած երեսներով: Ոմանք ալեհեր էին, ինչպէս Սպաղանաց Մակարը, որ մեծացել էր բազում կռիւների մէջ: Հագած էին լայն տաբատներ եւ գոյնը գոյն բանկոններ՝ կարմիր եւ դեղին նաշխերով: Գօտիներին ամբացած էին կաշուէ քառակապ փամփշտակալներ պսպղուն փամփուշտներով: Փամփշտակալները քողարկելու համար բոլորն էլ անխտիր, հագած էին անթել արաներ: Կողքերին կապած էին տասնոց մասուէր եւ դամասկոսեան կեռ դաշոյններ: Գլուխները ծածկած էին արախչի կամ գդակ՝ մուգ կարմրաւուն գոյնի: Իւրաքանչիւրը մի պայուսակ ունէր մէջքին կապած, եւ մի նոկան՝ ժայռերը մագլցելու համար:

«Ռանչպարներ», էջ 119

Շ Է Ն Ի Կ Ի Մ Ա Ն Ո Ի Կ

Մանուկի նահատակուելէն քանի մը օր առաջ, երբ սոյլած ինկած էինք Հարանդամերի ծառերուն տակ, ես նկատեցի, թէ Մանուկը կը սառապիլ քաղցէն, եւ հարց տուի. «Այ մարդ, դու ինչո՞ւ համար կը տանջուիս, ինչո՞ւ Փետայի ես եղած»։ «Պարոն, — պատասխանեց ան, — սոմը (թուրքը) գուլում է»։ «Լաւ, թէ ոտմը գուլում է, քեզի ի՞նչ, ձեր տունը հարուստ է, ոտմի դալումովիւնը Շէնիկ չի հասնի, դուք տգաս էիք այդ դուլումից»։ «Ճիշդ կ'տես, պարոն, մենք աչիր էինք, մենք ուժեղ էինք, մենք հարուստ էինք եւ ենք, հենց դրա համար էլ մենք ամէնից առաջ եւ ամէնից շատ պիտի շարհարուինք»։

Երբ վարձագմամբ հարց տուի՝ «ինչո՞ւ», ան նոյնքան զարմացած պատասխանեց. «Պարոն, դու ինձ փորձովեան կ'առնես։ Երբ Մարաթուկ կամ Ս. Կարապետ ուխտի դնան, մատաղցուի համար չեն ընտրեր քոստ այծերին, անընդունելի է սուրբին համար. միշտ պիտի ընտրել զոչ եւ զլաւ խոյերին՝ ուխտի նոյատակին հասնելու համար։ Մեր անտուած դառած է հայու ազատութիւնը. աչիր եւ հարուստ հայերը ամէնից առաջ պիտի մատուցւին այդ գոհարանին»։

Դ. հատոր, էջ 214

— Ձեր սուրբ հարուստ է, դու ինչո՞ւ ես զէնք առել, ընկել արիքը, — ասում էր Լանկանցի Արթինը։ Շէնիկցի Մանուկը պատասխանում էր, թէ Մարաթայ վանք կամ Ս. Կարապետ ուխտի գնացողները չեն ընտրում քոստ այծերին, այլ իբրեւ մատաղցու գերագաստւում են գէր եւ պարտտ այծերին։ Հետեւապէս, Հայաստանի ազատագրութեան գոհասեղանին մատարուելու արժանի են նախ եւ առաջ ունեւոր հայերը։

«Ռանչպարներ», էջ 116

Ջ Ա Ղ Ա Յ Ք Ի Կ Ռ Ի Ի Ը

Երբ ձարտարի խումբը Խաթալինայ լեռան փէշերուն տակ կը պաշարուի սպա ցրի. կու դայ, Առաքելը, Մուշեղը, Ատիւծ Առազը եւ մէկ-երկու ուրիշ ընկերներ կը յաջողին կտրել թշնամիի շղթան եւ ապաստան դրտնել աւերակ ջաղացքի մը մէջ, Մանուկերտի մօտ։

Թուրք զինուորներն ու քիւրտերը կը հետապնդեն դանոնք եւ կը պաշարեն։ Անձնատուր բլլալու բոլոր առաջարկները ապարդիւն կ'անցնին։ Դիրք բռնելով ջաղացքի ամուր պատերուն մէջ, Փետայիները կը դիմադրեն ամբողջ օրը։ Մութը ինալուն պէս դուրս կ'լլեն ջաղացքի ծորակով, թողով թոյնեղ իրենց մէկ ծանր վիրաւորուած ընկերը, զոր կը սպաննեն, իր խընդրանքին համաձայն։ Միւս օրն ալ փոքրիկ կտիւ մը ունենալէ Լաք, անոնք ալ վերջապէս կը հասնին Նեմրոթ։

Զինատար խումբի այս կտիւները խոր ապաւորութիւն ձգեցին հայերու եւ, մա'նաւանդ՝ քիւրտ աշիրէթներու վրայ։ Այդ բոլոր մը հայ զինուորները, ուստական սահմանէն սկսած, շատ մը կռիւներ ունենալով հասած էին մինչեւ Նեմրոթ։ Ճիշդ է, կռիւներու ընթացքին կորսնցուցած էին իրենց երկու երրորդը եւ միայն 23 հոգիով տեղ հասած։ Բայց անոնց փոխարէն սպաննած

էին բազմաթիւ քիւրտեր եւ թոռուններ, որոնց թիւը 150-300 կը հաշուէին: Իրենց երգերուն մէջ քիւրտեր անէծք եւ զովք կ'ուղղէին ջան փետայիներուն: Հայերն ալ երգեր հիւսեցին Խաթաւինայ կոխներուն համար: Այդ երգերէն ամէնէն տարածուածն է «Առաքել, Մուշեղ լեռներից իջան, աւերակ ջազաց իջեւան եղան» երգը:

Գ. հատոր, էջ 167-168

Լուսնեակ գիշերով մտանք Արագայի դաշտը: Եւ յանկարծ, հեռուներից մի ծանօթ երգ լուսեց: Ինչ-որ մէկը հաքաւինի երգն էր երգում լուսնեակ գիշերին: Այբիւր Սերոբի ֆեդայիների խումբը շարտար Յակոբի գլխաւորութեամբ, 1896ին համուրի վրայով դէպի հյաք անցնելու ժամանակ, հաքաւին լերան վրայ վաղ լուսաբացին կռուի էր բռնուել համիդէական գնդերի հետ: Ֆեդայիները, գրաւելով հաքաւինի լանջերը, կրակի տակ էին առել համիդիէ ճիւղերին, որոնք երիվարների սանձերը թողած՝ կատաղօրէն գրոհել էին սարն ի վեր՝ հայդուկների բարձունքը գրաւելու համար: Հարիւրաւոր ճիւղերը դիտարար ընկել էին հայդուկների գնդակներից, եւ շատ նժոյգներ, խրխնջալով եւ ետելի սրունքներին բարձրանալով՝ վայր էին գլորել իրենց հեծեակներին: Կռիւր շարունակուել էր մինչեւ մայրամուտ՝ բազմաթիւ գոհեր խլելով թշնամուց եւ հօսարացնելով շարտար Յակոբի փախաքիւ խումբը: Հայդուկներից երկուսը՝ Առաքելը եւ Մուշեղը, վերջին բուպէին, ազատստան էին գտել մի աւերակ ջրաղացի մէջ, Մանագլեբախի մօտ:

Այդ կռուի մասին քրդերը երգ էին հիւսել: Այդ երգն էին երգում լուսնեակ գիշերով:

«Ռանչպարներ», էջ 143

ԳԵԱԼՇՕ ՄԵՆՈՒԿԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ

...Պարո՛ն, դու՛ման, որ քու ուզածը չտուած՝ քեզ կը սիրէ՛ վախեցի՛ր եւ այդ կեղծ սիրոյ ժամանակ քու կացինը դիտուն իջո՛ւ: Դու՛մանը, որ քու ուզածը չտուած՝ քեզի ատամները ցոյց կու տայ, ըսել է քեզմէ ուժով է, այդ ժամանակ դու ուրախ դէմք ա՛ն, բայց զգուշացի՛ր ու հեռացի՛ր: Դու՛մանը, որ քու ուզածը կու տայ, հաւատա՛ ու բարեկամացի՛ր:

Զ. հատոր, էջ 42

...Մի բան ասեմ, լսէ՛ք. դու՛մանը, որ քու ուզածը չտուած կը սիրէ քեզ, վախեցի՛ր, եւ այդ կեղծ սիրոյ ժամանակ կացինը գլխին իջեցրաւ: Դու՛մանը, որ քու ուզածը չտուած՝ ատամները ցոյց կու տայ քեզ՝ նրանից զգուշացի՛ր: Դու՛մանը, որ քու ուզածը կը տայ, հաւատա՛ եւ հետը բարեկամացի՛ր:

«Ռանչպարներ», էջ 192

(Շար. 1)

ԱՐԺԵՉԱՓԱՅԻՆ ԱՆՅԵԹԵԹՈՒԹԻՒՆ...

Ռուբէնի հատորներուն ու «Ռանչպարներ»ուն բաղդատական արդիւնքին ամբողջութիւնը չեն նախորդ էջերուն տրուած նմոյշները, հոս մատուցուածը մէկ երրորդն է նոյնանման հատուածներուն եւ դեռ ասիկա մեր կուսահածն է :

Միջին ծաւալով երկու հարիւրէն պակաս հաշուով հատորի մը մէջ արտագրումներու նման քանակութիւն մը թերեւս նախընթաց չունի մեր գրական ամբողջ պատմութեան երկայնքին, եւ ճիշդ այդ պատճառով է, որ մենք կը դժուարանայինք ու կը դժուարանանք «Ռանչպարներ»ը համարել ինքնուրոյն գործ մը եւ ըստ այնմ վարուիլ հետը :

Հայաստանի քննադատներէն Սուրէն Աղաբաբեան այս գործն է, որ երեք տարուան ուշացումով ինքնուրոյն ստեղծագործութիւն կը համարէ եւ, չբաւարարուելով այդքանով՝ անոր մէջ կը տեսնէ գաղափարական միտումներ, որոնցմէ

«Մէկը դաշնակցութեան գաղափարախօսութիւնից շարժումը սահմանազատելու տենդեցն է, — պատմականօրէն միանգամայն ուղի տենդեց : Բանն այն է, որ հայդուկներն իրենց բուն ժողովրդական արմատներով չէին կարող յենարան լինել դաշնակցութեան նեղ «բաղձանքներին» համար :

Քննադատը խաչիկ Դաշտենցի «Ռանչպարներ»ուն ո՞ր հատուածին մէջ կուսահած է արդեօք նման տենդեցն մը, ո՞ր էջին վրայ, արտայայտութեան ո՞ր շեշտին ետին, կամ հերոսներէն ո՞ր մէկուն բնատրութեան մէջ, Ռուբէնի տարբեր հատորներէն վերցուցած Արարոյի՞, Սերոբ Աղբւրի՞, Հրայր Դժոխքի՞, Գէորդ Չաուչի՞, Փետայական օրերու Անդրանիկի՞, Սպաղանաց Մակարի՞, Գալէ՞, Բալբախ Կարապետի՞, Շէնիկի, Փեթարայ կամ Գեալջօ Մանուկներէ՞ն մէկուն մէջ, Չուրյի՞, Մօրուք Կարապետի՞, Լաճկանցի Արթիւրի՞, որո՞ւ :

Ի դէմս Տարօն աշխարհի Փետայիներուն, առաջին հերթին այս անունները կը պատկերանան մարդոց յիշողութեան մէջ եւ խաչիկ Դաշտենցի «Ռանչպարներ»ուն ամբողջ տարածքին վրայ չկայ տող մը, էջ մը կամ տեւպար մը, որ Ռուբէնի մատենաններուն մէջ ներկայացուած Փետայիներուն բարոյական էութեան հակասէր, ամէն ինչ նոյնն է, ինչպէս արդէն տեսաւ ընթերցողը կանխող էջերուն տրուած նմոյշներուն մէջ : Պարագան տարբեր չէ նաեւ «Բագիկ»ի յաջորդ համարներով տրուելիք մեր անջատած միւս հատուածներուն : խաչիկ Դաշտենցի կատարած արտագրութեան մէջ տեղափոխուած շատ քիչ բան կայ, — դէպքերու ժամանակագրութիւնը, դերակատարներու անունները եւ տեղանուններ : Օրինակ, Սպաղանաց Մակարի հանրածանօթ ու խոսիլիզ գինաթափումը «Ռանչպարներ»ուն մէջ կատարուած է Հրայր Դժոխքի օրով եւ Հրայր Դժոխքի հրահանգով, երբ գիտենք, որ զինաթափման այդ դէպքը տեղի ունեցաւ սիրապարծ դերվիշին նահատակութենէն առնուադն երկու տարի ետք, Դաշնակցութեան նշանակած նոր լիազօր Ռուբէնի որոշումով : Արտագրուած հատուածներուն մէջ կան եւ այսպիսի ուրիշ կարգ մը հասկնալի տեղափոխումներ, բայց չկայ բաժին մը, ուր փորձ եղած ըլլար Փետայական երեւոյթին շարժիչ ուժն ու գաղափարական բովանդակութիւնը շրջելու կամ այլասերելու :

Կարելի չէ հոս Ֆեոտայական շարժումին ծագումը եւ խտանկրօն սյույ-
մաններու ասի անոր դարդացումը վերապատմել, բսենք միայն, որ Ֆեոտ-
յիները տարերային անձնատրու թիւններ ըլլալով հանդերձ, անիկա, Ֆեոտա-
յական շարժումը տարերային երեւոյթ մը չէր, այլ կազմակերպուած ուժ
էր, գաղափարական օրինադիրքով ու մասնակցութեան անողոր կանոններով,
ներառեալ անոր առընչուած պարենաւորման եւ ռազմամթերային բարդ յան-
ձանձումները, որոնք տեղի կ'ունենային Դաշնակցութեան անօրինումներով:

Խաչիկ Դաշտենց իր էջերէն եւ ո՛չ մէկուն մէջ հակառակը կ'ըսէ, Դաշ-
նակցութեան անունը չի տար հարկաւ, կեանքի իր սյույմաններուն մէջ ո՛չ
ինք այնքան անհեթեթ կրնար ըլլալ եւ ոչ ալ իրմէ նման անհարկի յանդը-
նութիւն պահանջող կրնար դանուիլ որեւէ տեղ, բայց նաեւ, ինչպէս ըստե-
ցաւ, Հուրանար, չի հերքեր կամ սրբապղծեր մթնոլորտը, շարժման սղին,
մեր աշխարհին մէջ այն օրերուն յայտնուած մտպական ուժը, թիւիւնք կանո-
նող ու թեւաւորող ա՛յն կախարդանքը, որ աստուածային անձերու մէջ մարմ-
նացաւ ու տարերային խառնուածքներէն, աւազակներէն, ասպատակներէն,
«տարապէյիներէն, էջիւիյաներէն», կամ աւազակութեան, ասպատակութեան,
տարապէյութեան ու էջիւիյութեան ստոյգ թեկնածուներէն հերոսներ կեր-
տեց, աստուածաշնչական սրբոց վարքը գերապանցող սուրբեր, Արարներ,
Գեալչօ Մանուկներ, Սէյտօ Պօղոսներ, Ախաներ, Իսրոներ:

Տարօն աշխարհի Ֆեոտայական շարժումին համար իբրեւ գեկափար
գէմք Դաշնակցութեան կողմէ նշանակուած եւ դործունէութեան ամբողջա-
կան իրաւասութիւն ստացած աւաջին հսկաներէն էր Սերոբ Աղբիւր, Հրայր
Դժոխքին գաղափարական ներշնչումով անո՞ծ եւ անոր հետ ձեռք ձեռքի տա-
լով ամբողջ մթնոլորտը դաշնակցականացուցած ահարկու հեղինակութիւնը,
որ իր կարգին հսկաներ կերտեց, — Բայրեխ Կարապետ, Առիւծ Աւազ,
Զուլումաթ, Մուշեղ, Կայծակ Առաքել, Ճարտար, հարիւրներ, ամէնքը իր
տեսլականով, բոլորը յար եւ նման՝ խոնարհ ու յախուան, կարիճ ու երկիւ-
ղած Բայրեխ Կարապետին, որ

«Բնաւորութեամբ կատաղի եւ ըմբոստ, մանուկի պէս հեզ եւ խոնարհ
էր Սերոբի եւ անոր յիշատակին առջեւ, ինչպէս նաեւ Հ. Յ. Դաշնակցութեան
Բիւրոյի եւ անոր կնիքին առջեւ»:

«Էդ ա Սերոբ փաշի ծրագիր. էդ ա Դաշնակցութեան կնիք. էդ ա գրիչ.
էդ ա խենչալ. էդ ա դրօշակ. էդ ա Դաշնակցութեան ձեռք: Ո՛րն որ փոխէ,
գլուխնի պիտի թռնի, թէ որ էդ էդնի դաւանան Բոոօ»:

Է՛դ ա:

Տարօն աշխարհի Ֆեոտայական շարժումը նոյն կառուցով սկսաւ ու ըն-
թացաւ, հայդուկապետի մը կողքին միշտ ունենալով Դաշնակցութեան լիազո-
րած մէկ գործիչը, Սերոբի օրով թէ անկէ ետք. այդպէ՛ս էր կարգը, երգին
պէս էր՝ «Դուրգէն, վահան, Հրայր Դժոխք, քաջ Անդրանիկ գեկափար»:

Պղտիկ քաղուածքներով թարմացնենք սրտամութիւնը.—

Հակառակ Սերոբի ստեղծած միակտուր կարգադահւթեան ու իր դի-
նակիրներուն հալիին Դաշնակցութեան հանդէպ առաջացուցած խոր պաշտ-
մունքին, պատմութիւնը կ'ըսէ, որ կային որոշ տարակարծութիւններ ու ան-
ներդաշնակութիւններ Նեմրոթի Ասլանի տիրապետութեան օրօք:

«Այդ վիճակը նախատեսելով, — կ'ըսէ Ռուբէն, — Հ. Յ. Դաշնակցու-
թեան Բիւրոն, գեռ Սերոբին մահուրնէն առաջ, Անդրկովկասէն ուղարկած էր
Սեւաբեցի Սաֆոն, որ սակայն Ղըզըլազան գիւղին մէջ ձերբակալուեր էր
Ջազայիրի ձեռքով եւ այժմ կը գտնուէր Մշոյ սարսափելի բանտին մէջ»:

Շարժումին մէջ Դաշնակցութեան դերը ընդդէմը Համար մէջըրեւած այս փաստին առնթեր՝ անպատեհ չէ յիշել դարձեալ, որ Սաշիկ Դաշտենց Համարումով տեղ տուած է նաեւ Դաշնակցութեան Բիւրոյին կողմէ լիազօրուած լիազօր դաշնակցական Սեւքարեցի Սաքոյին, որ «ագգի եւ աշխարհի բոլոր հալածուածների համար գլուխը դրած մի խեղճ էր, գարգիւման դերվիշ, որ կուրի դաշտում գէնք էր բանեցնում, իսկ բանտի մէջ՝ սագ» (123) :

Նոյն պայմաններով ղեկավարի դործը կը յանձնուի Գուրգէնին : Գուրգէնին նուիրուած բաժինները չէ արտագրած Սաշիկ Դաշտենց, դոնէ մենք չհանդիպեցանք նման նշաններու, բայց Դաշնակցութեան գործիչներուն ու Փետայիներուն փոխարարելութեան համար յիշենք տպաւորութիւն մը, տանք անունը իր ղեկավարին ու ղեկավար ուժին հանդէպ պաշտամունք ունեցող առասպելական Բարաբելս Կարապետին որակով առասպելական ուրիշ Փետայիի մը, Սպարանաց Մակար, «որ հակառակ իր ըմբոստ ու խիզախ բնաւորութեան, անխօս հարս մըն էր Դաշնակցութեան ներկայացուցիչին առջեւ» : Այդ Մակարն է, որ բարաբելսեան պաշտամունքի նոյն ամբողջականութեամբ Գուրգէնին համար կ'ըսէր Գէորգ Չաւուշին .

«— Հա, վալլա՛հ, Ս. Ագրերիկ վկայ, եթէ Գուրգիկ չլինէր, ո՞վ գիտէ թէ ես, դու, Սերոբ, Անդրան, ո՞ր մէկը ասեմ, մէկ-մէկ «տարապէյ, աշխիս» չլինէինք, ֆիբրանցի Իսրայի կամ Արարոյի նման : Ո՞ւր է գաղտնիքը, որ Սերոբի պէս մարդը գառ էր դարձած անոր համար, եւ մենք՝ ամէնքս հարս կը դառնայինք անոր առջեւ» :

Ու Գուրգէնէն ետք Վահանը, նոյն մարմինին որոշումով, նոյն լիազօրութեամբ, տարածայնութիւնները վերացնելու նոյն պաշտօնով .

«Ֆետայիներու պատհառով ստեղծուած ներքին անհամաձայնութիւնները աներածեշտ էր վերցնել : Վսեանը, իբրեւ նոր եկած եւ անկողմնակալ գործիչ մը, ինչպէս նաեւ կուսակցական բարձրագոյն մարմիններէն բացարձակ լիազօրութիւններ ունեցող մէկը, կրցաւ վերջ տալ եղած վէճերուն եւ պայքարներուն» :

Նոյն կացութիւնը կը տիրէ Վահանին նահատակութենէն ետք, եւ՝

«Ամիսներ կ'անցնին ղեկավարի մը փնտռումի մէջ : Եւ ի վերջոյ, Փետայիները նարսեհատ նորէն կը դիմեն Արմենակին, խնդրելով կատարել զիրենք, ուխտելով հաւատարիմ մնալ անոր եւ ենթարկուիլ բոլոր հրահանգներուն» :

Սաշիկ Դաշտենց չէ խօսած նախորդ երկուքին մասին, բայց Ռուբէնէն լայն հատուածներ քաղելով հանդերձած է ասրերային խառնուածքներէն հերոսներ կերտած այս տիպարը, ծխախոտի մշակ Արմենակը, ղերվիշի տարագրով շրջող դադափարական քարոյիչը, Դաշնակցութեան Հրայր Դժոխքը, իր վերամկրտած «Քարայրը», որ հոս, «Բագին»ի 45րդ էջին վրայ, ըստ Ռուբէնի՝

«Իր կրօնական հաւատով դէպի Դաշնակցութիւնը եւ բարոյական ոգիով, ան կը յիշեցնէր մասամբ Բալաբէյս Կարապետը : Անոր օրով Դաշնակցութիւնը իրապէս կը դառնայ կրօն. եկեղեցիներու մէջ նորընծայ դաշնակցականները խաչի եւ սուրի վրայ կ'երդնուն» :

Եւ, ըստ Սաշիկ Դաշտենցի՝

«Նա Տարօն աշխարհի սուլթանի բռնակալութեան դէմ մարտնչող հայ-դուկային խմբերի գաղափարական առաջնորդն էր : Նա էր մտքերի սրի եւ խաչի վրայ երդնուելու արարողութիւնը» :

Ռուբէնի պէս, այսինքն՝ ըստ էութեան և ճշմարտութեան, Խաչիկ Դաշտենց ինք ևս կ'ընդունի, որ հայդուկները դադարաբաշխան տաջնորդներ ունէին, որոնցմէ մէկը Հրայրն էր, Դաշնակցութիւնը պաշտամունքի աստիճանին բարձրացուցած կտիարող, որուն հանդէպ, իր արտագրած հաւաճանէն կ'ըսեն, պաշտամունք միայն ունէր Դաշտենց, ա՛յն աստիճան, որ իր կերտած պատանի հերոս Մամիկոնին (այս անունը եւս կայ Ռուբէնի «Յիշատակներ»ուն մէջ) զոհաբերական երգում ընել կու տայ անոր սահմանած ծիսական նշաններուն վրայ, սուրի և իաչի վրայ:

— «Երդում եմ իմ պատուի եւ ազգութեան վրայ, — ասացի ևս, — իմ բոլոր ուժով, եթէ հարկ լինի նաեւ իմ արիւնով, ծառայել Հայաստանի ազատութեան դատին, ընդդէմ սուլթանի բռնակալութեան»:

Հրայր Դժոխքի նահատակութենէն ետք (1904), ամբողջ տարի մը դորձը կը փստահուի Ֆեոտայիներուն ու Դաշնակցութեան Բիւրոյին փստահութիւնը վայելող Գէորգ Չաւուշի, բայց Գէորգ Չաւուշ ղեկավարող յատկութիւններու տէր ըլլալէ աւելի՝ կոիւ վարող կիտատուած էր, և ահաւասիկ նոր պատմութիւն, վերստին ներքին խռովութիւններու ծնունդ և դարգացում և, հետեւաբար, նոր լիազօրի մը հրամայականը: Դիմումներ Բիւրոյին: Արդիւնքը՝ Ֆեոտայական միջավայրին մէջ Ռուբէնի երեւումը, որուն առաջին գործը, ինչպէս ամէն ոք գիտէ, եղաւ ըմբոսաներու պարագլուխ Սպաղանաց Մակարի մեծարդին ու յանկուցիչ ղինաթափումը:

Բազումաքի բաժինը վերջացաւ ու պարզ է հետեւողութիւնը, որ աւանց Դաշնակցութեան դադարաբաշխանութեամբ ղինուած և անոր ամբողջական փստահութիւնը վայելող գործիչներուն անօրինութեան, նախ՝ Ֆեոտայական շարժումը իբր այդ չէր ձեւաւորուեր, իսկ ձեւաւորուելու պարագային, վերի փորձառութիւններուն իսկ վկայութեամբ, փոյ կու դար շուտով, բարիքի փոխարէն ո՛վ դիտէ չարիքի ինչ գուռներ բանալով: Լաւ կ'ըսէ, ճիշդ կ'ըսէ շարժումին առաւելագոյն քաջերէն Սպաղանաց Մակար: «Պիտի դանախին ո՛չ թէ սրբազան երազի մը համար կիզուած ու անկիղելի ժաւանդութիւններ կտակած հերոսներ, այլ «տարազէյ, աշխիա», հա, մալլա՛հ:

Սուբէն Աղաբաբեան կրնայ չզիտնալ այս մանրամասնութիւնները, Ռուբէնի «Յիշատակները» կամ յեղափոխական ուրիշ յիշատակարաններ կրնան դուրս մնացած ըլլալ իր հասողութենէն ու հետաքրքրութեան ծիրէն, բայց Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարներ»ը կարդացած ու դրախօսող մարդուն Հրայր Դժոխքի բաժինը և, մա՛սնաւորաբար, Հրայր Դժոխքին վերադրուած Սպաղանաց Մակարը ղինաթափելու վիթխարի հմայքը բաւարար չէ՞ր արդեօք, եղրակացնելու համար, որ Ֆեոտայական շարժումը ինքն իր մէջ ամբողջ, ինքնավար ու ինքնորաւ շարժում մը չէր, այլ ձեւաւորուած էր, կա՛ր ու կը գործէր վերին հեղինակութեան մը դադարաբաշխան միջնորդարին մէջ: Մտահոգիչը, Աղաբաբեաններու պարագային, չզիտնալ չէ, ղիտցածը չըսելու իրողութիւնն ալ չէ, այլ շարամբանելու այս հետեւողական յամառութիւնն է, փխրուն արամբանութեան ահաւոր հետեւանքներէն չերկնչելու սարսփելի վարժութիւնը:

Ռուբէնի «Յիշատակներ»էն «Ռանչպարներ»ուն մէջ փոխադրուած քաղաածքներուն մատնանշումը կատարող այն աշխատանքին աւարտին, ընթերցողին աւելի պարզորոշ պիտի դառնայ, որ Խաչիկ Դաշտենց արտագրած է ո՛չ միայն պատմական դէպքեր ու անձնաւորութիւններ ներկայացնող բաժինները, այլեւ՝ երկրորդ անձի մը մօտ անկրկնելի փորձառութիւններ, առաջինին կողմէ բոլորովին պատահունքի արդիւնք կուսումներ, ակնթարթային

յայտնու թիւներով անտէնկայիւր տառջուցնող նշաններ եւ, նս' յիտկ, ենթա-
կային կողմէ պատմուած դուս անհատական երազներ :

Այս բարբը բան մը կը նշանակեն հարկաւ, ա' յն' որ Յաշիկ Բաշտենց
չէ կրցած կամ չէ ազած դուրս գոյ իր բացած կ'ջերան կոխարգտկան մրթ-
նարակն :

Կը հետեւի անխուսափելի հարցումը, —

Երբ գաշնակցական տիպարներու մասին Բաշնակցութեան լիազօր մէկ
դործիչին տպաստութիւնները համարեա' նոյնութեամբ կ'արտագրէ ուրիշ
մը, ուրիշ գրադէա մը, այդ ուրիշ գրադէար Փետայիներան ու Բաշնակցա-
թեան միջեւ գաղափարական սահմանադատումներու տեղեկեցնե՞ր հետազըն-
դած կ'ըլլայ արդեօք, թէ նովին բանի. կը հաստատէ անոնց խոր միտանակա-
նութիւնը :

Արտադրումները համարումի, համարումի ու հաստատումի նշաններ ե-
զած են միշտ եւ ոչ թէ սահմանադրաման :

Այս իսկ փաստով՝ Յաշիկ Բաշտենցի վերաբերումը հիմնովին կը հեր-
քէ քննադատին պնդումը : Գրադէար ո'չ թէ Բաշնակցութեան ու անոր Փետա-
յական շարժումը սահմանադատելու միտումներ կը հետազնոյէ, այլ՝ յուկ-
եայն կը քանդէ ոչնէ մի'ւս սահմանները, զորս արհեստականորէն գրած են
մարդիկ՝ հայրենիքին եւ Բաշնակցութեան հայրենական ժառանգութեան
միջեւ :

Հսկասակ սրբազային համակրանքի նշան արտադրումները այս հա-
մեմատութեան չէին հասներ, ահասարակ արտադրումներ անցի չէին ու-
նենար, կը կիրարկուէին ուրիշ սճեր : Անշուշտ : Օրինակ, եթէ Յաշիկ Բաշ-
տենց շվախար ճշմարտութեան գէժ գրոհելու մտթ հետեւանքներէն եւ ազ-
նի մարդու իր համբար արտատարելու փանդը նշանակութիւն չունենար
իրեն համար, կրնար, իր կարգին, համարձակօրէն լեցնել կ'ջերը արաջման
ճանթ եղանակներով, որոնց մէկ նոյնը կը հանդիսանայ հանդուցեալ քրա-
քերու հեղինակ հանդուցեալ Հրաշեայ Գրիգորեաններէն ու Արտիներէն ժա-
ռանկուած Աղտարեանի արժեշտփային անհեթեթութիւնը :

Իիշ մը արբօրինակ է թէ եւ, բայց նոյն ատեն փաստ է, որ ի շարս այ-
լաց՝ շատ փայլուն վերաբերումներու շարժանացան նաեւ Յաշիկ Բաշտենցի
ձեռագիրները : Կա'մ խմբագիրները տակնուվրայ ըրին անոնց ողին եւ կամ
քննադատները : Տեղին է վերյիշել այդ կողակցութեամբ իր ընարերպած բա-
ղորը :

Հլարտ անցայ իմ ուղին,	Եքէ որաշ տեղերում
Ձեր շարքերին խորքացած,	Մի էիչ աաֆ Կարպ է ծորել,
Պաշտամուսնի խորանին	Այդ էլ ես չեմ մեղաւոր,
Ոչ մի պարոյոյ չվառած :	Խմբագիրներս են արել :

Այս անդամ (կը թուի) խմբագիրները «տաք ճարոյ» չեն ծորեցուցած
էջերուն մէջ, այդ «տակար» սակայն, ինչպէս տեսաք, լրացուցած է քրե-
նադատը, մեկնաբանական ահազին ճարոյ կուտակելոյ «Ռանչպարներ»ուն
քովն ի վեր :

Մինչեւ հոս նիւթ եղաւ Սուրէն Աղտարեանէն վերը մէջբերուած պար-
բերութեան կէսը, յաջորդ կէսը եւ անոր հետեւող իր միւս «հաստատումնե-
րը» ու շարքութեան կը յանձնենք մեր յաջորդ թիւով :

Դ Է Մ Ա Ռ Դ Է Մ Մ. ԻՇԽԱՆԻ ՀԵՏ

ԲԱՆԱՍՏԵՂՇՈՒՔԵԱՆ,
ԼԵԶՈՒԻ ԵՒ ՅԱՐԱԿԻՑ
ՀԱՐՑԵՐՈՒ ՄԱՍԻՆ



- Իմ գիտակից եւ ենթագիտակից երեսներում վրայ եթէ որոշ տիրակալութիւն մը կայ, անիկա Օշականն է:
- Քերթուածը կեանքին յաւերժական գոյներուն անդրադարձումն ու ցոլացումն է բանաստեղծին հոգեկան աշխարհին մէջ:
- Գեղեցիկը սահման չունի: Աւելի կը զգացուի, քան թէ կը հասկցուի: Աւելի յուզում է, քան ըմբռնողութիւն:
- Լեզուն միայն արտայայտութեան գործիք չէ, որովհետեւ հագինն եւ մտքին հարագաստ պատկերն է լեզուն:
- Հայրենասիրութիւնը պառարով չ'ըլլար, տագնապով կ'ըլլայ, սպառնալով կ'ըլլայ եւ սրտեատի բխրեցուցումով կը դրսեւորուի:

• Ո՞նք արուեստագէտի համար, յատուկ նշանակութիւն ունին իր առաջին քայլերը: Փնտրտուիք եւ սեփական դիմագիծի յստակացման այս հանգրուանը երբեմն կը ստանայ փորձառական շրջանի մը նկարագիրը, իսկ առհասարակ կ'ըլլայ մշակութային անդրադարձներու, գրական սզդեցութիւններու, մերժումներու կամ հաշտեցումներու ժամանակը:

Հետաքրքրական պիտի ըլլար լսել ւելի քան քառասունեայ նանապարտի մը կտրած բանաստեղծ Մ. Իշխանը՝ «Տու-

նեքու կրդր» ձեր անդամիկ էնթրագագիւր նախորդած եւ յաջորդած օրերու գրական փորձառութեանց, ճգնումներուն եւ տաղնապնդումն շարք:

— Որքան կը սիշեմ, իմ մէջ գրական-նովիտանն ու յատկապէս բանաստեղծութեանն սկզբը շատ կանտիսէն արթնցաւ, սրտանի տարիքիս, երբ տակաւին նախկին ժողովրդանի վերջին կարգի աշակերտ էի: Հասնաբար այն պատճառով, որ ես յաջորդաբար տնկցայ կրկու գրող ուսուցիչներ, նախ՝ Արիս Շաքըլեանը, եւ

յետոյ՝ չայ գրականութեան արթուն պահիլը, Յակոբ Օշականը:

Գրական խառնուածքի տէր Արիս Շաքըլեանը, որուն մասին «Մնաս բարով մանկութիւն» կենսագրալէպիս մէջ գրած եմ արդէն, գոնէ իմ մէջ մեծ հետաքրքրութիւն արթնցուց բանաստեղծութեան նկատմամբ: Որովհետեւ դասականագութեան իր մեթոտը՝ հանդարտ ուժով, հանդարտ բնաւորութեամբ եւ առանց ճարտասանութեան արտասանելն էր Միամանթոյի, Վարուժանի, Մեծարենցի եւ մեր միւս մեծերուն ա՛յն բանաստեղծութիւնները, որոնք տեղ գտած էին Ռ. Զարդարեանի «Մեղրագետ»ին վերջին դիրքին մէջ:

Յետոյ, բախտը այնպէս բերաւ, որ նոյնինքն Շաքըլեանի քաջաբանքով ես գացի «Մելգոնեան» վարժարան՝ Յ. Օշականի աշակերտելու երազով: Պէտք է ըսել, որ Օշականը ո՛չ միայն եղաւ իմ մէջ գրականութեան սէրն ու ճաշակը յղիող ունուցիչը, այլեւ՝ նոր հորիզոններ բացաւ եւ շատ բաներ ալ քանդեց Շաքըլեանէն ստացած ծանօթութիւններէս ու տպաւորութիւններէս: Այդպէս էր Օշական: Մեր շարագրութիւններու ընթերցման յատկացուած դասապահերու ընթացքին, ան տեւական պայքար կը մըղէր հոետորութեան, գունազեղ ոճերուն եւ այն պերճ պատկերներուն դէմ, որոնք պատանի տարիքի տղոց հոգիները կը նուաճեն, կը տպաւորեն եւ կ'առաջացընեն այն զգացումը, որուն համաձայն՝ ամէնէն ղեղեցիկ գրականութիւնը պատանեկան զգայնութիւններու երազային աշխարհը ներկայացնելու ոտմանթիք չըքեղութիւնն է:

Հակառակ իր բարդ ոճին եւ հոգեվերլուծական խոր սուղումներով հարուստ գրականութեան, Օշական մեզի ներշնչեց իրական, այսինքն՝ պարզ եւ անպաճոյճ գրականութեան ճաշակն ու հասկացողութիւնը: Եւ ես, օգտուելով մեծ գրագէտին հոգածու վերաբերմունքէն՝ շարագրութեան տետրակիս մէջ երբեմն բանաստեղծութիւններ կը սահեցընէի:

● Լաւ, Օշական ի՞նչ վերաբերմունք կը ցուցաբերէր, երբ նման «մաքանեցուցութիւններ» կը կատարէիք: Կը բարկանա՞ր, թէ...

— Ո՛չ, չէր բարկանար, այլ կ'արձանագրէր իր դիտողութիւնները: Կը յիշեմ, որ բանաստեղծութիւններէս մէկուն տակը, կարմիր մելանով, արձանագրած էր երկար դիտողութիւններ. «Այս բանաստեղծութիւնը ուշադրութիւնս կը դըրաւ է իր զգացումներուն, պատկերներուն եւ ժուժկալ լեզուին համար, բայց Միսիլ եւ Վարուժան կը հօտի: Պէտք է ինքնութիւնը գտնես...», եւայլն:

Երկու տարի Օշականի աշակերտելէ ետք, երբ ձեմարան եկայ, արդէն բաւական հասունութիւն ունէի: Հոս մեր ուսուցիչը եղաւ բոլորովին տարբեր խառնըւածքի, տարբեր ըմբռնումներու տէր գրագէտ մը՝ Լեւոն Շանթը, որ դասականուման ընթացքին գլխաւորաբար կը ծանրանար լեզուական հարցերու վրայ. — բառերու բացատրութիւն, ստուգաբանութիւն, ծագում, եւայլն:

Ձեմարանի մէջ, նաեւ աշակերտեցի Նիկոլ Աղբալեանին, որ մեզի կը դասականէր Հայոց պատմութիւն եւ գրականութիւն: Սակայն ըսելիքս ա՛յն է, որ այս երկու մեծ դէմքերուն աշակերտելու բախտը ունենալով հանդերձ, գրականօրէն չեշտուած նոր ազդեցութիւն մը չըկրեցի, որովհետեւ Օշականի փոխանցած սկզբունքները արդէն կազմած էին զիս:

● Այսինքն՝ իրական կեանքէն նիւթեր փաղելու, պարգուութեան, կուռ նախադասութիւններու, «Գրականութիւն մը արեան երեւոյթ է, միտք, խելք, ոն ըլլալէ առաջ: Գրականութիւն մը ժողովուրդ մըն է» սկզբունքները, այնպէս չէ՞...

— Այո՛, այդ սկզբունքները, որոնք գրականութիւնը ամէնէն առաջ ինձի ըմբռնել տուին իբրեւ կեանքի իրապաշտ մօտեցում՝ ոտքը հողին վրայ հաստատելու պայմանով, եւ երկրորդ՝ որքան կարելի է խիստ ժուժկալութիւն, թէքեանական ըմբռնողութեամբ: Որովհետեւ

Օշականն էր Ափրուքի մէջ Թէքէկանը ծանօթացնող, սիրցնող եւ մեծցնող ամէնէն կարեւոր ազգակը՝ իր հարիւրաւոր աշակերտներով:

Օշականի արուեստի հիմնական ըմբռնումներէն մէկն ալ ա՛յն էր, որ ճարտասանութիւնը եւ բառերու առատութիւնը կը մնասեն քերթումովին: Յետոյ, այդ օրերուն, երբ շարադրութիւն կը գրէի, ես կը վախնայի ամականներ գործածելէ, որովհետեւ Օշական գէժ էր ամականին: Այս մէկ: Երկրորդ՝ երբ արծակ բան մը պիտի նկարագրուէր կամ պատմուէր, կ'ուզէր, որ կեանքին համը եւ հատը մէջը ըլլան, գրութիւնը ընթերցողը վարակէ հոն բռնուած ցեղային յատկանիշներուն, նկարագրային իւրայատուկ գիծերուն ջերմութեամբ, իրաւութեամբ, եւ ո՛չ թէ տողերը լեցուին խորհրդածութիւններով ու իմաստասիրական սուղումներով:

● Բայց կեանքի ամէնէն իրաւ, քանձրք, տաք եւ նոյնիսկ բիրտ ու վայրագ կացութիւնները գրականացնելով հանգեւրձ, Օշական նաեւ խոր սուգումներու, հոգեբանական թէ բնագանցական երկարաշունչ վերլուծումներու եւ հանգուցաւոր լեզուի անմրցելի վարպետն է, մա՛նաւանդ՝ իր վեպերուն մէջ: Այս մասին Օշականին հարցում ներկայացնելու առիթը ներկայացա՞ծ է ձեզի:

— Այո՛: Երբ պզտիկ տղաք էինք, հարցերը այսքան խորութեամբ չէինք կրնար դատել: Բայց երբ «պա՛րզ գրեցէք, պա՛րզ գրեցէք» կը կրկնէր անգաբար, կը յիշեմ, օր մը, մեզմէ մէկը ըստու. «Բայց պարտն, դուք շա՛տ բարդ կը գրէք»: Օշական փաղաքշական խստութեամբ մը նայեցաւ պահ մը եւ հայրական շեշտով ըստու. «Մօ, ինծի մի՛ նայիք, ինծի մի՛ նայիք: Դուք այդ բարդութեան հասնելու համար, պարզութեան մէջէն պիտի անցնիք...»:

Տակաւին լա՛ւ կը յիշեմ, որ երբ իմ առաջին շարադրութիւնս գրեցի մեծ յայտերով՝ կը սպասէի, որ զասարանին մէջ զգայացունց տպագրութիւն մը պիտի ձգեմ: Վերջապէս, բանաստեղծի հովե-

րով գացած էի Կիւրոս, եւ իմ երազներըս արդարացնելու համար, գրեցի բարձրաթիւղ սճով բան մը:

Օշական սովորութիւն ունէր ըսելու. «Նպիտակպոս, շարպաճի, դուն՝ մենծ ապա, ելիր, կարդա՛»: Երբ կարդը ինծի եկաւ, սկսայ կարդալ եւ աչքիս ծայրով հետեւիլ Օշականի գէժքի շարժումներուն: Նկատեցի, որ գէժքը ծամածուռ վիճակ մը ստացած է, գլխազծերը կընճռոտած են եւ գէժքին նստած ժպիտը հետըզհետէ աւելի կը թանձրանայ: Յանկարծ, «կեցի՛ր, կեցի՛ր» պոռաց եւ ձեռքին մէջ փշելով՝ «այս բոլորը օդ է» աւելցուց:

Վրաս պաղ ջուր մը թափեցաւ, թէ այսքան գեղեցիկ նախաւասութիւններ ինչպէ՛ս օղի կը վերածուին: Այնուհետեւ, հետզհետէ սկսայ ըմբռնել, թէ ի՛նչ ըսել կ'ուզէր Օշական: Բայց ցնցումներ ալ ունեցայ: Օրինակ, երբ «Մեղզոնեան» գացի, Աւետիս Ահարոնեանը ո՛չ միայն մեր մեծապն գրողներէն մէկն էր, այլ՝ եւ տեսակ մը սրբութիւն եւ Երկրագծութիւն կը ներշնչէր ինծի, յա՛տկապէս՝ «Ազատութեան քանապարհին»-ի կարգ մը պատմածքներով:

Եկաւ Ահարոնեանի գրութիւնները վերլուծելու դասադասը, եւ երբ Օշական սկսաւ ծանրօրէն քննադատել Հայ Կրականութեան Թուր Արամազդէին այն պատմըւածքները, որոնք նկարագրելու փոխարէն ճառին ուժ կու տան, խոր ընդլցում մը ունեցայ, թէ այսքան մեծ դրողի մը նկատմամբ ինչո՞ւ նման խաշակրութիւն կը սարքէ:

Մէկ խօսքով՝ այսպէս կազմաւորուեցայ եւ, կրնամ խոստովանիլ, մինչեւ այսօր ալ, ըլլա՛յ բանաստեղծութիւն, ըլլա՛յ արծակ կամ յողուած գրելու ընթացքիս, Օշականի անտեսանելի ներկայութիւնը կայ վրաս. «Զորպաճի, բառերդ յատակ գործածէ, ամականներէն խուսափէ, ամականները նախադասութիւնը կը ծանրացնեն, Ռուբէն Զարդարեանը այդ մեղքով կը տառապի...»:

● Դուք ունեցած էք բախար աշակերտելու տարբեր եւ նոյնիսկ իրարու

հակադիր խառնուածքներով բնորոշուող երեք տիրական դեմքերով՝ Յ. Օշականի, Լ. Շանթի եւ Ն. Աղբալեանի: Անկասկած, ասոնք ձեր վրայ ձգեցին իրարու բախող հակասական դրոշմներ, ինչ որ, շատ հաւանաբար, հանդիսացաւ ձեզ հարստացնող ազգակ մը:

Հետաքրքրական պիտի ըլլար գիտնալ, թէ ինչպէ՞ս յաշուեցաք հաշտեցնել իրարամերձ այս երեք բեւեռները եւ մէջտեղ բերել կեանքը ընկալելու ձեր աշխարհահայեացքն ու գրողի դիմագիծը:

— Այո՛, մեծ դժմբերու աշակերտելը ունի իր առաւելութիւնները, ինչպէս նաեւ՝ անոնց տիրակալութեան տակ իյնալու անպատեհութիւնը: Կրնամ անվարան ըսել, թէ իմ գիտակից եւ ենթագիտակից երեսներուն վրայ եթէ տիրակալութիւն մը եղաւ եւ կայ, անիկա Օշականինն է:

Միայն, ինչպէս ըսի, տարիներու ընթացքին եւ Շանթէն ստացայ աշխատանքի կարգապահութեան սկզբունքն ու պարզութեան խորհուրդը: Նոյն տեսակի մարդ էր Աղբալեանը, որուն համար արւեստը ուրիշ բան չէր, եթէ ոչ՝ տիեզերքի քոստին եւ անկանոնութեան մէջ կարգ ու կանոն ստեղծելու ճիգ մը, կարողութիւն մը, որուն շնորհիւ արուեստագէտն ու արուեստաբանը կը բիւրեղացնեն մըթութիւնները եւ իմանալի կը դարձնեն անիմանալին:

Օշական ինքը անկարգութեան մարմնացումն էր: Երբ դաս կ'առնէինք, ո՛չ գիտէինք, թէ ո՞ր շրջանին մէջ ենք եւ ո՛չ ալ գիտէինք, թէ հեղինակը ինչո՞վ կը կապուի անցեալին կամ ապագային: Օշական ասանկ բաներով չէր զբաղեր, ո՛չ ալ դասաւանդութեան մեթոտի կամ կարգապահութեան գաղափարը ունէր, և ինք կ'ընդունէր ասիկա: Բայց ան ալ ունէր ուրիշ յատկութիւն մը.— սուր զգայաբանք, այսինքն՝ կտորը ըմբռնելու, հոտոտալու, անոր արուեստի արժանիքները զգալու սանքը կու տար աշակերտին:

Այնպէս որ, երեք մեծ դժմբերու աշակերտելով՝ ես մասնաւոր դժուարութիւն մը չունեցայ: Ընդհակառակն, ա-

սիկա բարեմասնութիւն մը եղաւ իմ պարագայիս եւ թերեւս ալ ա՛յն պատճառով, որ, ինչպէս ըսի, զբաղանօրէն մասամբ կազմուած տարիքի մը մէջ հասայ ձեմարան:

● Վերադառնալով ձեր գրական նախափորձերու շրջանին: Ի՞նչ մթնոլորտ գոյութիւն ունէր այդ օրերուն եւ դպրոցը ի՞նչ համեմատութեամբ կը նպաստէր գրական խմոր ունեցող աշակերտները խթանելու աշխատանքին:

— Ձեմարանի մէջ, քանի մը ընկերներով, որոնց մէջ էր Անդրանիկ Մառուկեանը, մենք մեզի տեսակ մը զբաղան ապրումներու մթնոլորտ կը ստեղծէինք, ընթերցումներ ընկելով: Գրասեղաններուն վրայ փորձեցինք նոյնիսկ թերթ հրատարակել եւ միայն մէկ թիւ կրցանք տպարանէն լոյս ընծայել՝ «Յարդգոյ» անունով, որուն մէջ ես ստորագրած էի իմ առաջին երկու բանաստեղծութիւններս, Անդրանիկն ալ բանաստեղծութիւն ունէր անշուշտ, եւ Սմբատ Փանոսեանը՝ պատմուածք մը:

Այդ օրերուն, մենք մասնաւորաբար մտերիմ էինք 1933ին իր առաջին հատորը հրատարակած Վահէ-Վահեանին, որ մեզմէ քիչ մը մեծ ըլլալով՝ ուսուցիչ էր Պրումմանայի հայ-սքուլին մէջ: Բայց ան ամէն կիրակի Պէյրութ կ'իջնէր եւ մենք ծովեզերքը պտտելով՝ կը խօսէինք զբաղան հարցերու շուրջ:

Եթէ «Յարդգոյ»ը չհաշուենք, (որմէ միայն մէկ թիւ լոյս տեսաւ եւ տնօրէնութիւնն ալ մեզի արգիլեց զբաղիլ նման բաներով, որովհետեւ ըստ Շանթի տըւած բացատրութեան՝ այդպիսի հետաքրքրութիւնները իրենց բացասական անդրադարձը կ'ունենան աշակերտին ուսումնական մակարդակին վրայ), կրնամ ըսել, որ թերթի մէջ առաջին անգամ լոյս տեսած իմ պաշտօնական անդրանիկ բանաստեղծութիւնս պէտք է փնտռել «Հայրեմիք» ամսագիրի այդ տարիներու թիւերուն մէջ:

● «Յարդգոյ»ի շրջանին, երբ դուք

տեսակ մը գրական մթնոլորտ առաջացուցած էիք ձեզի համար, իրարու հետ գրական տեսակետներու բախումներ չէիք ունենար...

— Աւելի քան քառասուն տարիներ անցած են արդէն եւ երբ հիմա կ'ուզեմ վերյիշել այդ օրերը, մեր խօսակցութեան բոլոր մանրամասնութիւնները չեն վերականգնիր անշուշտ: Բայց կը յիշեմ, որ երբ միասին ծովեզերք կ'երթայինք, արուեստի հարցերու եւ մասնաւորապէս նաստեղծութեան շուրջ տաք վիճաբանութիւններ կ'ունենայինք:

Այնուամենայնիւ, կար ընդհանուր գիծ մը, որ մեզ իրարու կը միացնէր: Մենք, ինչպէս իւրաքանչիւր նոր սերունդ, շատ չէինք հաւնէր մեզ կանխած սերունդին՝ երէցներուն գրութիւնները: Մենք աւելի արուեստ կը փնտռէինք բանաստեղծութեան մէջ եւ, այդ իսկ պատճառով, լիրանանահայ ու սուրբահայ գրողներ անուշով ծանօթ Արամ Սահակեանի, Վարդան Գէորգեանի, Մովսէս Տէր Գալուստեանի (Ա. Այվազի), Արմէն Անոյշի եւ «Ջահակիր»ի շուրջ խմբուած միւս սուղ գրութիւնները շատ քիչ պարագաներու միայն գոհացում կու տային մեր խտտապահանջ ճաշակներուն:

● Ըսիք. «Մենք աւելի արուեստ կը փնտռէինք բանաստեղծութեան մէջ», բայց արուեստ ըսելով՝ ի՞նչ կը հասկընայիք:

— Արուեստ ըսելով՝ մենք չէինք ըմբռնէր ծայրայեղութեան հասած այսօրւան նորարարութիւնները, ոչ ալ յեղաշրջում մը՝ իրենց եւ մեր միջեւ, այլ կը հասկնայինք աւելի մշակուած, աւելի բարձրորակ բանաստեղծութիւնը:

Մնաց որ, իրենց եւ մեր միջեւ այդքան ալ խոր տարբերութիւն չկար, որովհետեւ թէ՛ մեր եւ թէ՛ իրենց վարպետները կը մնային Դուրեանը, Մեծարենցը, Վարուժանը, Սիամանթոն եւ Թէքէեանը, կարճ խօսքով՝ մեր դասական արժէքները: Բայց այս ըսել չէ, որ մենք անհավորք էինք օտար գրականութեան, ընդհակառակն, Փրանսերէնով կամ անգլե-

րէնով ընթերցումներ կը կատարէինք, եւ նոյնիսկ՝ թարգմանութիւններ: Սակայն մեր ընթերցումներն ու թարգմանութիւնները դարձեալ կ'ըլլային հանրածանօթ դասական բանաստեղծներու գործերէն:

● Հոս կայ հետաքրքրական հարց մը, գոր կարելի չէ անկատ քողով: Եթէ առնեմք սփիւռֆահայ գրողներու ձեր սերունդը, մեզի կը ներկայանայ երկու իմբատումներով. առաջին՝ լիբանանահայ եւ սուրիահայ գրողներու սերունդը, եւ երկրորդ՝ ֆրանսահայ գրողները:

Օրինակ, ձեր եւ ձեզի սերնդակից լիբանանաբնակ բանաստեղծներու գործերուն ընդմէջէն կը նշմարուի հայ դասական արժէքներու ուղիէն ընթանալու յըստակ ուղեգիծ մը: Մինչդեռ, Փարիզի գրողները կը յատկանշուին իրենց յանդգնութիւններով, այսինքն՝ նոր գրականութիւն մը մշակելու ըմբոստ նկարագիրով:

Անկասկած, միջավայրին ձգած ազդեցութիւնը հիմնական դրդապատճառներէն մէկն է այս բացայայտ տարբերութեան: Այդ օրերուն, գերիբապաշտ շարժումը ո՛չ միայն յեղաշրջած էր գրական չափանիշներն ու հասկացողութիւնները, այլեւ՝ նկարչութեան, ֆանդակագործութեան, երաժշտութեան եւ նոյնիսկ իմաստասիրութեան տարագներն ու ըմբռնումները: «Մենք»ի երիտասարդները կ'ապրէին ու կը շնչէին գերիբապաշտութեան յանդգնութիւններով զսպանակուած ֆաշիզմական մթնոլորտի մը ներքեւ եւ, բնականաբար, վերոյիշեալ շարժումը որոշ չափով պիտի արագանգէր նաեւ իրենց ստեղծագործութիւններուն մէջ:

Արդ, «Մենք»ի թիւերը Պէյրութ կը հասնէին, եւ եթէ կը հասնէին, Շահան Շահնուրի, Նիկողոս Սարաֆեանի, Զարեհ Որբունիի, Գրիգոր Ճիգմեանի եւ Շաւարշ Նարդունիի գործերը կարդալով՝ ի՞նչ կը մտածէիք այդ մասին:

— Ո՛չ միայն կը տեսնէինք «Մեմֆ»ը եւ Փարիզի տղոց միւս հրատարակութիւնները, այլեւ կը սպասէինք անհամբերութեամբ, որպէսզի կարգանք անոնց գրութիւնները: Օրինակ, Հրանդ Բալու-

եանի «Զուարթնոց»ը, որ «Մենեք»էն ետք իրենց բեմը դարձաւ:

Այս բոլորը մենք կը կարգայինք մեծ յափշտակութեամբ եւ կը կարծեմ, որ խորամաս մը չկար մեր ու իրենց բմբռնումներուն միջեւ: Անոնք մեր երէցներն էին եւ կը զգայինք, որ անոնց լեզուն աւելի թարմութիւն մը եւ որոշ յանդգնութիւններ կը բերէ հայ բանաստեղծութեան, զան մեր նահատակ գրողներուն գործերը, բայց ոչ բոլորովին խորթ ու դերիբապաշտներուն դասույզ գունաւորումով մը:

Ընդհակառակն, մեզի համար, բոլորն ալ ո՛չ միայն ըմբռնելի էին, այլեւ՝ հարազատ, հոգիի մօտ եւ գրուիչ: Սրբնակ, Վազգէն Շուշանեան մը, իր զգայնութեանց ջերմութեամբ եւ լեզուի ճութութեամբ՝ դրաւիչ էր մա՛նուանդ այդ տարիքին, երբ ամէն մարդ քիչ մը ուժանցիք կ'ըլլայ: Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի»ն կարգացած ենք մեծ յափշտակութեամբ, որովհետեւ ո՛չ մէկ տարբերութիւն ունէր մեր դասական գործերէն, բացի իր արագութենէն եւ արտայայտութեանց յանդգնութենէն: Անդին, Նիկողոս Սարաֆեանը այդ օրերուն չէր հասած այն մտային բանաստեղծութեան, որուն գիմեց աւելի ուշ. Թէեւ «Անջրպետի մը գրաւումը» հատորով՝ ան որոշ զարմանք պատճառեց մեզի:

Կը յիշեմ, որ երբ Աղբալեանը կարդաց այս գիրքը, ըսաւ. «Ախր, սրանք ո՛ւմ համար են գրում, ի՞նչ են ուզում ասել»: Աղբալեանը շարունակ կ'արտասանէր երազի մասին գրուած Սարաֆեանի մէկ բանաստեղծութեան հետեւեալ տողը. «Եւ երազը կաւ գայ ծիրս ծիրս ցեռի մը նման», ու կ'աւելցնէր. «Սա ո՛չ միայն բանաստեղծութիւն չէ, այլեւ զբռնչիկ է»:

Ուրեմն, կ'ուզեմ ցոյց տալ, որ անոնց բանաստեղծութիւնները ո՛չ թէ անմարտելի, այլեւ շա՛տ մօտ էին մեզի, իսկ Սարաֆեանը, առանձին առած, Փարիզի տղոց նկարագիրը չէր ցոլացներ:

● Երբ Փարիզի տղաքը ըսինք, մենք ի մտի չունէինք, օրինակ, զգացականու-

քեանք ծանրաբեռն Շուշանեանի արձակը, այլ՝ «Մենք»ի էջերուն բիւրեղացած այն յանգեղութիւնը, որ կը նպատակադրէր մշակել ընդլիմազիր գրականութիւն մը, եթէ այսպէս կրնանք ըսել:

Յանախ, մենք նկատի ունէինք գերիբապաշտ շարժումին հետ անոնց ունեցած մթնոլորտային անմիջական կապի պարագան: Ասոր լաւագոյն ապացոյցը Շահնուրի «Նահանջը առանց երգի»ն է: Շահնուրի գլուխ-գործոցին էջերուն կան դատումի եզանակներ, արտայայտութեանց ձեւեր, որոնք պատուաւ մըն են հայ արձակի հաշտոյն, առնուած՝ գերիբապաշտ գրականութեան էութենէն:

Պարզ օրինակ մը տալու համար, յիշեմք Նարեկացիին հասցէին բուն յարձակումներ կատարող հատուածը, որ ձեռով մը արձագանցն է ֆրանսական գրականութեան դասական արժեքները հաւաքական արժեքովման եկեղեցիով ա՛յն դատաստանին, արուն դիմեցին Պրոքոն Եւ իր գրչակիցները՝ Հիւկոյի, Լամարթինի, Անտրէ Մորուայի, Անաթոլ Ֆրանսի, Անտրէ Ժիտի եւ Քլօտէլի նման արժեքները հոչակելով ձախողած գրագէտներ:

Տակաւի՛ն. Շահնուրի եւ Շուշանեանի բնագրական խիզախումները, մերժումներն ու յարձակումները, գործում՝ Զուպէլ Եսայեանի, Կոստան Զարեանի, Ռուրէն Զարգարեանի եւ այլ տաղանդներու վրայ, գերիբապաշտ շարժումին — մասամբ՝ նա՛եւ Օշականի — ձգած ազդեցութեան արդիւնքն են:

Բանաստեղծութեան կալուածին մէջ, մա՛նուանդ «Անջրպետի մը գրաւումը» քերթագագիրքէն ետք եւ յա՛տկապէս «Տեղատուութիւն եւ մակընթացութիւն» հատորի էջերուն, Նիկողոս Սարաֆեան ըզգալիօրէն օգտուեցաւ օրուան նորագոյն ըմբռնումներէն, երբ իր քերթումները գալանակեց իր եկեղեցիակից աշխարհին խորերն ի վար կատարուած սուղումներով, տեսիլներու բացուող պատկերներուն հոգեվիճակային խտութեամբ, գերիբապաշտներու անկաշկանդ մտածողութենէն թափ առած փոքորկումներով եւ այլ յատկանիշներով: Գեղագիտական այս դիմագիծը գոյ է նոյնիսկ իր վերջին հա-

տորին՝ «Միջերկրական»ի մէջ, ուր Սարաֆեան յաջողեցաւ միամտիկ դասականել եւ գերիրապաշտ բանաստեղծութեան հակադիր ըմբռնումները՝ դասական կուստարագի մը մէջ: Համաձայն է՛:

— *Ճիշդ է, որ ասոնք սրտը անդրադարձներն են իրենց ազրած միջավայրին, բայց մեր պատանի եղած օրերուն, Սարաֆեանը անգամ այդ նորութիւններուն չէր հասած: Յետոյ, Օշականն իսկ Սարաֆեանի բանաստեղծութիւնները չէր հունկեր եւ սկսաւ հասնել այն ասեռն միայն, երբ «Նայիրի» ամսագիրին մէջ տպուեցաւ անոր «Վեհաճի անտառը», որը կարգալէ Լաք մեծ ջննդատար ըսաւ. «Նոր սկսեր է գրագէտ դառնալ»:*

Բայց կ'օղեմ ընդգծել, որ մեկ նախորդած սերունդին, այսինքն՝ Շահնուրի, Շուշանեանի, Նարգունիի, Արբուսիի եւ այլ գրողներու գործերը մեզի խորթ չէին թուեր: Մէկ բան միայն նոր ուցնցիչ էր իրենց մօտ, այն ալ՝ այդ գրողներուն երբեմն զազախարական յանդըպնութիւններն էին, ծայրայեղ յարձակումները, եւ ասոնք հաճելի էին մեր սերունդին համար, որ կ'ապրէր առելի խելօք միջնորդութիւն մը մէջ:

● Կրնամք ըսել, որ սփիւռքահայ եւ յա՛տկապէս լիբանանահայ գրականութեան հոլովոյթին հետ, բանաստեղծ եւ արձակագիր Մ. Իշխանը կտրեց շուրջ 50-ամեայ նանապարհ մը: Այդ նանապարհի ընթացքին, դուր ո՛չ միայն մօտէն հետեւեցաւ կատարուած ֆայլափոխումներուն, այլեւ միեւնոյն ատեն ձեր աշխոյժ մասնակցութիւնը բերիք այս գրական յառաջխաղացքին՝ հանդիսանալով ամէնէն կենսունակ եւ ուշագրաւ ներկայացուցիչներէն մէկը լիբանանահայ գրականութեան: Քննելի ընդարձակ աշխարհ մըն է սփիւռքահայ գրականութիւնը, իսկ հարցերը բազմազան են:

Ոմանց կարծիքով, չկայ սփիւռքահայ գրականութիւն՝ սփիւռքահայ սահմանումը իր կենցաղային, ընկերային, տեղայնական, գաղափարական ու մա՛նաւանդ գրական ինքնուրոյն գիմագիծ ու-

նեցող միութեան մը հասկացողութեամբ առած, այլ գոյութիւն ունին իրարմէ անկախ, Ամերիկայի, Ֆրանսայի, Լիբանանի եւ արսեպրիի այս կամ այն անկիւնը բնակող հայ գրողներ, ինչպէս կը գրէր Շահան Շահնուր, իր կեանքի վերջին տարիներուն:

Արդ, ի՞նչ է ձեր տեսակէտը այս ուղղութեամբ, եւ եթէ սփիւռքահայ գրականութեան մը գոյութիւնը պաշտպանողներէն է՛ք, ըստ ձեզի՝ որո՞նք են անոր յատկանիշները, բնորոշ գիծերը, նկարագրային մայր երակը եւ, օրինակ, լիբանանաբնակ հայ գրողներու ստեղծագործութիւնները իրարու կամրջող այն շաղխն ու տաւալները, որոնց վրայ կը խաբսխուի իր հասարակ յայտարարը ունեցող օրեւէ գրական շարժում:

— *Կը խորհիմ, որ շատ ճիշդ բացատրութիւն մը տուած պիտի չըլլանք, եթէ ըսենք. «Չկայ սփիւռքահայ գրականութիւն, կան գրողներ միայն»: Թերեւս այս կարծիքը յայտնուցները այն իմաստով ըսած են, որ ընդհանրական դիմագիծ ունեցող գրականութիւն մը դժուար է հանել ամբողջ Սփիւռքէն: Որովհետեւ ամերիկահայ գրականութիւնը տարբեր նկարագիր ունի, Ֆրանսահայը՝ տարբեր, լիբանանահայը՝ նմանապէս, եւ սրով՝ սփիւռքեան ընդհանուր դիմագիծ մը չունին ասոնք:*

Այս իմաստով, թերեւս ճիշդ է ըսել, որ սփիւռքահայ գրողներ կան, բայց զըրականութիւն չկայ: Սակայն ինչպէ՞ս կ'օղէիք, որ ըլլար այդ ընդհանրական դիմագիծը, երբ Սփիւռքը մէկ ամբողջութիւն չի ներկայացներ: Այսօր, իր բարձրով, մասնութիւններով, միջավայրով եւ միջնորդութեամբ Ֆրանսահայ մեր գաղութը նմանութիւն չունի Ամերիկա ապրող մեր գաղութին հետ, ոչ ալ՝ լիբանանահայութեան հետ: Ճիշդ այս պատճառով ալ, իւրաքանչիւր դադիթօճախի մէջ ծաղկող հայ գրականութիւնը ինքնայատուկ գիծեր ունի, եւ ոչ թէ ընդհանրական դիմագիծ:

Իմ կարծիքով, մէկ բան ալ պէտք է ընդունել, որ մեր գրողները առհասարակ

զազութի կեանքը չէ որ տուին, այլ իրենց առանձնութեան մէջ ամփոփուած՝ տուին իրենց իւրապատուկ ապրումները, հայրենական զգացումները եւ կարօտի հոգեվիճակները: Այդ իսկ պատճառով, զազութները դժուար թէ արտացոլան իւրաքանչիւր զազթօճախի գրողներու խումբին ստեղծագործութեանց մէջ: Օրինակի համար, առնենք ամերիկահայ գրականութիւնը: Ամերիկայի զազութին կեանքը՝ իր տեղական պայմաններով, բարբերով, կենցաղով ու մթնոլորտով, շատ տարածաօրէն կը ցոլանայ Համատեղի կամ Արամ Հայկազի գրականութեան մէջ:

Միացեալ Նահանգներ ապրելով հանդերձ, Համաստեղ ամերիկահայ կեանքը չէ որ տուաւ, այլ՝ հայ գիւղի կեանքը, իր յիշողութեան մէջ ծաւալող կապոյտ անցեալը:

● Ճիշդ է, Համաստեղ շարունակեց ապրիլ անցեալի մէջ՝ վերյուշի նամբով, բայց Արամ Հայկազի գրականութեան առիքով նոյն բանը չենք կրնար ըսել, որովհետեւ վերջինին պատմութեան մէջ կ'երթեւեկեն թէ՛ հայը, թէ՛ փոքրօրիֆոցին, թէ՛ չինացին, թէ՛ իրլանտահին, թէ՛ մեքսիկացին եւ թէ՛ այլ ազգութիւններու պատկանող իր դրացիներն ու հերոսները: Եթէ Արամ Հայկազի առաջին գիրքերուն մէջ ասոնք մերթ ընդ մերթ յայտնուող հերոսներ են, «Պանդոկ»ի եւ «Ներջանկութիւն» խորագրեալ հատորի շեշտուած կերպով: Տակաւի՛ն. վերջին տասնամեակի ընթացքին, Արամ Հայկազի գրականութիւնը կամաց-կամաց, բայց հետեւողական կերպով բացուեցաւ ամերիկեան միջավայրին, բարբերուն, կենցաղին, այլ խօսով՝ ամերիկեան կեանքին: Զե՞ք կարծեր:

— Որոշ չափով ճիշդ է: Վերջին շրջանին, ան քնարական եւ գուարթախոհ շունչով մը նկարագրեց իր թաղը, գրացիները, փորձառութիւնները, եւ այլն: Մինչդեռ իմ մատնանշել ուզածս հետեւեալն է...

● Լա՞յն տարողութեամբ...

— Ոչ անպայման լայն պատաստով տրուած Ամերիկայի կեանքը, որ ամերիկացի գրողներուն գործերուն մէջ գոյութիւն ունի, այլ՝ Միացեալ Նահանգներ բնակող հայուն հոգեկան ապրումները, վիճակը՝ բախումի մէջ ամերիկեան քաղաքակրթութեան հետ, որ խորթ է վերջի վերջոյ, եւ տակաւին՝ հայկական հոգիին արտացոլացումը, ամէնօրեայ պայքարը եւ տագնապը: Ասիկա շատ քիչ չափով կայ ամերիկահայ գրողներու գործերուն մէջ:

● Կը կարծեմ, որ ձեր փնտառած այս յատկանիշը կրնամք գտնել Յ. Կարապետցի եւ Երիտասարդ արձակագիրներէն ու մանց պատմութեան մէջ: Ամերիկեան բարբերը, տագնապները, ընկերային ու հոգեբանական վերիվայրումները, իսկ միւս կողմէ՝ օտար հողի վրայ ապրող հայուն հոգեկան տուայտանքները այն աստիճան շեշտուած գիծերով մարմին կը ստանան Յ. Կարապետցի «Անծանօթ հոգիներ», «Նոր աշխարհի հին սերմնացանները» եւ «Կարթագէնի գուտորը» հատորներուն մէջ, որ մեզի թոյլ կուտայ ըսելու, թէ այս գիծերը Յ. Կարապետցի գրականութիւնը բնորոշող տրեւելներուն մէկ նկատառելի մասը կը կազմեն:

— Ճիշդ է: Բայց գրական այս շարժումը հնարաւորութիւն պիտի ունենա՞յ շարունակուելու յաջորդ սերունդներով, Ամերիկայի հողին վրայ:

Այս իսկ է բուն ինդիքը: Դժուար է յուսալ, որ հայերէն լեզուով ստեղծագործող, հայու տագնապը արտայայտող նոր գրողներ մէջտեղ գան հոն, եթէ անշուշտ Կարապետցի նման «ներածուած» չեն, իրենց կազմաւորումը Միջին Արեւելքի մէջ ստանալէ ետք:

● Իսկ ի՞նչ կը մտածէք փրանսահայ արձակի մասին: Կը կարծե՞ք, որ նոյն հաստատումը կրնամք կատարել Շահան Շահնուրի, Հրաչ Զարդարեանի, Զարեհ Որբունիի, Նշան Պէշիկթաշլեանի, Նիկո-

դու Սարափեանի եւ այս սերունդի մնացեալ գրողներու գործերուն առիթով նաև :

— Աշխարհագրականօրէն մեզի ամէնէն մօտը Ֆրանսահայ գրականութիւնն է, որ ամէնէն աւելի տիրապետողն ու ճոխը եղաւ սկզբնական շրջանին : Ի՞նչ կը գտնենք այնտեղ, եթէ ոչ Շահան Շահնուրի մը «Նահանգը առանց երգի»ն, որուն մէջ այդ բախումը իսկապէս կայ, առաջին իսկ վայրկեանէն : Այսինքն՝ Ֆրանսայի կեանքը, ամէնօրեայ վազքը, գայթակղեցնող մթնոլորտը, ազատ բարքերը եւ հայ տղոց ողբերգութիւնը :

Այս բոլորը կան «Նահանգը առանց երգի»ին մէջ, բայց մնացեալները դարձեալ առանձնացած մարդու մը ներքին ապրումներն են, առաւել կամ նուազ չափով՝ յաջող կամ անյաջող : Օրինակ, Շաւարշ Նարդունի մը, նոյնիսկ Վազգէն Շուշանեան մը ի՞նչ տուած են Ֆրանսահայ կեանքէն : Դարձեալ քնարերգութիւն է, գրողին եւ հերոսներուն ներքին ապրումներն են, սիրային զգացումները, եւ այլն : Նոյնը կրնանք ըսել լիբանանահայ գրականութեան առիթով :

● Լիբանան անցնելէ առաջ, կարելի է ե՛ւ համաձայն ըլլալ ձեզի հետ, ե՛ւ համաձայն չըլլալ : Ճիշդ է, որ Նարդունի, Պէշիկթաշլեան եւ Շուշանեան իրենց լուսարձակը չկեդրոնացուցին ֆրանսական կեանքին վրայ, բայց նոյնը չենք կրնար ըսել, երբ մեր աչքերուն դիմաց կը պատկերացնենք Ջարդարեանի, Որբունիի եւ Սարափեանի գործերը :

Մեր համոզումով, Շահնուրը, Ջարդարեանը, Որբունիին եւ Սարափեանը բաւական լայն պաստառով անդրադարձան ֆրանսական իրականութեան, այս նոր մթնոլորտին մէջ տուայտող գաղթական հայուն ապրումներուն, հայկական ու տեղական բարբերու միջեւ կատարուող ամէնօրեայ բախումին եւ այն յարափոփոխ հոգեվիճակներուն, որոնց քատերաբեմներն են Ջարդարեանի «Մեր կեանքը», Սարափեանի «Խորիսխէն հեռու»ն, «Տեղատուութիւն եւ մակընթացութիւն»ը եւ Որբունիի գրեթէ բոլոր գործերը :

— Այո, որոշ չափով : Բայց հիմա կը տեսնէ՞ք, ամէն մէկը առանձին միութիւն մըն է, կարելի չէ սփիւռքեան ընդհանուր յատկանիշներու գումար մը ըստեղծել եւ ասով բնորոշել արտերկրի գրականութիւնը :

Լիբանանը աւելի լաւ գիտենք : Սկզբնական շրջանին կարօտի երգեր էին, ինչպէս քիչ մը ամէն տեղ : Եւ եթէ Համաստեղ այդ կարօտի երգը արտայայտեց վերջիշումի ճամբով կամ գիւղի վերըստեղծումով, այստեղ ալ անիկա մարմին ստացաւ անցեալի, կորսուած կեանքի, կարօտի կանչերով կամ մանկութեան յուշագրութիւններով :

Պէտք է ընդունինք, որ դժբախտաբար շատ քիչ բան տուինք հետազային հոս հաստատուող, կեանքի սլայքար մըրդող, հիւզաւաններ ստեղծող, Գուրճ Համուտ ստեղծող ժողովուրդին առօրեայէն : Այդ շրջանի կեանքի իրականութիւնը՝ իր մութ ու լոյս երեսներով, իրապաշտ վրձինով նկարող գրագէտներ չունեցանք պէտք եղած չափով : Եթէ փընտռենք, անշուշտ, հաս ու կտոր բաներ կը գտնենք :

● Կարելի է համաձայնիլ ձեզի հետ՝ հետեւեալ առումով : Օրինակ, եթէ պահ մը աչքի առջեւ ունենանք Գրիգոր Զօհրապի պատմուածքները, Երուսանի պատմուածքներն ու «Ամիրային աղջիկը», Զապէլ Եսայեանի գործերը, Յակոբ Օշականի «Խոնարհներ»ը, «Ծակ պտուկ»ը, «Մնացորդաց»ը եւ միւս հատարները, ինչպէս նաեւ՝ Թլկատիցիի, Մինաս Զեբազի, Պարոնեանի, Օտեանի, Արփիարեանի եւ այդ օրերու գրեթէ բոլոր արձակագիրներուն գիրքերը, կը նշմարենք յըստակ յատկանիշ մը, — կենցաղային եւ ազգագրական տարբերուն խիտ ներկայութիւնը :

Պոլիսը, արուարձաններն ու գաւառները ո՛չ միայն ներկայ են հոն՝ այս կամ այն դասակարգը բնորոշող տիպարներով, այլեւ՝ իրենց ընկերային մթնոլորտով, ազգային ու թրքական բարբերով, մտածողութիւններով, կեցուածքներով, աշխարհահայեացքով եւ, նոյնիսկ, ախտա-

բանական երեւոյթներով, կարն խօսքով՝ կեանքի մը հեւքն ու հոլովայթը յատկանշող գանգամ տուեալներու ամբողջութեամբ:

Մինչդեռ, լիբանանեան իրականութիւնը յանախ բացակայ է մեր արձակագիրներու գործերուն մէջ, գէթ մինչեւ յիսունական թուականներ: Ինչպէս կ'ըսէիք, կարօտի երգեր էին առաջին սերունդի գրողներուն գործերը: Նկատի ունիմ «Հացի եւ լոյսի համար» եւ «Հացի եւ սիրոյ համար» անուն ձեռնարկները, Ծառուկեանի «Մանկութիւն չունեցող մարդիկ»ը եւ նմանօրինակ այլ գիրքեր: Բայց յիսունական թուականներուն արդէն որոշ յառաջխաղացք մը սկսաւ: Հիմա, կը յիշեմ Եդ. Պոյանեանի «Հողը», որ կարօտի երգ մը ըլլալով հանդերձ, լուսարձակը կը կեդրոնացնէր Լիբանանի մէկ հոգակտորին հետ պայքարող գաղթականներուն առօրեային եւ անոնց ներքին տրւայտանքներուն վրայ:

Այս տուայտանքը իր հասունացումը սկսաւ գտնել վաթսունական թուականներուն, երբ հրապարակ իջան երիտասարդ գրողներ, որոնք դուրս գալով հիւզաւաններու եւ յիշողութեան ներամփոփ սահմաններէն՝ բացուեցան լիբանանեան իրականութեան:

Խօսքը այս սերունդի գործերուն գեղարուեստական մակարդակին մասին չէ: Անիկա առանձինն քննելի հարց է եւ կը կարօտի առարկայական տուեալներու, որոնք այս պահուս մեր տրամադրութեան տակ չեն գտնուիր:

Բայց մէկ բան յստակ է, որ տեղական գոյները չէին ու չեն յստակացած ցարդ: Աւելի՛ն. Լիբանանը քաղաքացիական պատկանելիութեան գիտակցութեան եւ գաղափարական հասուն կեցումով մը վրայ խարսխուած ներկայութիւն մը չէ լիբանանահայ արձակին մէջ: Զե՞ք կարծեր:

— Անշուշտ: Եթէ մէկը Լիբանանի մէջ ապուած հայերէն գիրքերը սեղանի վրայ դնէ եւ ուսումնասիրէ, իր առջեւ պիտի ունենայ որոշ պատկեր մը եւ որոշ գոյներ, որոնք իրարու պիտի յաջորդեն:

Եթէ առաջին շրջանը պիտի կոչէ «կարօտի շրջան», պիտի դայ յաջորդ տասնամեակը, ուր արձակը աւելի իրապաշտ պիտի ըլլայ եւ պիտի ստանայ լիբանանեան դունաւորում: Այս բոլորը պիտի ըլլան:

Հիմա, մեր ըրածը ընդհանուր խօսքեր են, առանց մեր տրամադրութեան տակ անհրաժեշտ փաստաթուղթերը ունենալու: Սակայն պէտք է գրուի. սփիւռքահայ գրականութեան պատմութիւնը դրեւու աշխատանքը բաւական լուրջ եւ երկարատեւ ճիգի կը կարօտի, թերեւս շատ աւելի դժուար, քան նախորդ շրջանները: Որովհետեւ նախորդ շրջաններու գրականութեան մասին, առաւել կամ նրաւազ չափով, ուսումնասիրութիւններ եւ ձեռնարկներ կային արդէն, յետոյ՝ բիւրեղացած էր, ժամանակը մաղած էր եւ իր խօսքը ըսած:

Բայց սփիւռքահայ գրականութեան պատմութիւն մը, սփիւռքահայ բոլոր օճախները եւ գրողները աչքի առջեւ ունենալով, անհրաժեշտ է գրել: Յարգ չըրատարակուած գիրքերը հաւաքածոներ են աւելի, քան թէ վերլուծում ու թափանցում գրականութեան տեսակին եւ որակին մէջ: Չեմ գիտեր երբ պիտի ըլլայ այս կարեւոր աշխատանքը, ով պիտի ընէ, որ բիւրեղացնէ այս շրջանը, որուն մէջ մենք անմիջականօրէն խառնուած ենք: Բայց երեւի քիչ մըն ալ պէտք է ըստպատեմ, որպէսզի ժամանակը բիւրեղացնէ սփիւռքահայ գրականութիւնը եւ ըսէ իր վճռական խօսքը:

● Կը կարծենք, որ այս հարցը հիմնականօրէն կ'աւրնչուի սփիւռքահայ գրողին ընկերային գիտակցութեան հետ: Ոեւէ գրագէտ, ուզեմք կամ չուզեմք, հանձնարով, տաղանդով կամ ստեղծագործելու բնատուր շնորհով օժտուած ըլլայ կամ ոչ, ընկերային երեւոյթ մըն է, ընկերային պայմաններուն մէկ արդիւնքն է:

Հետեւաբար, գրագէտը ընկերային և մշակութային պարտականութիւն մըն է նաեւ, որովհետեւ ինչպէս Պապտոն կ'ընդգծէ, մշակոյթի մը գարգացման համար

էապէս անհրաժեշտ են մշակութային պարզ բանուարներու, այսինքն՝ միջակէն վար եղող գրողներու մեծ թիւն ու անոնց կայտառ մասնակցութիւնը:

— Կատարելապէս համաձայն եմ:

● Այս առումով, գրողը ընկերային եւ մշակութային պարտականութիւն մըն է, հիմնական յծակ մը, եթէ «ընկերային ու մշակութային առաքելութիւն» սահմանումը քիչ մը շատ տեսնենք եւ չուզենք գործածել: Այսինքն՝ եթէ իբրեւ գրող ան նոյնիսկ մտածէ իր անձնական տագնապներուն մասին, պէտք է գտնուի իր անհատական հարցերը ընկերութեան հաւաքական տագնապներու մակարդակին բարձրացնելու, գտնուի բնականաբար փոխանակուի եւ արմատական լուծումներ եզրահանելու բարոյական պարտաւորութեան տակ:

Արդ, աւելի քան քառասունամեայ ձեր գրական գործունէութեան ընթացքին, անկասկած, դուք ապրած էք գրողին սահմանումը ընկերային առաքելութեան լուրջ դերին դժուարութիւնները եւ բախտը՝ այս ուշխատանքին առջեւ բարձրացող խոչընդոտներու: Կը հանէի՞ք քիչ մըն ալ խօսիլ այս մասին:

— Կ'ըսէիք, թէ զբաղանութիւնը եւ մշակոյթը ընկերային երեւոյթ է, համաձայն եմ: Իմ համոզումով, զբաղանութեան եւ մշակոյթի ծաղկումին մէջ շատ կարեւոր ու մեծ դեր ունին զբնի պարզ աշխատատեղերը: Որովհետեւ, եթէ տաղանդ ունեցող զբաղէտը գլխաւոր պարտիւղանն է եւ ինքն է սերմնացանը զբաղանութեան անդամանին, այսուհանդերձ, այդ հողը փոքրոցները, պարտէզի գեղեցկացման եւ անխաթար պահպանման աշխատանքին լծուած անձուն պահակները, ծառերուն շուքին եկող նստողները, ծաղիկներն ու այգեկոթքը ըմբռնողները, այլ խօսքով՝ ամբողջ բանակ մը կայ, որոնք եթէ չըլլան՝ դրահանութիւնը կամ մշակոյթը չի ծաղկիր:

Ես բնաւ համաձայն չեմ անոնց, որոնք կ'ըսեն, թէ զբողը կամ արուեստագէտը ժողովուրդին պէտք չունի, ինքն

իրեն համար կը գրէ, ընթերցող եղած է՝ չէ եղած, հաւնած են՝ չեն հաւնած՝ ոչ մէկ նշանակութիւն ունի:

Լա՛ւ, եթէ պահանջ մը ունիս՝ կը նստիս-կը գրես, յետոյ դարակը կը նետես: Ես այս բաներուն չեմ հաւատար: Այո, կը նստիս-կը գրես, դարակը ալ կը նետես, նոյնիսկ ութ-տասը տարի ալ կը կրնաս չմտածել հրատարակելու մասին, բայց մթնոլորտ մը կայ, գրական-մշակութային մթնոլորտ ըսուածը, որուն համար ընկերութիւն պէտք է, եւ ո՛րքան որ այդ ընկերութիւնը պահանջը ունենայ գեղեցիկին, բանաստեղծութեան, արուեստին եւ փնտռէ դոյն, ա՛յնքան աւելի կը ջերմանայ այդ մթնոլորտը: Որովհետեւ իր դասախօսութիւններով, իր քնննադատութիւններով, իր գնահատումներով, իր վնասներով, իր մերժումներով, այս բոլորով է, որ ընկերութիւնը ետուդեւ մը կ'առաջացնէ զբողին շուրջ եւ արուեստագէտը կը մղէ ստեղծագործելու:

Վերջապէս, եթէ ժողովուրդ չըլլայ, գիտնաս, որ բնաւ հայերէն կարդացող պիտի չըլլայ, հայ գրողը ի՛նչ ոգևորութեամբ պիտի արտագրէ: Այս իմաստով, աշխարհի ամէն կողմ, բոլոր աղպերու մօտ ալ, զբաղանութիւնն ու արուեստները առհասարակ ընկերային երեւոյթ են, որոնց զարգացման մէջ մեծ դեր կը խաղան նա՛եւ զպրօցը, նա՛եւ մամուլը, նա՛եւ բեմը, նա՛եւ զբողարանները, զբախանութիւնները եւ այն բոլոր ձեռնարկները, որոնք կը ծառայեն մշակութային մթնոլորտի առաջացման ու աշխուժացման:

● Կը կարծենք, որ լաւ պիտի ըլլար, եթէ քիչ մըն ալ ծանրանայիք գրողին ընկերային պարտաւորութիւն մը ըլլալու իրողութեան վրայ: Նախ՝ դուք ի՞նչ ձեռնով յաջողեցաք ձեր ներքին տագնապները բարձրացնել ընկերային հաւաքական տագնապներու մակարդակին, յատուկ սխիթեմ մը որդեգրեցի՞ք, երկրորդ՝ ինչպէ՞ս հարթեցիք ձեր դիմաց բարձրացող խոչընդոտները՝ իբարու հետ հաշտեցնե-

լով ընկերութեան հանդէպ ձեր ունեցած քաղաքացիի պարտաւորութիւններն ու արուեստագէտի ձգտումները :

— Շատ բնական է, որ գրողը իր անձնական տաղնապին տայ համամարդկային տարողութիւն եւ շունչ : Կան գրողներ, որոնք սկիզբէն գիտեն, թէ առաքելութիւն մը ունին, կոչուած են գաղափար մը տարածելու, եւ այդ գիտակցութեամբ կը սկսին իրենց գործը, այսինքն՝ իրենց հիմնական նպատակը կը գործնեն գաղափարի մը պաշտպանութիւնը :

Կրնայ ըլլալ, որ իրենց արտադրութիւնները տան յաջող ձեւով, եթէ քարոզչական գունաւորում չստանայ : Բայց, առհասարակ, երբ գրող մը սկիզբէն ճամբայ ելլէ որոշ գաղափար մը բազմութիւններուն ներշնչելու տեսլականով, միշտ վախ կայ, որ գործերը քարոզչական բռնոյթ ունենան :

Նաեւ կան ուրիշ գրողներ, որոնք երբ կը գրեն, երբեք նկատի չեն ունենար գաղափար մը տարածելու հարցը, այլ իրենց ներքին աշխարհէն բխած պատգամը ինքնաբերաբար կը շարունակ իրենց գրութիւններուն հետ եւ ժողովուրդը կը ստանայ պէտք եղածը :

Հիմա, ասիկա խառնուածքի, քամփերամանի տարբերութիւն է : Կայ նաեւ երկրորդ հարց մը, — արուեստագէտը կամ գրողը որքանո՞վ նաեւ կեանքին մէջ գերակատար պէտք է ըլլայ, պէտք է առանձնանա՞յ իր փոփոխութեայ աշտարակին մէջ, թէ՛ ամբողջներուն հետ խառնուի ընկերային պայքարներու դաշտին վրայ : Իմ կարծիքով, գրող մը հոս եւս անկեղծ պէտք է ըլլայ ինքն իրեն հետ. արուեստական ձեւով, «ես ալ այսպէս բաներ ընեմ» ըսելով՝ ուրիշները պէտք չէ կապկէ, այլ պէտք է անսայ իր ներքին ձայնին :

● Բայց չէ՞ք կարծեր, որ գրողը մարդկային, ազգային ու քաղաքացիական կեցուածք ալ կը նշանակէ :

— Անկասկած : Բայց կան գրողներ, որ չունին այդ խառնուածքը : Յետոյ՝ գրող ըլլալու ալ պէտք չկայ, որովհետեւ

կան մարդիկ, որ ընկերային կեանքին եւ ընկերութեան մէջ պայքար մղելու, գերակատար ըլլալու խառնուածքը չունին, իսկ անդին կը տեսնենք գրողներ, որոնք որքան արուեստագէտ, նոյնքան ալ կիրք ունին ընկերութեան մէջ գերակատար ըլլալու : Կարելորը անկեղծութիւնն է :

Օրինակ, աչքիս առջեւ կու գայ Շանթը, գրասենեակի մարդ, որ չէր սիրեր ամբողջը, չէր սիրեր ընկերային կեանքի այդ թոհուրոհը, այդ իրարանցումը : Իսկ Աղբալեանը հակապատկերն էր : Եւ Շանթը կը հաւատար, որ արուեստագէտ մարդը կը տուժէ, եթէ խառնուի այդ բոլորին, եթէ ձգէ իր գրասեղանը, որովհետեւ ինք կը հաւատար, որ իր առաքելութիւնը գրական գործեր ստեղծելն է :

● Երբ պարզ քաղաքացի պարտաւորութիւններ ունի ընկերութեան հանդէպ, անկասկած, գրողը, որ նաեւ ընկերային յստակ պարտականութիւն մը կը նշանակէ՝ իրբեւ մտածող եւ ժողովուրդներու մանապարհը լուսաւորելու կոչուած անձ, ունի կրկնակի պարտաւորութիւններ : Երբ «գրագէտը մարդկային, ազգային ու քաղաքացիական կեցուածք ալ կը նշանակէ» կ'ըսէինք քիչ առաջ, կ'առաջնորդուէինք գրողին սահմանուած կրկնակի պարտաւորութիւններու տրեւալներէն :

Լաւ, եթէ այս է նշմարիտ գրագէտը, այդ պարագային՝ ան ինչպէ՞ս կրնայ խուսափիլ իր կոչումը իմաստաւորող այս բարոյական պարտաւորութենէն :

— Նպատակադիր ձեւով ճամբայ ելած գրողի առաքելութեան մը կողմնակից չեմ, հակառակ անոր, որ իմ սրտունդիս մէջ, գոնէ «Տուներու երգը» ամէնէն յանձնառու գործն է : Բայց խորքին մէջ, գրուած ատեն, ես այսպիսի խնդիրներու մասին չեմ մտածած, որ ասիկա կրնայ ծառայել հայրենասիրութեան կամ կրնայ հայրենիքի կարօտներ չնշել : Ես պարզապէս իմ ապրումս երգած եմ :

Եթէ անպայման որոշ յանձնառութիւններ կամ պարտաւորութիւններ պիտի բանաձեւենք հայ գրողին համար, ա-

մէն բանէ առաջ ես պիտի ուզէի, որ հայ
զրոյը նախ լեզուն այնքան մը սիրէ, այն-
քան մը իւրացնէ, որ իրեն համար հայե-
րէն լեզուն իր հոգիին անբաժանելի մէկ
մասը դառնայ, եւ երբ գրէ, ինչպէս Թէ-
քէեան կ'ըսէ, հայ լեզուն իւրաքանչիւր
բառը ըլլայ՝

Մէյ մէկ պըտուդ գոյնըզգոյն՝ բոլոր
բառե'րդ ահա,
Հիւթե'դ բառերդ՝ գոր որբա'ն
հասունցուցին արեւներ,
Բառե'րդ, որոնք այս պահուս շրթանցս
վրայ եմ բռներ,
Բառե'րդ, որ քիմքս կ'օծեն եւ կ'սփոփեն
սիրտս հիմա...:

Եթէ գրողը այս համը զգայ գրած
ատեն, անկէ աւելի վեհ առաքելութիւն
չի կրնար ըլլալ, որովհետեւ այս մէկը
հայ լեզուի սէրը, առանց քարոզչու-
թեան, զեզեցիկ ձեւով ասարածելն է, հայ
լեզուի պաշտպանութիւնն է, հայ լեզուի
յուսերժացումն է:

Երկրորդ՝ հիմա շատ վիճելի հարցե-
րու կու դանք. ես պիտի մաղթէի, որ
հայ գրողը իր հայեցիութիւնը պահէ ո՛չ
անսպասան հայրենասիրական քարոզչու-
թեան իմաստով, այլ՝ հայ հոգիի հարա-
զատութեան հասկացութեամբ, որ
կրնայ խաթարուիլ քիչ մը չափազանցու-
թեան դացող ամէն անասկի օտար նորա-
բարութիւններու կոյր զկուրայն հետեւո-
ղութեան ծուղակին մէջ ինջալով: Ասոր
դէմ ինքնապաշտպանութիւն պէտք է:

Սխալ չհասկցուելու համար աւելցը-
նեմ. երբեք ըսել չեմ ուզեր, թէ հայ
գրողը յաւիտեանս յաւիտենից պէտք է
երգէ հայ թոնիրը, հայ հովիւը կամ հայ
գիւղի աղբիւրը: Ո՛չ, հիմա մեզմէ ոեւէ
մէկը այս միջավայրին մէջ թոնիր կամ
հովիւ չ'երգեր, որովհետեւ արգիական
նիւթեր կան, բայց այդ նիւթերուն պէտք
է մօտենալ հայո՛ւ հոգիով, հայո՛ւ տաղ-
նապով, հայո՛ւ տեսանկիւնէն:

Երրորդ՝ նորութեան սիրոյն արուես-
տի նորութիւնները պարզ ընդօրինակող
մը չըլլայ, որովհետեւ նորութիւն ըս-

ածներն ալ անդադար հիննալու վրայ են
արդէն: Եզրակացութիւն այս բոլորին՝
գրողը իր ինքնութեան, իր ներքին ձայ-
նին հաւատարիմ պէտք է մնայ:

● Կ'ենթադրեմք, որ հարցադրումը
սխալ տպաւորութիւն մը ձգեց ձեր մօտ,
որովհետեւ երբ «գրագէտը ընկերային եւ
մշակութային պարտականութիւն մըն է»
կ'ըսէինք, մարքսական ֆննդատներուն
նեղ մօտեցումով չէ, որ կ'արծարծէինք
հարցը, այլ կը փորձէինք լուսարձակը
պահ մը կեդրոնացնել գրողին ինքնա-
նաչումէն, գիտակցութեան եւ կոչումէն
բխած ընկերային հրամայականներուն
վրայ:

Մարդկային գիտակցութիւն մը, որ
խոր արմատներէ կը սնի, ինչպէս է պա-
րագան Նարեկացիին պայծառ ինքնա-
նաչման ձայնը հանդիսացող մեհներում-
ներուն, իր ժողովուրդի արեան ձայնին
հաւատարիմ Յ. Օշականին, «Հայաստան-
եայց գրականութիւն» հանգանակին շուրջ
բոլորուած միւս փուլներուն, եւ դեռ՝
նոյնիսկ մեր ամենէն գտարիւն բանաս-
տեղծը նկատուած Միսաք Մեծարեցիին,
(որ երբ «Բարեւի մը փոխան հազար բա-
րիք ես տայի» կ'ըսէ, շատ աւելի հայե-
ցիութիւն կը բուրէ), շատ աւելի իրաւո-
թեամբ հայ ոգիին էութիւնը կ'արտայայ-
տէ, քան «ա՛խ Մասիս, Մասիս, Արարատ
ու Սիս» բառերու ամբողջ կոյտ մը թուղ-
թին յանձնող գրիչները:

— Դժբախտաբար, այս ձեւը աժան
ամբոխավարութեան, փրփականտի եւ
ժողովրդականութիւն շահելու հիւանդու-
թիւն մը դարձաւ ոմանց մօտ՝ Հայաս-
տանէն մինչեւ Սփիւռքի դանազան դաղ-
թօճախները: Սակայն ասոնք, բոլորն ալ,
անցողական են:

Դարձեալ կը շեշտեմ, կարեւորը իր
արեան թելադրանքին, իր ներքին ձայ-
նին հարազատ մնալն է: Որովհետեւ հայ-
րենասիրութիւնը սրուալով չ'ըլլար, տաղ-
նապով կ'ըլլայ, ապրումով կ'ըլլայ եւ
արուեստի բերեղացումով կը գրեւոր-
ւի:

Լ. Մ Կ Ր Տ Չ Ե Ա Ն

«ԳԻՒՂ» ԵՒ «ՔԱՂԱՔ» ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Գիւղեր ու քաղաքներ գոյութիւն ունեն մարդկային պատմութեան անյիշելի ժամանակներից ի վեր: Իբրև բնակավայր, աշխատանքային եւ այլ կարգի գործունէութեան տարբեր, կարճ ասած՝ ապրելավայր: Այլ իրողութիւնը այս կամ այն չափով արձանագրուել է անցեալից ժառանգութիւն մնացած մշակութային յուշարձանների մէջ, դրականութեան ու արուեստի երկերում, ինչպէս եւ տեսական ու հասարակագիտական ուսումնասիրութիւններում:

Ճիշդ է, որ ոչ մի ժամանակ ամէն ինչ չի արձանագրուել ու մշակութային ժառանգութիւն դարձել: Ճիշդ է, որ ամէն մի արձանագրութիւն անպայման յաջորդ սերունդներին չի հասել: Բայց հասածն էլ բաւական է, որպէսզի կարողանանք ընդհանուր պատկերացում կազմել պատմութեան անցած հասարակութիւնների կեանքի պայմանների, մասնաւանդ զիւղական ու քաղաքային հասարակութիւնների կենսապայմանների առանձնայատուկ կողմերի մասին:

Կարելի է մօտաւորապէս իմանալ, թէ երբ եւ որտեղ զիւղարնակ կամ քաղաքարնակ մարդիկ ինչպէս են պատկերացրել սեփական կեանքը կամ միւսների կեանքը: Կարելի է իմանալ, թէ այս կամ այն դէպքում ինչու յատկապէս մշակութային այս կամ այն միտումն է դերիշխել, արտայայտելով զիւղական կամ քաղաքային սրամադրութիւններ: Իսկ ընդ-

հանրացնող ուսումնասիրութիւնների հիման վրայ կարելի է որոշել զիւղի ու քաղաքի բռնած տեղն ու հասարակական դերը պատմութեան ընթացքում:

Գիւղեր ու քաղաքներ, բնականաբար, գոյութիւն ունեն նաեւ մեր օրերին, տարբեր երկրներում թուական տարբեր յարաբերակցութեամբ: Այսօր ակնյայտ է ո՛չ միայն առհասարակ աշխարհի բնակչութեան արագաթափ աճը, այլեւ՝ յատկապէս քաղաքների ու քաղաքային բնակչութեան աւելացումը, իբրև պատմա-հասարակական ու տնտեսական այլեւայլ իրողութիւնների սրգասիք: ԽՐԼ-ում է, թէ զիւղն տեղի է մօտենում քաղաքին, կրճատուում են նրանց միացնող ճանապարհները եւ թուլանում են բաժանող պատուարները: Իրանով հանդերձ, առայժմ զիւղը մնում է զիւղ, իսկ քաղաքը՝ քաղաք, իրենց առանձնայատուկ դժերով, որքան էլ որ զնալով աւելի միահիստեն զիւղ ու քաղաք հասկացութիւնները:

Գիւղական եւ քաղաքային իրականութիւնները, իրենց պատմական բնաշրջման ու այժմէական կացութեան շրջանակում, հետապնդման նիւթ են հանդիսանում շատերի համար: Իրանք քրննութեան են առնում ժողովրդագրական ու ընկերաբանական, տնտեսական ու կենցաղային, քաղաքական ու հոգեբանական եւ բազմաթիւ այլեւայլ դիրքերից: Այդ իրականութիւնները, ինքնին հասկանալի

է, որոշակի տեղ ունեն եւ մշակութային ոլորտում, արուեստի ու գրականութեան համար:

Ի հարկէ, քանի որ արուեստի ու գրականութեան ուշագրութեան կենտրոնում գտնուում է առաւելագոյն մարդ արարածն ինքը՝ իր ապրումներով ու գործունէութեամբ, ձգտումներով ու կապերով, գիւղ ու քաղաք հասկացութիւնները կարծես թէ երկրորդական են դառնում: Երբեմն էլ խկապե՛ս այգպէս է: Բայց իրականում եւ աւելի յաճախ գիւղով ու քաղաքով է որոշուում ո՛չ միայն մարդկանց ապրելու եւ գործելու ասպարէզը, այլեւ՝ աշխարհին նայելու տեսանկիւնը, դրաւած գիրքը եւ նախասիրութիւնների շարքը: Այնպէս որ՝ գիւղն ու քաղաքը ինքնին չեն վճռում արուեստի բովանդակութիւնը, բայց չեն էլ չքանում նրա տեսողաշտից:

Գիւղն ու քաղաքը, այսպէս թէ այնպէս, ամէնուրեք ներկայ են մշակութային ոլորտում՝ արուեստի ու գրականութեան մէջ: Արուեստ ու գրականութիւն ստեղծողները գտնուում են ընտրութիւն կատարելու անհրաժեշտութեան առջեւ, ինքնարեւար թէ գիտակցաբար, տարերայնօրէն թէ ծրագրային կարգով: Եւ ստեղծագործական առաջադրանքները յրդացում ու իրագործում են տուեալ պահին ու վայրում գոյութիւն ունեցող պայմանների ու հնարաւորութիւնների համաձայն, ստեղծագործողի եւ միջավայրի փոխյարաբերութեան մակարդակով:

Եւ որովհետեւ տարբեր երկրներում ու տարբեր ժամանակ տարբեր հասարակական ու մշակութային պայմաններ են տիրում, տարբեր են լինում եւ ստեղծագործողների ու ստեղծագործութիւնների ճակատագրերը: Այնտեղ, որտեղ ստեղծագործական նախաձեռնութիւնը պատկանում է բուն ստեղծագործողներին եւ, իբրեւ կանոն, ենթակայ չէ յաւելեալ կտշկանդումների ու վարչական կանոնարկումների, երկերի քանակն ու բնոյթը, պարունակութիւնն ու ուղղութիւնը յայտնի են գառնում ինքնաբերաբար,

իբրեւ առաւելագոյն ջանքերի համապատասխան արդիւնք: Իսկ այնտեղ, որտեղ բուն ստեղծագործական նախաձեռնութեան փոխարէն, ամբողջատիրական միջամտութիւնների բերումով, տիրական է վերին ու պարտադիր առաջադրանքների սկզբունքը, առկայ երկերը չեն արտայայտում ստեղծագործական բոլոր ջանքերի ամբողջութիւնը եւ կեանքի ու արուեստի փոխյարաբերութեան բոլոր կողմերը:

Ահա թէ ինչո՛ւ ժողովրդավարական երկրներում «գիւղ» ու «քաղաք» հասկացութիւնները եւս, իրենց հերթին, գրականագիտական ու հասարակագիտական յատուկ բախումների նիւթ չեն, վիճաբանական օրակարգի հարց չեն: Դրանք ուսումնասիրում են ըստ էութեան, առարկայական գիրքերից ու եղանակներով: Դրանք արուեստի ու գրականութեան մէջ արտայայտութիւն են գտնում այն չափով, որքան որ կամենում են ըստեղծագործողներն իրենք: Իսկ գրականագէտների ու ընթերցողների կողմից ընկալում են այնպէս՝ ինչպէս որ կան: Նրանք իրենց վերաբերմունքը ցուցաբերում են պարզապէս խրախուսելու կամ չխրախուսելու, այլ խօսքով՝ հրապարակուած երկերը արագ կամ դանդաղ սպառելու ճանապարհով, առանց անսխալակիան դատախազ լինելու յաւակնութեան:

Մինչդեռ ամբողջատիրական երկրներում եւ առաջին հերթին, անշուշտ, Սոր-հրդային Միութեան մէջ սպառկերն ուրիշ է: Այնտեղ նաեւ արուեստի ու գրականութեան հարցերն են որոշուում դանազան արշաւների, նշանախօսքերի, առաջադրանքների, «պլանների», եւայլնի միջոցով: Դրա հետեւանքով՝ նաեւ «գիւղ» ու «քաղաք» եւ նրանց համապատասխան գիւղական ու քաղաքային գրականութեան հասկացութիւններն են պարբերաբար արշաւային քննարկումների նիւթ գառնում: Պարբերաբար՝, որովհետեւ իւրաքանչիւր քննարկումից յետոյ կարծես թէ ինչ-որ համաձայնութիւն է գոյանում կողմերի միջեւ, բայց որոշ

ժամանակ անց՝ նորից է բորբոքում վէճը կենտրոնի միասնական կամ անուղղակի հրահանգով: Պաղատութիւնն ու հաշտութիւնը անկարելի է դառնում, որովհետեւ միշտ էլ իրար են բախում իշխանութեան եւ արուեստի ու գրականութեան բուն շահերը:

Այսպէս, օրինակ, մա'նաւանդ 1968 թուականի Ապրիլից ի վեր, Խորհրդային Երկրում կազմակերպուած արշաւ ծաւալուց «գիւղական» նիւթերի շուրջ զբոսող հեղինակներ՝ Ա. Մոլոժնիցինի, Վ. Տենդրեակովի, Ֆ. Արբանովի, Ի. Գալկինի, Ի. Մինուսկոյի, Ե. Գերասիմովի եւ շատ ու շատ ուրիշների ղէմ: Նման արշաւներ նաեւ զբանից առաջ ու յետոյ են եղել՝ տարբեր պատրուակներով, բայց միշտ, նոյն պատճառներով: Այսինքն՝ դիւզի մասին գրելը երբեք չի արդիււնել, այլ ընդհակառակն, յանձնարարւել է: Բայց միաժամանակ սպասուել է, որ գրուի բացառապէս իշխող կուսակցութեան ղեկավարութեան ղերջերից, պանդարդման սկզբունքով: Եւ երբ շատ գրողներ գրաւ փոխարէն փորձել են դիւզը ներկայացնել իր իրական պատկերով եւ զբաղման ճշմարտութեան ղերջերից՝ անմիջապէս յարձակման են ենթարկուել վերելից: Ու նման յարձակումների արշաւը ընդգրկել է ամբողջ Երկիրը՝ մէկ ծայրից մինչեւ միւսը: Այդ թուում եւ Հաստատանք:

Պարբերաբար կազմակերպուող արշաւներից եւ համաձայնութիւններից ու անհամաձայնութիւններից անկախ, Խորհրդային Երկրում մնայուն խնդիր է դիւզական ու քաղաքային գրականութեան նիւթը: Դա գոյութիւն ունի թէ՛ բուն գեղարուեստական գրականութեան եւ թէ՛ գրականադիտական ուսումնասիրութիւնների մէջ: Եւ դա, ըստ իս, ինքնին բնական ու հասկանալի իրողութիւն է: Անբնականն ու անհասկանալին իշխանութեան վերաբերմունքն է, նրա պարտադիր կանոններ սահմանելու աննահանջ յաւակնութիւնը, զբողիներին անընդհատ առաջադրանքներ թելադրելու սովորութիւնը:

Գրական նիւթերը դատակարգելու ընթացքում դիւզին ու քաղաքը հիմնական բնագտատուներ են համարում: Դա արտայայտում է բոլոր ղէպներում՝ Երկրի ներսում թէ՛ գրուած գրականութեան շուրջ խօսուելիս: Այսպէս, 1978 թուականի սկզբներին յատուկ հրահանգով եւ վեց շաբաթով ԱՄՆում գտնուեց խորհրդային յայտնի գրող Իւրի Տրիֆունովը ու վեց նիւթի շուրջ զանազան գասախօսութիւններ անեցաւ: Այդ վեց նիւթերից մէկը կրում էր «Գիւղագիր գրողները», իսկ միւսն էլ՝ «Քաղաքային ուղղութիւնը» խորագիրը: Ուրեմն, անկարելի է անտեսել դիւզի ու քաղաքի գուգահեռ գոյութիւնը եւ զրանց գրական մարմնաւորումը:

Խորհրդային Երկրում տիրող իշխանութեան եւ վաւերական գրողների հակառակութիւնը, տուեալ ղէպում՝ դիւզի ու քաղաքի գեղարուեստական մարմնաւորման հարցում, ծագում է նրանից, որ առաջինը մտնական սեղ է տալիս հարցի գուտ գրողմունքային, արտադրական ու քարոզչական կողմերին, իսկ վերջինները, ըստ իրենց կոչման, նկատու են առնում բուն մարդկային կեանքի իսկութիւնն ու ամբողջութիւնը, արտաքին ու ներքին դործունեքը, կողմնորոշուելու եւ ընտրութիւն կատարելու կամայ եւ ակամայ արարքների գրողապատճառները, եւ այլն:

Իշխանութեան վերաբերմունքի մէջ հանելուկային բան չկայ: Ինքնին պարզ է, որ նման մի իշխանութիւն միայն ա՛յդ ձեւով կարող է պատկերացնել աշխարհը եւ իր տեղն ու դերը: Իշխանութիւնից տարբեր պատկերացումներ ունեցող զբողիների գոյութիւնը ե՛ւս աւելի քան օրինական ու անխուսափելի է: Դա ցոյց է տալիս, որ աշխարհում կան բաներ, որոնք ոչ մի իշխանութիւն չի կարող վերացնել: Ճնշումն ու հալածանքը ձգտում են այս կամ այն արժէքի վերացման, բայց չեն կարող երաշխաւորել այդ վերացումը:

Ահա թէ ինչո՛ւ՝ թէեւ Խորհրդային Երկրում իշխանութիւնը ծուռ է նայում

ինքնուրոյն «գիւղապետները» վրայ, վերջիններէս թիւը գնալով աճում է, ո՛չ միայն արձակագրութեան, այլեւ՝ բանաստեղծութեան ասպարէզում: Գիւղական միջավայրին ու կեանքին ղիմելը ինքնանպատակ չէ, ոչ էլ սոսկ գիւղը ներկայացնելու հասարակ ցանկութեան արդիւնք: Գիւղական խողովակով իսկական գրողը անմիջապէս հաղորդակցում է բազմաստիճան բնութեանը, կեանքի ակունքներին ու դրանով էլ տիեզերական իրականութեանը, նրա յայտնի եւ թաքուն երակներին: Այդպիսով, ընդլայնելու է գրողի նիւթը, ազատութիւնը եւ ձեռքբերումները հորիզոնը: Քաղաքային ու արտադրական իրականութեամբ սահմանափակուելու դէպքում՝ այդ պատեհութիւններն անմատչելի են մնում, գրողը տեղքայ է անում եւ զրկում աճելու նպաստաւոր ճանապարհներից:

Իրականութեան մէջ մարդու համար ամէնից կարեւորը թերեւս այստեղ կամ այնտեղ, ասենք՝ գիւղում կամ քաղաքում, բնակուելու շատ յաճախ պատահական իրողութիւնը չէ, այլ՝ իր ինքնութիւնը ասրելու եւ արտայայտելու հնարաւորութիւնը: Այդպէս էլ՝ գրողի համար ամէնից կարեւորը ոչ այնքան անպայման գիւղական կամ քաղաքային իրականութիւնը ներկայացնելն է, որքան որ իր գրական կառուցումներն ու կենսական յայտնաբերումները ազատօրէն արտայայտելը: Բայց քանի որ տարբեր միջավայրեր տարբեր նիւթեր են տրամադրում, ինքնաբերաբար առաջ է քաշում եւ նախասիրութիւնների հարցը:

Չի կարելի պնդել, թէ բոլոր մարդիկ, այդ թւում եւ գրողները, նոյն վերաբերմունքն ունեն գիւղի ու քաղաքի հանդէպ: Դատելով բոլոր նշաններից, կարելի է կարծել, որ պատմութեան ընթացքում քաղաքաբնակները, իբրեւ կանոն, վերելից են նայել գիւղաբնակների վրայ: Այդ իրողութիւնը արտայայտուել է եւ գրականութեան մէջ: Բայց եղել է նաեւ հակառակը: Գրականութեան ու արուեստի մէջ ծաղիկել է բնապաշտութիւնն ու գիւղապաշտութիւնը: Այժմեան

գիւրքերից նայելով գրականութեան ու արուեստի եւ առհասարակ մշակութային իրադրութեանը անցեալ բոլոր պատմական փուլերին, կարելի է ո՛չ միայն հաստատել այդ իրողութիւնը, այլեւ դրա անմիջական դրդապատճառները պարզել: Նշանակում է՝ գիւղի ու քաղաքի իւրաքանչեւ «գրական վէճը» այսօրուայ յայտնագործութիւնն չէ, այլ՝ անհամար դարերի կենդանի ժառանգութիւն:

Գիւղի ու քաղաքի հարցը զբաղեցրել է ո՛չ միայն գեղարուեստական երկեր ստեղծողներին, այլեւ՝ հասարակագէտներին: Վերջինները եւս ունեցել են եւ ունեն իրենց նախասիրութիւնները՝ գիւղին կամ քաղաքին նախապատուութիւն տալու միտումները: Ի հարկէ, ոչ մի լուրջ քննութիւն չի՛ կարող բացարձակ բեւեռացման յանգել: Բայց եւ այնպէս, եղել ու կան շեշտը գիւղական ու քաղաքային իրականութեան այս կամ այն՝ դրական կամ բացասական կողմի վրայ դնելու տրամադրութիւններ: Եթէ գիւղը վաղուց ի վեր ժողովրդական հաւաքականութեան կենսունակութիւնը պահպանելու նախադրեալ ու երաշխիք է համարում, կենսական ուժերի աղբիւր, քաղաքն էլ զնահատուում է իր յատկապէս քաղաքակրթական ու մշակութային ազդակների համար: Թէեւ «կուլտուրա» (մշակոյթ) բառն ինքը իր ծագումով կապում է հենց գիւղի՝ «հողամշակութեան» ու «երկրագործութեան» հետ, իր հիմնական կողմերով դա առաւելապէս քաղաքի ծնունդ է: Այնպէս որ՝ բուն հարցը գիւղն ու քաղաքը հակադրելու մէջ չէ, այլ նրանց մերձեցման, փոխադարձ լրացման, գոյակցութեան ու մարդկային համերաշխութեան:

Անցեալից մնացած գրական յուշարձանները աչքի անցկացնելիս, կարելի է դանազան թեր ու դէմ վկայութիւնների հանդիպել գիւղի ու քաղաքի վերաբերեալ: Բայց այստեղ կը բաւարարուեմ երկու վկայութիւններով, մէկը միջնադարից, իսկ միւսը՝ մեր օրերից: Առաջինում գրատուում է գիւղը, իսկ երկրորդում՝ քաղաքը: Որովհետեւ տարբեր

դերձերից են դիտում զրանք:

Առաջին վկայութիւնը վերցւում է 14րդ դարի արար պատմագիր ու փիլիսոփայ Իբն Խալլունի (1332-1406) այն երկից, որի մէջ նա ըննութեան է առնում պետութեան, իշխանութեան եւ յարակից հարցերը: Այս ընտրութիւնը յաւելեալ նշանակութիւն ունի նրա համար, որ Իբն Խալլունը հայերիս շատ ծանօթ հեղինակների թուին չի պատկանում, բայց իր հերթին հաստատում է ծանօթ հեղինակների որոշ գրոյթներ: Ներկայացուող հատուածի իմաստն այն է, թէ՛ քաղաքային կեանքը մշակութային բարձրակէտն է ու կեանքի վերջակէտն է, որով ծանուցւում է նրա անկումը: Իբն Խալլունը գրում էր.

«Մենք արդէն քեզ բացատրեցինք, որ իշխանութիւնն ու պետութիւնը ազաբայի (համագոգացութեան) նպատակն են, որ քաղաքային կեանքը գիւղականի նպատակն է, եւ որ ամբողջ մշակոյթը, — ինչպէս որ գիւղական ու քաղաքային կեանքը, իշխանութիւնն ու ժողովուրդը, — մի գգալի կենսական տեսողութիւն ունի, ճիշդ այնպէս՝ ինչպէս որ առանձին գոյութիւն ունեցող անհատը մի գգալի կենսական տեսողութիւն ունի: Թէ՛ տրամաբանական եւ թէ՛ աւանդական գիտութիւնների մէջ պարզուել է, որ մարդու համար քառասուն տարին վերջակէտ է նրա ուժերի աւելացման ու անմահ համար, եւ որ բնութիւնը, քառասուն տարին լրանալուց յետոյ, աւելացման ու անմահ առումով որոշ ժամանակ կանգ է առնում, իսկ ապա նրա ուժը սկսում է նուազել:

«Այդպէս էլ դու պէտք է իմանաս, որ մշակութային կեանքում քաղաքային քաղաքակրթութեան կացութիւնը նոյնն է, քան զի դա այն ծայրակէտն է, որին ոչինչ չի կարող աւելացուել: Այսինքն՝ յարմարակեցութիւնն ու բարեկեցութիւնը, երբ դրանք բնակչութեան մէջ են մտնում, իրենց բնութեամբ քաղաքային քաղաքակրթութեան տեսակների ու ներանց սովորոյթների իրացման են առաջնորդում:

«Մենք ասում ենք նոյնիսկ, որ քաղաքակրթութեամբ ու բարեկեցութեամբ կազմուած բնաւորութեան գծերը արդէն իսկ սեփական կործանումն են, որովհետեւ մարդը մարդ է միայն իր գորութեամբ, իր համար առաւելութիւններ ստեղծելով ու վնասից պաշտպանուելով եւ իր բնաւորութիւնը այդ ուղղութեամբ տանելով ու այդ բաների համար ջանք քափելով: Քաղաքակրթ քաղաքանակը, դրան հակառակ, ի վիճակի չէ իր կարիքները հոգալու, կա՛մ անկարողութիւնից՝ յարմարակեցութեան հետեւանումով, կամ էլ մեծամտութիւնից՝ հանելի բարեկեցութեան մէջ դաստիարակուելու հետեւանումով, եւ երկուսն էլ դատապարտելի են: Նմանապէս նա չի կարող վնասից պաշտպանուել, որովհետեւ բարեկեցութեան ու դաստիարակութեան միջոցով, կրթութեան ու խրատների ցնշման տակ՝ եռանդի յատկանիշները կորցրել է: Ուստի եւ նա իրեն հովանաւորող պաշտպանութիւնից է կախուած: Քանզի նա մեծ մասամբ նաեւ իր կրօնի մէջ է փչացած, որովհետեւ նրան վատ սովորոյթներն ու դրանց հնազանդուելը փչացրել են ու հոգին այն յատկութիւններն է ձեռք բերել, որոնք որ նշեցինք, չհաշուած շատ հագուադէպ բացառութիւնները: Արդ, երբ մարդը իր գործելու կարողութեան ու բնաւորութեան մէջ փչացած է, այդ դէպքում նրա մարդկայնութիւնը փչացնում ու փոխում է էապէս: Այս տեսակէտից, իշխանների բանակի մէջ աւելի օգտակար են նրանք, որոնք աւելի մօտ են գիւղական կեանքին ու կոպտութեանը, քան նրանք, ովքեր դաստիարակուել են քաղաքակրթութեան մէջ ու նրա բնաւորութեամբ: Սա այսպէս է իւրաքանչիւր պետութեան մէջ: Սրանով իսկ պարզ է, որ քաղաքակրթութիւնը կանգաւան տարիքն է աշխարհի կեանքի համար, մշակոյթների ու դիմաստիանների (իշխանական տների) առընչութեամբ»:

Ժամանակակից ամերիկեան մտածող Լիւիս Մամֆորդը (ծնուած 1895 թուին Նիւ Եորքում) այլ կարծիք ունի քաղաքի ու մարդկային պատմութեան մէջ նրա

ունեցած դերի մասին: Նա քաղաքը համարում է մարդկային մշակույթի գլխաւոր պայմանն ու գործօնը: Մամֆորդը վաղ տարիքից կլանուել է քաղաքաշինութեան ու քաղաքային ճարտարապետութեան հարցերով, ի վերջոյ դրանք քննութեան առել փիլիսոփայի ու տեսարանի դիրքերից, իր եզրակացութիւնները տարածելով աշխարհի ամբողջ պատմութեան վրայ:

Մամֆորդի համոզումով, մարդկութեան ամբողջ պատմութիւնը քաղաքի պատմութիւն է, որը նախապատրաստուել է նախապատմական քաղաքակրթութեամբ, քաղաքը մարդու տարերքն է, այլ ոչ թէ նրա բնական կեանքի խեղաթիւրումը: Նա դանում է, որ պատմական հորիզոնի ծայրին արդէն երեւում են երեք կազմաւորումներ՝ սրբալայր, գիւղ եւ ամբացուած աւան, իւրաքանչիւրն իր առաջացման պատճառներով ու մարդու համար ունեցած հոգեբանական նշանակութեամբ: Եւ ահա քաղաքը իր մէջ ամփոփում է այդ երեք տարրերը:

Ըստ Մամֆորդի, քաղաքն է, որ մարդկային եւի ու ներքին եռանդի դըրսեւորման եւ արդիւնաւորման ասպարէզ է ապրիս: Տարածական սահմանափակութիւնը նպաստում է ուժերի խտացմանը: Այդ առումով նա յատկանշական է համարում մեր թուարկութիւնից առաջ ՅՏրդից մինչեւ ՉՏրդ դարն ընկած ժամանակաշրջանը: Մամֆորդը չի փոստաբանում կամ վատաբանում քաղաքը, այլ դա համարում է մարդու ճակատագիրը, վաղընջական ժամանակներից մինչեւ հիմա ու այսուհետեւ: Քաղաքի մեծ ու վերջնական առաքելութիւնը նա համարում է ոչ թէ մարդկանց համար ապրելու կատարեալ պայմանների ամբողջութիւնը, այլ՝ պատմական ու տիեզերական ընթացքին մարդու գիտակցական մասնակցութեան վայր լինելը:

Մամֆորդի աւելով, քաղաքը մարդու ուժը վերածում է ձեւի, եռանդը՝ մշակույթի, մեռեալ նիւթը՝ արուեստի կենդանի խորհրդանշանների: Ի տարբերութիւն մինչաթմեան այլեւայլ մտա-

ծողների, Մամֆորդը ձգտում է իմաստաւորել այն վայրը, որտեղ մարդուն վիճակուած է ապրել կամ մեռնել: Սա ժամանակակից քաղաքի ծնունդ մտածող մարդու վերաբերմունքն է՝ իր նմաններին ու միջավայրի նկատմամբ:

Անկախ այս եւ նման կամ հակառակ տեսակէտներից, ժամանակակից քաղաքը նորանոր խնդիրներ է դնում մարդկութեան առջեւ: Կասկած չկայ, որ այժմեան խնդիրներն աւելի բարդ են իրենց ծաւալով ու դժուարութեամբ, քան երբեւէ: Իւրաքանչիւր ժողովուրդ իր ձեւով է լուծում այդ խնդիրները, աւելի կամ պակաս յաջողութեամբ: Բայց «բնական միջավայրի պահպանութեան» հոգը դամոկլեան սուրի նման կախուած է դրեթէ անխափ բոլորի վրայ, եթէ ոչ միաժամանակ ասպա անպայման աստիճանաբար: Ներքաղաքային «բնական միջավայրի պահպանութիւնը» սերտորէն պայմանաւորուած է երկրային ու համաշխարհային չափանիշով պահպանութեամբ, եւ այդ շղթայի մէջ առաջին օրակը գիւղն է հանդիսանում:

Քաղաքն ու գիւղը, առանձին առանձին, չեն կարող գոհացում տալ մարդու բոլոր պահանջներին: Դա պարզ է, թերեւս, ամէնքի համար: Եւ մարդիկ ջանում են, հնարաւորութեան սահմաններում, իրենց կեանքը դասաւորել երկու գործօնների մասնակցութեամբ, քաղաքային ու գիւղական տարրերի միահիստմով: Գիւղաբնակը օժտուած է քաղաքային յարմարութիւններով, իսկ քաղաքաբնակն էլ՝ գանազան ճանապարհներով կապուած գիւղ ու բնութիւն նշանակող բարիքներին: Չարդացած երկրների կեանքը այսօր ըստ էութեան այդ ուղղութեամբ է ընթանում:

Ի հարկէ, «բնական միջավայրի պահպանութիւնը» գիւղից աւելի քաղաքի առջեւ ծառայած միակ խնդիրը չէ: Քաղաքը մարդկային գառնալու համար պէտք է լուծի նաեւ ընկերային դանազան խնդիրներ, գիւրացին մարդկային հաղորդակցութիւնը: Չանազան ուսումնասիրութիւններ ցոյց են տալիս, որ ինչքան

բազմամարդ է քաղաքային հասարակու-
թիւնը, այնքան աւելի է շեշտուած ան-
հատ մարդկանց մեկուսացումն ու մենա-
կութիւնը, իբրար հետ շփուելու դժուար-
ութիւնը: Իսկ դա, ի հարկէ, բնականոն
կեանքի նախադրեալ է: Գիւղը մինչեւ
հիմա էլ զերծ է այդ անպատեհութիւ-
նից, իր միւս թերութիւններով հանդերձ:

Այս կէտերը նշուեցին ի միջի այլոց,
իբրև օժանդակ բացատրութիւններ: Հիմ-
նական նիւթը՝ մշակութային ոլորտում
գիւղ եւ քաղաք հասկացութիւնների բրո-
նած տեղն է: Ճիշդ է, որ այսօր տնտե-
սապէս զարգացած երկրներում քաղաքա-
յին մշակոյթը գերիշխում է: Նոյնիսկ
զարգացող երկրներում քաղաքային մի-
տումն է ուղեցոյց ծառայում: Բայց սը-
խալ կը լինէր պնդել, թէ գիւղի տեղն ու
գերն ի սպառ անտեսում է: Գիւղը ի-
րականում շարունակում է իր տեղն ու-
նենալ, ինչ որ արտայայտում է դանա-
զան ձեւերով: Գծուար չէ համոզուել դը-
րանում, իւրաքանչիւր երկրի հասարա-
կական ու մշակութային կեանքի հետ
չփուելիս:

Եթէ այսօր կազմակերպուած ու բարեկարգ երկրներում գիւղական իրակա-
նութիւնը, իրերի բերմամբ, գրականու-
թեան ու մշակութային այլ իրազոր-
ծումների մէջ աւելի քիչ տեղ է բռնում,
քան նախորդ դարերում, գրա փոխարէն՝
գիւղաշխարհի ընդհանուր գրաւչութիւնը
տակաւին թարմ է մնում թէ՛ արուեստա-
գէտների եւ թէ՛ շարքային քաղաքացիներ-
ի համար: Ասում է «գիւղաշխարհի»,
այլ ոչ թէ «գիւղի», որովհետեւ վերջինս
բաւական սահմանափակ հասկացութիւն
է առաջինի համեմատութեամբ: Գիւղաշ-
խարհը միայն գիւղը չէ, նրա վարուցա-
նով եւ անասուններով, այլ՝ բնութեան
հետ միահիւսուած մարդկային հասարա-
կութեան կեանքի իւրայատուկ ընթացքը,
իր բոլոր ստորոգելիների ամբողջու-
թեամբ:

Այստեղ նշում է իրերի յատկանշա-
կան կացութիւնն ու միտումը: Ի հարկէ,
ամէն մի երկիր իր գիմագիծն ունի, որը
չի կարող չփոթուել ուրիշների հետ:

Մասնաւանդ ամբողջատիրական ու ժողո-
վրդավարական երկրների համար գըթ-
ւար է համեմատութեան եզր գտնել:
Բայց ամէն տեղ էլ քաղաքային իրակա-
նութիւնը այս կամ այն չափով գերա-
կշռող զիրքեր ունի գիւղականի համե-
մատ, ինչ որ իր ընթացիկ արտացոլումն
է գտնում գրական ու մշակութային
կեանքում:

Եթէ մեր ուշադրութիւնը կենտրո-
նացնենք ընդհանուր առմամբ կազմա-
կերպուած ու բարեկարգ եւ քաղաքական
ազատութիւններ վայելող երկրների վը-
րայ, անմիջապէս կը տեսնենք, որ գիւ-
ղի ու քաղաքի տարբերութիւնը անհա-
մեմատ աւելի քիչ է, քան երբեւէ: Գա-
սային արմատական տարբերութիւնների
մասին համարեա՛ խօսք չի կարող լինել,
քանի որ մարդկանց յարաբերութիւնները
իրաւապէս որոշում են միասնական քա-
ղաքացիական կապերով: Մշակութային
միջոցներն էլ իր հերթին նոյնն է բոլոր-
ի համար՝ մշակութաբաշխ ժամանակա-
կից միջոցների հանրամատչելիութեան
չնորհիւ: Այնպէս որ՝ փաստօրէն համա-
ժողովրդական մշակոյթի տպաւորու-
թիւնն է գերակշռում: Այս պայմաննե-
րում գիւղ ու քաղաք հասկացութիւնները
չեն կարող ընկալուել իրենց աւանդական
պարունակութեամբ ու նշանակալ թեամբ:
Եւ պատահական չէ, որ գրականութեան
մէջ եւս գիւղի ու քաղաքի կարուկ հարց
չի գրում, այլ նկատի է առնում պար-
զապէս մարդը՝ տուեալ հասարակութեան
մէջ, իր կեցութեան ու գործունէութեան
այլեւայլ կողմերով:

Սա այսօրուայ կացութիւնն է եւ չենք
կարող լիովին գուշակել, թէ ինչպիսին
կը լինի վաղուայ կամ հետագայի կացու-
թիւնը: Բայց արդէն իսկ նկատելի է, որ
աւելի քան մեծ քաղաքների համար բնո-
րոշ պատկերացումների գերակշռութիւ-
նը մշակութային ոլորտում ստեղծում է
ինքնանպատակ լարուածութեան միտում
եւ համահարթիչ նախադրեալներ: Իսկ
դա այդպէս չի կարող անվերջ շարու-
նակուել, քանի որ հակասում է մարդկա-
յին գոյութեան կենսաբանական, հոգե-

բանական եւ ընկերային պահանջները ոգուն: Լարուածութիւնը, այլ կերպ ասած՝ լիցքաւորումը պարբերաբար կարելի ունի լիցքաթափման. թէ՛ լիցքաւորումը եւ թէ՛ լիցքաթափումը միայն այդ ձեւով են իմաստաւորուած, այլ ոչ թէ միասպազող տեւողութեամբ, քանի որ վերջինս բացառուած է շարժումն ու կեանքը:

Այդ իրողութիւնը հաստատուած է հասարակական ու մշակութային պատմութեան, առաւել՝ եւս գրականութեան պատմութեան տրամադրած տուեայներով: Ըստ երեւոյթին, մարդկային հոգեբանութեան ինչ-ինչ պահանջներին գոհացում աւել համար, բախումնային ու լարուած պայմաններում ապրած զրոգները, աւելի յաճախ՝ բանաստեղծները, պատկերել են բաղձալի ու երեւակայական իրականութիւններ՝ թէ՛ օրուայ այլ-ընդ մտահոգութիւններից վերանալը դիւրացնելու եւ թէ՛ մա՛նաւանդ՝ պատմական կողմնորոշման յուսադրիչ նիւթ արբամադրելու համար: Այդպէ՛ս է, որ ըստեղծուել են դրախտային պատմութիւններ՝ թէ՛ հեռուոր անցեալի եւ թէ՛ հեռուոր ապագայի վերաբերեալ: Ստեղծուել են նաեւ հովուերգական պատկերներ՝ թէ՛ յունա-հռոմէական եւ թէ՛ միջնադարեան գրականութեան մէջ: Գրականութեան պատմաբանները նոյն երեւոյթն են նկատում նաեւ հին երբայական, հնդկական եւ այլ գրականութիւնների մէջ:

1795 թուին դերմանացի բանաստեղծ, թատերագիր եւ տեսարան Ֆրիդրիխ Շիլլերը, իր «նայիւ (բնական, պարզամիտ. — Լ. Մ.) եւ գգացական բանաստեղծութեան մասին» երկում գրում էր հետեւեալը. «Այն բոլոր ժողովուրդները, որոնք պատմութիւն ունեն, ունեն եւ մի դրախտ, անմեղութեան մի վիճակ, մի ոսկեդար: Ընդամին միեւնոյն է՝ արդեօք մարդը կորցրածն է ողորմ եւ նրա իդէալական գոյութիւնը ժամանակների սկզբում տեղաւորում, իբրեւ ոսկեդար կամ դրախտ, թէ երազում է դա ժամանակների վերջո՛ւմ իրագործել, իբրև կատարումն պատմութեան: Յանախ երկու

պատկերացումները միախառնուած են եւ միանգամայն բնորոշելի է, որ ապագայի յոյսերը աւելի մեծ շեշտ կրեն, եթէ դրանք դիտուեն իբրեւ այն բանի վերադարձի ցանկութիւն, ինչ որ արդէն մի անգամ իրագործուել է ու միայն կորսուել»:

Թէ՛ վերընթաց եւ թէ՛ վարընթաց երազային ձգտումների դէպքում, ինչպէս եւ հովուերգական ոլորտների դիմելու ու այնտեղ ապաստանելու պարագայում՝ բաղձալի է համարուել անդորր ու անմեղ վիճակը: Այդ բաղձանքն ու ձգտումը իմաստ չէր ունենայ, եթէ բանաստեղծներն ու նրանց ունկնդիրները եւ ընթերցողները չապրէին բուռն ու խառն, անապահով պայմաններում: Յամենայն դէպս, ապրելու պահին մի այլ բաղձալի իրականութիւն հսկազրելու գաղափարի գոյութիւնն իսկ յատկանշական ու նշանակալի է: Եւ այդ գաղափարը զրոգւորում է գրականութեան ձեւաւորման արշալոյսից ի վեր: Արդ, բաղձալին որոնուել կամ տեղադրուել է բացառապէս անխաթար բնութեան գրկում, ինքնաբաւ ու սակաւտոյետ մարդկային միջավայրում, այլ ոչ թէ միմեանց ծուստող կամ հրոյ մոլեգին զանդուածների մարտադաշտում:

Գրականութեան այդ բնագաւառին չփուլելու համար համապատասխան նիւթ են տրամադրում մա՛նաւանդ Հեսիդոսը, Ստեսիփորոս Հիմերացին, Թէոկրիտը, Բիոնը, Մոսլոսը եւ ուրիշները հին յունական ու հելլենիստական ժամանակաշրջանի գրականութեան մէջ, իսկ Վիրգիլիոսը, Կալպուրնիոսը, Նեմեզիանոսը եւ ուրիշները՝ հռոմէական գրականութեան մէջ: Վերածնութեան ժամանակաշրջանում յատկանշական են Պետրարկայի, Բոկաչիոյի, Սաննացարոյի եւ այլոց երկերը Խալիսայում: Եւ առհասարակ միջնադարում, քաղաքային ու ասպետական գրականութեան կողքին, գոյութիւն ունէր նաև բնաշխարհային, կամ այսպէս ասած՝ «գիւղական», «գիւղացիական», «հովուական» արձակ ու չափածոյ հարուստ գրականութիւն՝ պատ-

մութեան տոպարէզ մտած և բոսպական երկրներում (Սալանիտ, Անգլիտ, Ֆրանսիտ, Հոլանդիտ, Գերմանիտ, Շուէյցաբիտ, Լեայլն) :

Սա պատմութեան վկայութիւնն է, ինչ որ զոյց է ապրիտ, թէ հասարակական կեանքի լիցքաւորման ու լիցքաթափման իրարամերժ իրողութիւններին զուգընթաց՝ գրականութիւնը ևս արձագանդել է կեանքի պահանջներին, երբեմն գիտակցաբար, երբեմն էլ ինքնարեւոյրար, բայց ևս աջողէս արձագանդել է : Այսօրուայ զիրքերից շատ առելի հեշտ է տեսնել անցած ժամանակի զէպրերի պատմական պայմանաւորուածութիւնը ևս գրական տրամազբութիւնների ելևէջները : Անցեալի զրական երկերը զրուել են հիմնականում իրաքանչիւր զրողի ժամանակակիցների համար ևս արձագանդել առաւելապէս ժամանակի ձգտումներին ու հոգսերին : Իսկ հիմա բոլորը միասին ուսումնասիրութեան նիւթեր են, ընթերցանութեան նիւթեր յինչոյց բացի, որոնք ձայնակցում են միմեանց ու փոխադարձաբար բացատրում, մեր օրերի հոյեակացի յոյսի տակ : Այլ յոյսի տակ կարելի է ենթադրել նաև, որ մեր օրերի մեծ մասամբ քաղաքային տրամազբութիւններով լիցքաւորուած մշակոյթն ու գրականութիւնը չի կարող մշտապես լինել ու բացարձակ մեկաշնորհ վայելի : Հետագայ ներքին ու արտաքին փոփոխութիւններն ուղղակի անխուսափելի են, ինչ ձևով ևս ինչդիտիք էլ որ լինեն այլ փոփոխութիւնները :

Դրա համար առաջին քայլը թերևս լինի այն նախապաշարման վերանայումը, թէ միայն քաղաքը կարող է բաւականաչափ նիւթ արամազրել հարուստ գրականութեանը, մինչդեռ զիւզաշարհը, իբր, անկարող է այլ զերը կատարել : Այլ նախապաշարումը վկայում է միայն քաղաքային իրականութեան և այլ իրականութեան ջատագոյնների զերիշխանութեան մասին, բայց ոչ առելին : Տակալ զէպրում շեշար զրուում է ոչ թէ մարդկային բուն էութեան, կեցութեան հիմնական տարրերի ու պայմանների,

այլ սոսկ կենցաղային արտաքին հանգամանքների ու պարապայական վիճակների վրայ : Սակայն անցեալի ու ներկայի զբրական վկայութիւնների օգնութեամբ շատ հեշտ է հաստատել, որ զիւզաշարհը ի վիճակի է առնուազն նոյնքան նիւթ արամազրել գրականութեանը, որքան որ քաղաքը : Ի հարկէ, զպայտիք չէ, որ զիւզը, վերջին հաշուով, զիւզ է, իսկ քաղաքը՝ քաղաք, ևս որ զբունք նոյնը չեն ու տեսն իրենց սրշակի տառնձնաշարհութիւնները : Բայց չէ՞ որ թէ՛ զիւզում ևս թէ՛ քաղաքում միայն մարդիկ են ապրում, հոգեբանական ու յարակից աշխուսոյ՝ նոյն մղումներին ենթակալ : Գրեթէ չկան մարդկանց աշնդիտի յատկութիւններ, որոնք միայն զիւզին կամ միայն քաղաքին բաժին ընկնեն : Իրականում՝ յատկութիւնների խտութիւնն ու գրոււորումն է տարրեր :

Ճիշդ է, որ զրական, մանաւանդ զանգումային մշակոյթը ստեղծուել ու զարգացել է քաղաքներում : Բայց ճիշդ է նաև, որ այլ մշակոյթը մեծ մասամբ զիւզաշարհից ելածներն են ստեղծել, այլ ոչ թէ քաղաքայիններն իրենք : Սա նշանակում է, որ մշակոյթը ստեղծել են պարզապէս ազգային հաւաքականութիւնները, համերկրային մղումները ու տաշարանքների թեւազբանքով և զիւզական ու քաղաքային խտերի փոխադարձ զործակցութեամբ, այլ ոչ թէ սրեւէ առանձին խաի ճիւղերով : Վերջին զէպրում մշակոյթը կը լինէր հաստատման, բայց ոչ ազգային :

Այս զբոյթի ուղղութեամբ կատարուող հետախուզումները շատ բուն կարող են սրարել ու մի անգամ ևս հաստատուել, որ զիւզաշարհն ի վիճակի է թէ՛ զրականութեան նիւթ հայթայթել ևս թէ՛, մանաւանդ՝ զրականութիւն մշակողներ ծնել, եթէ շատենք առելին : Կարելի է հայեացք նետել համաշխարհային ու հայ զրականութեան մէջ առաւել յայտնի երկերի ու նրանց հեղինակների կենտարբութիւնների վրայ ևս անմիջապէս կը տեսնուի զիւզաշարհի մասնակցութեան նըշանակալի չափը ու, մանաւանդ՝ նրա

պարունակած կենսական ու հոգևոր պաշարներին գրեթէ անսպասելիությամբ խնդրելով: Այդ իրողությունը կարելի է անտեսել միայն անդիատութեան կամ նախապաշարման դէպքում, բայց ոչ լրջամիտ քննութեան: Ահա եւ այդ ու նման նախապաշարումները յաղթահարելով միայն կը բացուի ստեղծագործական հորիզոնը այնտեղ, որտեղ դրա համար պատրաստ նախադրեալներ կան:


Բնականաբար, այս նիւթի շուրջ ասելիքներ եւ խորանալու ճանապարհներ շատ կան: Ձեն պակասում եւ պերճախօս օրինակները, որոնք ցոյց են տալիս, թէ որքան կարեւոր է դիւշի ու քաղաքի դուզահետ գոյությունը եւ մշակութային ոլորտում ցուցաբերած արդասարքեր գործակցությունը: Երկուսի գոյությունը ասպահովում է թէ՛ մշակութային նախատարրերի մշտական խմորումը եւ թէ պատրաստի մշակութային արժէքների արդիւնաւէտ շրջանառությունը՝ ժամանակի ու տարածութեան առաւել լայն շրջագծով: Իսկ մէկն առանց միւսի՝ գործնականում փակուղի է, տեղքայլ ու լճացում, քանի որ այդ դէպքում ինքնաբերաբար խափանւում է կենսական ու հոգևոր շարժումն ու հաղորդակցությունը:

Ի պաշտպանություն այն դրոյթի, որ դիւղաշխարհը եւս միշտ էլ ասելիք ունի դրական ասպարէզում՝ թէ՛ համապատասխան նիւթ տրամադրելու եւ թէ այդ նիւթը մշակողներ ծնելու իմաստով, կարելի է յիշատակել դէթ երկու ուս գրողներին՝ Վասիլի Շուկչինի (1929-1974) եւ Վալենտին Ռասպուտինի (ծնուած 1937 թ.) պարագան: Արդ, այդ երկու գրողներն էլ ծնուել ու աճել են ոչ թէ եռուն կիանքով ապրող քաղաքներում, ոչ էլ

նոյնիսկ եւրոպական Ռուսաստանում, այլ ուղղակի Սիրիբում ու, մա՛նաւանդ՝ դիւղերում: Բայց միանգամայն ակնյայտ է, որ յատկապէս նրա՛նք ու նրանց նման գրողները երեւոյթ հանդիսացան արդի ուս գրականութեան մէջ, անվիճելի թարմութիւն մտցրին եւ պատշաճ համբաւ վաստակեցին նաեւ արտասահմանում, միայն ու միայն իրենց գրական արժանիքների շնորհիւ: Նրանց երկերի հերոսները պարզապէս շարքային մարդիկ են, առաւելուց գիւղաշխարհի բնակիչներ: Թւում է, թէ գրողը նրանց միջոցով շատ բան չի կարող արտայայտել: Բայց Շուկչինը եւ Ռասպուտինը արտայայտել են շատ ու շատ աւելին, քան ուրիշ այլ գրող արդի Ռուսաստանում: «Գաղանիքը» այդ գրողների բնական օտարածությունն է, մարդկանց ներաշխարհ թափանցելու արտակարգ կարողությունն է իրենց խղճին հատուտարիմ մնալու անխախտ հետեւողականութեան, այլ ոչ թէ դանազան հնարքների ու գործարքների մէջ է:

Այսպիսով, «գիւղ» ու «քաղաք» հասկացությունների նշանակությունը մշակութային ոլորտում պայմանաւորուած է նրանց արտայայտած իրականությունների յատկապէս տարբերութեամբ, այլ ոչ թէ նոյնութեամբ, որով եւ երաշխաւորում է մշակութային արժէքների թէ՛ ստեղծումը եւ թէ շրջանառությունը: Գիւղն ու քաղաքը միեւնոյն մարդկային կեցութեան ընթացքի սոսկ տարբեր ասպարէզներ են, օժանդակ արտայայտչական միջոցներ, որոնք օգնում են բացայայտելու մարդկային բազմաչերտ ներաշխարհն ու հնարաւոր վարքագծերի բազմազանությունը:

Լ. ՄԿՐՏՁԵԱՆ



1979Ի ՆՈՊԵՆԵԱՆ ԴԱՓՆԵԿԻՐԸ

Շուշանիան Ակադեմիան Նոպենեան գրական մրցանակը այս տարի տուա յոյն բանաստեղծ Յուխանուս Էլիթիսի: Էլիթիսու Երկրորդ յոյն գրական է, որուն տաղանդը կը նախապորձուի Սթեֆանյանի մէջ: Իրմէ առաջ, 1963ին, մրցանակը ստացաւ Ժորժ Ալֆրէրիս:

Շատ Երկար և պարագայական հարցազուգրութեան մը մէջ, Նոպենեան գրական մրցանակի գաղտնիգը այս մրցանակը կը յատկացնէ Էլիթիսին՝ «Իր բանաստեղծական ժառանգութեան ամբողջութեան համար, որ իր ներշնչումը կ'առնէ յունական ասանկութեանց այբբէն, արդի մարզան պայտար և ստեղծագործական արարքը սփռելով գրեց պայծառութեամբ և վճիռ իմացականութեամբ»:

Ահա տակի քանի մը հատուածներ վերսյուշուալ հարցազուգրութենէն.—

«Օտիսէտուս Էլիթիսի անունը յի է մարդուն եւ բանաստեղծութեան մասին եղած հետաքրքրական տեղեկութիւններով: Օտիսէտուս ծովագնաց է, հերոսը հովերական դիցազոյցութեան, անձնատուրում ազատութեան ծարաւով եւ անգուսայ յամառութեամբ, ձեռներէցութեան իր ուղիով է անկազ հետաքրքրութեամբ ի մասին այն բոլոր արկածախնայութիւններուն եւ զգայական փորձառութիւններուն. գորս կրնան յունական արշիպեղագոսն ու ծովը միայն քնծայել մարդու մը:

«Օտիսէտուս անունը ան ստացաւ իր ձեռնգրութեան: Անիկ կը վկայէ անցեալին կայուն գաղութարի մը եւ դիցաբանութեան եւ ինքնութեան խորանկ ասանկութիւններուն վերաբերող կայտերու մասին: Բանաստեղծին ընտանիքը եզեղական կղզիներու քնիկներէն են, իսկ ինք ձեռն կրէտի մէջ, քրքական լուծէն կղզիին ազատագրումէն քիչ առաջ:

«Էլիթիսը իբրև ծածկանուն քնտրած է ինքը, ապարեզէն ներս մուտք գործած առաջին օրերուն: Այդ անունը համալորութիւնն է բանաստեղծին տիրելի շատ մը ծանօթութիւններու: Եթէ կարելի է այսպէս ըսել՝ գորեղապէս խտացում տեսակ մը ներքին ձայնի հաստատում: Անոր բողիսցունց տարբեր պէտք է ոգեկոչեն յունական բառեր, Յունաստանի համար (Կլլաս), յոյս (Էլիթիսիս), ազատութիւն (Էլիթիսիս) եւ դիցաբանական կիներ, որ կ'անձնաորէ գեղեցկութիւնը, սեռային զգայականութիւնը եւ իրատացումը Հելէնի հրապոյրին: Էլիթիսի դիցաբա-

նական բանաստեղծութեան մէջ էբոսն ու Հերոսը շատ սերտ առընչութիւններ ունին իբարու հետ:

«Ծովը եւ կղզիները, ծաղիկներն ու կենդանակամ շշտարիք, ծովափնեայ ողորկ խեմարները, ծովային ձայները, փշտա կենդանիներու մըթիւն յայտնութիւնը, ծովային օդը եւ լոյսը, որ կը խաղայ կոհակներու մակերեսին... Անո՛նք են այն տարբեր, որոնք անդադար կը վերյայտնութիւն իր գործին մէջ, ինչպէս նաեւ արեւային կուրցնող լոյսը, որ կը խածնէ այդ տիեզերքը այնպիսի՝ լուսաորութեամբ մը, որ կը քափանցէ ամեն բանի մէջ՝ արգասաորելով ու մաքրագործելով միամամանակ:

«Էլիթիսի բանաստեղծութիւնը իր մէջ կը կրէ զգայնութիւնը եւ լուսաորութիւնը: Բայց, միւս կողմէ, այդ տիեզերքը կը կերպարանափոխուի եմբակայական արուեստի մը այլաբանական արդիականութեամբ: Ատիկա կը հանդիսանայ աշխարհի իրական յայտնութիւնը, որ միշտ ալ այնքան վեհա, այնքան ճիշդ ու այնքան հրաշալի չէ, բայց որ պէտք էր ա՛յդ ըլլար եւ կրնար ըլլալ»:

Օտիսէտուս Էլիթիսի ծնած է Կրեոէ, 1911ին, եւ իր ստղին բանաստեղծութիւնները հրատարակութեան տուած է Յունաստանի «Նոր գրականութիւն» հանդէսին մէջ, որ իր և Ալֆրէրիսի սոցիալիստական տակ, կարեւոր դեր մը խաղացած է յոյն բանաստեղծութեան վերափոխումին մէջ: Ան հրատարակած է նաեւ դիցաբանական աշխատութիւն մը՝ «Յոյն ժողովուրդէն անտարք մը» անունով եւ բանաստեղծական բազմաթիւ ժողովածուներ:

Յունաստանի մէջ, Էլիթիսի նոյնքան ժողովրդական բանաստեղծ մըն է, որուն Բիթոսը և Ալֆրէրիսը: Միջիս թեատրաբիս դաշուարած է «Ալթիոն Եթի» անուն իր պսամբ, ինչպէս նաեւ ժողովրդական յօրինումները:

Կ'սարի սոցիալ յարկարածին մը մէջ, Ալֆրէրի կեզրոնը: Ան նախընտրած է ժուժկալ կեանքը՝ իր ամբողջ ժամանակը բանաստեղծութեան նախընտրելու համար: Քիչ բարեկամներ կ'ընդունին, եւ աւելի հարգանքներն՝ թղթակցներ: Երբեք չէ պատկանած կազմակերպութեան մը: Ան խորապէս անկախ մտք մըն է:

Գիմարը տրուած բանաստեղծութիւնը ստած ենք «Էր Մոնտ»էն: Եղածը թարգմանութենէ մը կատարուած թարգմանութիւն ըլլալով հանդերձ, կը կարծենք, թէ հեռուը զազախար մը կու տայ Նոպենեան նոր զավիկներին ստեղծագործական ճիւղերուն մասին:

Ի Մ

Յ Ի Մ Ե Ր Ը...



Իմ հիմերս լեռներուն մէջ են
 եւ լեռներն ու ժողովուրդները զանոնք կը կրեն իրենց ուսին
 գագաթին կ'այրի յիշատակը
 անկէ՛գ մօրենի:

Յիշողութիւնը ժողովուրդիս, դուն կը կոչուիս Պինդոս եւ կը կոչուիս
 Աթոս

Ժամանակը կը պզտորի
 եւ կը կախէ օրերը գլխիվայր
 վար քափելով շառաչմամբ ոսկերստիքը խոնարհներու:
 Որո՞նք, ինչպէ՞ս եւ ե՞րբ մագլցեցան անդունդն ի վեր

Ո՞ր լեզունները, քանի՞ մարդով եւ ո՞վ էին:
 Երկինքին դէմքը կը շրջուի եւ թշնամիներս փախուստ կու տան:
 Յիշողութիւնը ժողովուրդիս, դուն կը կոչուիս Պինդոս եւ կը կոչուիս
 Աթոս

Միայն դուն կը վերանանչնաս մարդն իր կրունկէն
 դուն միայն կը խօսիս քարերու շեղբով:

Դուն ես որ կ'երկնցընես դէմքը սուրբերուն
 դուն ես որ դարաւոր ջուրերու ափին
 կը քաշկոտես գառկակա՛ն եղբւանին.


դուն կը հպիս մտքիս եւ գարունքի նորածինը կը սարսռա՛յ:

Ձեռքս՝ զոր դուն պատժեցիր կը ներմկի խաւարին մէջ.
 Կրկին ու կրկին դուն կը զանցես բոցը մատչելու համար շֆեղանքին:

Կրկին ու կրկին դուն կը զանցես շֆեղանքը
 մատչելու համար բարձրաբերձ գագաթներուն ձիւնափառ:

Բայց ինչո՞ւ լեռները: Ո՞վ եւ ինչո՞ւ լեռներուն վրայ:
 Իմ հիմերս լեռներուն մէջ են

եւ լեռներն ու ժողովուրդները զանոնք կը կրեն իրենց ուսին
 եւ գագաթին կ'այրի յիշատակը
 անկէ՛գ մօրենի:



ՏԱԽՏԱԿԷ ԽԱԶԸ

Այս տարուայ Մարտին, յոյն-կաթողիկէներու Այն Քըրպոյ վանքին մէջ, Էրբ Մարտիոս Ե. եւ իր Երկու օգնականները կարգ մը դարակներու դասուարումով կը գրողէին, իրենց աչքին կը զարնէ Յիսուսին տախտակեայ մէկ խաչելութիւնը, որուն խաչը նախապէս դահ պայսած էր Տըրքիկէ մը: Բանդակին ղեկեցիկութիւնը, խաչելային ղէմքին խօստու արտայայտութիւնը եւ ամբողջ մտքինէն ընդոտ աստուարանքի գրաստորումը, ինչպէս եւ այն պարագան, որ անոր ձեռքերը ղեկով վեր խաչուած են՝ կրօնականներու ուշադրութիւնը կը գրաւէ եւ պատճառ կ'ըլլայ, որ զայն Հոռոտ ուղարկեն գնահատման համար...:

Ըստ Վատիկանի տրուեալի մասնագէտներէն Փրոֆեսոր Օկլինիի, ցարդ կտատուած բոլոր քննութիւնները ցոյց կու տան, թէ պոքը կը պատկանի մեծ փորպէտ Միքէլ Անճելոյին, որ իրագործած է արձանը, Էրբ 18 տարեկան էր: Նման արձանիկ մը նուիրած է նաեւ Յարութեան վանքերէն մէկուն: Տախտակեայ խաչեայր անհետացած էր 1750ին եւ ցարդ անտրոշ կը մնար անոր ճակատագրի: Ամէն պարագայի, շատ ալ յոտակ չէ, թէ ինչպէս այս պոքը հասած է Այն Քըրպոյ: Միակ տրամաբանական մեկնարանութիւնը կը նկատուի այն, որ հաւանաբար Մարտիոս Գ. 1833ին Յարմոն կը պահուէր եւ Պապին եւ կոյսեր հետ ունեցած իր անձնական բարեկամութիւններուն ընդունով կրնայ նուէր ստացած ըլլալ այս արձանիկը:

Եթէ վերջնականապէս հաստատուի տախտակէ խաչելային վաւերականութիւնը՝ անիկա Լի-

բանանը ղիտի՛ ժող համաշխարհային կշիռ ունեցող տրուեալի նոր պանծով մը, որ նիւթապէս կը գնահատուի 2-7 միլիոն տոյսը:

ԲՌՆԱԿԱԼՆԵՐՆ ՌԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ

Մեք նախորդ թիւով, եւ տարբեր բաժինի մը մէջ ներկայացուցած էինք Վահան Քէրէկեանի Էրկու «Վարձարարչումները», նախ՝ Փաշականը (Իտալիա՛, «Մէկ նոցի Էս սրդ՝ Մէկ մարդու հոգւով») եւ այս սովետականը, այս վերջինին շարժարժրացած հարցաանձեան համեմար ի միասին:

Բնակարէ մը հրատարակու է անոր տակը ձեռնարկ մըստը նկատուած է սրբիճներու մաս եւ, որանց մէջ յատկանշական է Ֆրանսուցի բոնասանց՝ Լուի Արակոնի պարագան, բոնակարներու եւ բնակարութեան ամէնէն արիւնտ օրգաններան զովարանական տակը ձեռած ըլլալու փաստը, որ ցարք կը շարունակէ դարմանը պատճառէ Ֆրանսուցիներուն:

Ս նշելիքը թուակի «Ֆիկարո Մակագին»ի մէջ Ալէն ար Պրետու աչք եւ յարակից հարցերու մասին աստուարած է Էրկու Էրնոց գրութիւն մը, որմէ անձատուած են Հիթլերի «բարութիւնը» եւ Ստալինի «ըլլակ'ը» փաստարանոց հետեւալ պարբերութիւնները.—

1937ին, գրող Ալֆրան ար Շաթոպրիան հետեւեալ բառերով կը նկարագրէ Հիթլերը. «Իր մարմինը կը քրքրայ, գլխու իր շարժումը երիտասարդակամ է, ծածրակը՝ տախ... Ձիճկ յատկանշող զիճերէն մէկը իր անսահման բարութիւնն է: Այս՛, Հիթլեր բարի է: Անսահմանութիւն բարի»:

1940ին, «Լա Նուվել Գրիթիք»ի մէջ, Անարէ Վերմուէր րացայտակց էր «Վիլս սերք» (այս՛, վճիտ) ընկեր Ստալինին նկատումը. «Վիլս սերմը, այսինքն՝ սեր մը, որով մեծք կայարս ենք»: Թ'ըր է տարբերութիւնը այս երկու յայտարարութիւններուն մէջ:

Գծուար է Էրեւակայել, որ Ֆրանսական պատկերավիւոր յայտարարական մեծ ըրտաշանքով յաջորդական մէջ յայտարար յատկացրել, որինակ, Հիթլերեան մրցանակի գահինէկիք Ֆրանսուցի գրողի մը, որ շարք մը քնարական բոնաստեղծութիւններ ձեռած ըլլար Կեսթալինի: Այդ պատիւին արժանացողը սրբի մէկը չէ, եթէ ոչ Լուի Արակոն, Ստալինեան մրցանակի գահինէկիք, հեղինակ, ի միջի այլոց, Կեթելուին ձեռուած բոնաստեղծութիւններու: Այդ Արակոնին է, որ նուիրուած են յիշեալ պատկերավորումները, ա՛յն Արակոնին, որուն կը պարտինք սա հանդիսաւոր խոտուտը— «Ընկիք Ստալին, քեզի կը խոտուտամք յախտեանս քալել քու յոյսիդ մէջ: Քեզի կը խոտուտամք յունեալ ուրիշ նպատակ Եթէ ոչ այն որոտընդստ հետանկարները, գորս դուք յայտնակերպեցիք մարդկութեան, ք ընել ամէն ինչ, որ քեզմով բացուած նանուարեմէն վաղը ընթանայ ամէն ոք»:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ԱՏԱՑԱՆՔ

ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ, 1907–1919, ԽԱՐԹԵՐԳ, *Մարիա ձէյբըզըն, Պէյրութ, 1979, Գանիերէն ձեռագիր բնուրէն թարգմանեցին՝ Ներսէս Եպս. Բարտիկեան եւ Միհրան Սիմոնեան*

ԼԵՈՆՆԵՐ ՎԻՀԵՐՈՒ ՄԷՋ (բանաստեղծութիւններ), *Զարեհ Մէլրոնեան, Լոս Անճէլըս, 1978*

ԱՆԿԱՊ ԷՋԵՐ... (արձակ), *Ենոյք Լաչինեան, Փարիզ, 1979*

ԳԻՇԵՐՆԵՐ (բանաստեղծութիւններ), *Երուանդ Պարսումեան, Պէյրութ, 1979*

ԾԱԳԷ Ի ԾԱԳ (արձակ), *Երուանդ Պարսումեան, Պէյրութ, 1979*

ԸՆԿԵՐ ԳԵՐԱՍԻՄ ՆՈՐ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ (արձակ), *Հրանդ Գանգրունի, Պէյրութ, 1979*

ԼՈՒՍԱՐԹՈՒԹԻՒՆ (բանաստեղծութիւններ), *Ալմին, Թէհրան, 1978*

ԱՐԵՒԱՔԱՐ (բանաստեղծութիւններ), *Վարանդ, Թէհրան, 1978*

ՇԻՐԵՈՐՆ ՈՒ ՇԱՀԸ (պոեմ), *Վարանդ, Թէհրան, 1979*

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 50 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 27 ՏՈՂԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ 5 Լ. ՈՍԿԻ

باكين

مجلة شهرية ، أدبية وفنية علمية
مدير المسؤول
السيد ارتين كارنيك قزائجيان

•
PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

•
Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

•
ԽՄԲԱԳԻՐ
Գ. ՄՆԱԳԵԱՆ

Հեռաձայն՝ 296898